

ԲԱԳԻՆ *Pakine*

ՅՈՒՆՈՒԱՐ, ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ 2012, Ծ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1



◆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ◆ ԱՐՈՒԵՍ ◆ ԻՄԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ՓՈԽ ԽՄԲԱԳԻՐ
Սեդա Գրիգորեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուշ Թրուանց (Լիբանան)
Սարգիս Կիրակոսեան
(Լիբանան)
Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Շուշիկ Տասնապետեան
(Լիբանան)
Հրանդ Մարգարեան
(Միացեալ Նահանգներ)
Անետիս Հաճեան (Նիւ Եորք)
Արքմենիկ Նիկողոսեան
(Հայաստան)
Յարութիւն Պէրպլերեան
(Գանատա)
Յակոբ Տէր Ղուկասեան
(Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)

Էջադրում
Անի Փէիլիվանեան-Սարգիսեան


Հասցէ՝
Պուրձ Համուտ
Շաղգոյեան կեդրոն
Բ. յարկ
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Յրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղգոյեան կեդրոն,
Պուրձ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս՝ (01) 260329
Փոստարկղ՝
80-1096 Պ. Համուտ
E-mail:
imphamaz@inco.com.lb



Հրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան



ԲԱԳԻՆ

ՅՈՒՆՈՒԱՐ,
ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ 2012
Ծ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԽՕՍՔՈՎ ԵՒ ԳԻՐՈՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ,
ԱՅԴ ՏԵՆԴԸ ՈՒՆԵՅՈՂԻ ԵՒ ԸՆԹԵՐՅՈՂԻ ՀԵՏ - ԲԱԳԻՆ - 1

♦ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԼԵՐԵԱՆ - 3 Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ - 7 ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ - 9
ՔԵՄԱՂ ՊԱՇՇԱՐ - 11

♦ ԱՐԶԱԿ

ԱՆՎԵՐՋ ՎԵՐԱԴԱՐՋ - ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ - 12
ՍՐԲԱՋԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ - ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ - 22
ՇՈՂԻԿ ԴՈՒ ԳԵՌ ԵՐԱՋՈՒՄ ԵՍ - ՄԵՐԻ ՀԵՐՈՒՆԻ-ՍԱՐԳՍԵԱՆ - 27

♦ ԻՄԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՈՒԵՍԸ
19ԴԴ ԴԱՐՈՒՄ ԵՒ ԶԻՒՆԻՒՆ - ԹՈՎՄԱՍ ՊՕՂԱՍԵԱՆ - 32

♦ ՈԳԵԿՈՑՈՒՄ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋԻ ՀԵՏՔԵՐՈՎ - Յ. ՊԱԼԵԱՆ - 42

♦ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՔՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ. ԱՔՍՈՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ - ՍԱԳՕ ԱՐԵԱՆ - 56

♦ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԶԵՋԱՐԷ ՓԱՎԷՋԷ «ԱՊՐԵԼՈՒ ԱՐՀԵՍԸ» ԳԻՐՔԻՆ ՄԷՋ
ԿԸ ԽՕՍԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ - Յ. Պ. - 60
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ - ԶԵՋԱՐԷ ՓԱՎԷՋԷ - 61

♦ ԸՆԹԵՐՅՈՂԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՍԵԴԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՊՐԵԼՈՒ ԾԱՐԱԻ ՄԸ
ԵՒ ՀԱՂՈՐԴԵԼ-ՀԱՂՈՐԴՈՒԵԼՈՒ ՄԵԱՅՈՒՆ ԼԱՐՈՒՄ ՄԸ - Յ. Պ. - 65
«ՀԱՅՈՒՆՎԻ ՄԸ ՕՐԱԳՐԷՆ» ՀԱՏՈՐԻ
ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ - ԿԱՐՕ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ - 68

♦ ԱՆՀԵՏԱՅՈՂ ԴԷՄՔԵՐ

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ
ՅՕԴՈՒՄԾՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ - ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ - 69

♦ ՆԱՄԱԿԱՆԻ

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆԻ ԲԱԳԻՆԻ ՈՒՂՂՈՒՄՈ
ՆԱՄԱԿ-ՅՕԴՈՒՄԾՈՒՆ ԱՌԻԹՈՎ - ԲԱԳԻՆ - 72

♦ ԱՐՈՒԵՍ

ՀԵՌԱԿԱՅ ԶՐՈՅՅ ԷԴԻԿ ԲԵՐԴԵԱՆԻ ՀԵՏ
ՅԱԻ ՆԱՆԱՍԱՀՄԱՆՈՒՄՈՒ ԱՐՈՒԵՍԱԳԷՏԸ - ԲԱԳԻՆ - 73

♦ ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - 80

Կողքի նկար՝ «Աշուն»
Գործ՝ ԷԴԻԿ ԲԵՐԴԵԱՆԻ

ՀԱՅ ԽՕՍՔՈՎ ԵՒ ԳԻՐՈՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ, ԱՅԴ ՏԵՆԴԸ ՈՒՆԵՑՈՂԻ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏ

Հասարակ տեղիք է ըսել որ գրականությունը լեզուով կ'ըլլայ, ան լեզու է, որ խօսքով կ'առաջնորդուի, կը ձեւաւորէ հեղինակի աշխարհին վրայ եւ դէպի ընթերցող-ընկալող միւսը բացուող սեւեռումները, յոյզերը, երազները, զգացումները, տեսիլքը, որոնք, համագումար, կ'ըլլան գրականութիւն:

Լեզուին մէջ կը ծնի գրականութիւնը, առանց անոր ան միգամած մըն է, լուռ ու համր, անվաղորդայն աղմուկ: «Գեղեցիկ գրականութիւնը», - միշտ պէտք է յիշել ֆրանսական *Les Belles Lettres*-ը -, լեզու դարձող բառերու համանուագ է: Երբեմն Նարեկացի, Փօլ Վերլէն, Վահան Տէրեան եւ Միսաք Մեծարեան պէտք է կարդալ, բարձրաձայն, հասկնալու համար թէ ինչպէս անորոշ դէմքով բառային խմորը կը դառնայ բանաստեղծութիւն, գրականութիւն: Այս՝ բոլոր ժողովուրդներու պարագային:

Գեղարուեստական գրականութիւնը գրական լեզուով ինքզինք կ'իրականացնէ: Լեզուն պէտք է գիտնալ, զայն յարգել, անոր հանձարով հաղորդուիլ:

Մայրուղիները անգործածելի կը դառնան, երբ ձմրան ձիւնը փոսեր կը ստեղծէ, երբ ռմբահարումները զանոնք կը քանդեն: Այդպէս են նաեւ լեզուները: Գօսացած եւ նեխած լեզուով գրականութեան ոջիլի շուկայ կ'ունենանք (*marché aux puces, flea market*, պիթ պազարի): Այդքան:

Թէ լեզուէն անդին բնական է ունենալ շնորհ, տաղանդ կամ հանձար, այդ այլ խնդիր է, եւ անկասկած: Առանց մշակուած եւ հարուստ լեզուի, հանձարը կը մնայ վարկած մը: Կառատունէն դուրս չի գար:

Այս մտածումները կը թելադրուին հայերէնի հանդէպ մեր ունեցած վերաբերումէն: Վիրաւոր լեզուով ստեղծագործական պարին մէջ ինչպէ՞ս մտնել: Խօսքը կը մասնաւորուի Սփիւքի համար: Հայաստանի պարագան տարբեր է, հոն լեզուի հոլովոյթ մը տեղի ունեցած է, ուղղագրութեան փոփոխութեան կողքին, օտար բառերու վայրագ ներխուժումով: Կը կարծենք որ այդ բառերը հայացուած են, կամ պարզապէս հայերէն են, մինչդեռ կը նմանին կեղի, եթէ ինքնութեան եւ հարազատութեան աչքերուն սեւ մաշկ չէ իջած, նոյնիսկ եթէ տեղատուութեան ասպետները անոնց «քաղաքացիութիւն շնորհած են» տպուած ամէն կարգի թուղթերու վրայ:

Երբ արտաբերուող ֆրանսերէնը աղձատ է, ֆրանսացին կ'ըսէ, որ ենթական մանուկ խափշիկի լեզուով կը խօսի (*petit négre*): Խօսուող հայերէնը ամէն օր քիչ մը աւելի այդ հունով կ'ընթանայ: Դեռ երէկ, երբ ան կը գրուէր, այդպէս չէր, Զարդարեանի, Վարուժանի, Նարդունիի, Ծաւարշ Միսաքեանի, Մուշեղ Իշխանի լեզուն էր, մելգոնեանցիներու, ձեմարանականներու, դպրեվանեցիներու, շրջանակ մը, որ ամէն օր քիչ մը աւելի կը կծկուի: Ոմանք կ'ըսեն՝ անվերադարձ: Անվերադարձը արտաքին թշնամիի գործը չէ, այլ՝ իւրաքանչիւր հայու, ան ըլլայ «ամիրա», թէ շարքային, սաւանանման վկայականներու մէջ փաթըրւած, թէ օրապահիկի համար պայքարող:

Այս անկումի պատճառները բազմաթիւ են: Գործնապաշտները - ո՞վ այդպէս չէ, այդպէս չըլլալ մեղանշում է, որ կ'առաջնորդէ ընկերութեան լուսանցքի քաւարանը -, աճող անկարելորդութիւններու ցանկին վրայ արձանագրած են հայերէնը, որ բախտաւոր պարագային շաբաթավերջի զբաղում է կամ ազգագրական բեմադրութիւն:

Փրթի նեկր հայերէնը անհանգստութիւն չի պատճառեր: Այնքան վարժուեցանք, որ չենք անդրադառնար անգամ:

Որակաւոր հայերէնը հարկ է վերականգնել նաեւ ժողովուրդին մօտ, որպէսզի ընթերցողը վերածնի, որպէսզի գրականութիւնը ապրի: Փիփլ ըլլալու համար որակը պէտք չէ մեռցնել:

Չեղած ընթերցողին հաճելի ըլլալու համար հայ գրողը պիտի շարունակէ լեզուի որակի փնտռտուքը, ընթերցումով, ի հարկին դիմելով բառարանի օգնութեան:

Կրկնե՛լ, որ բառը իմաստ կը փոխադրէ եւ բանաստեղծին հետ կ'երգէ, եթէ բանաստեղծը բաղաձայն չէ:

Տեղ մը արձանագրենք. առանց մշակուած եւ հարուստ լեզուի, հանձարը կը մնայ վարկած մը: Կառատունէն դուրս չի գար:

Կը դառնանք «ծագումով հայեր», երբ հայերէնը եւ հայ գրականութիւնը կը դադրին մեր անեղծ պատկերը մեզի վերադարձնող հայելի ըլլալէ:

Գրական յանդգնութիւնը կ'անցնի լեզուի բովէն:

Մեր պարագային՝ հայերէնի:

Զոյգը՝ ազգային վերապրումի եւ շարունակութիւն ըլլալու պատուանդան:

Այլապէս օր մը կը կրկնենք, Մեծն Քորնէյի հերոսին հետեւութեամբ, որ «կռիւր վերջ գտաւ կռուող մնացած չըլլալով», իսկ ձառերն ալ կ'ունենան փուշիկի ձակատագիր:

ԹՈՒՄԱՆԵԱՆ ՇԱՌԻՐՄԱ

Թէ՛ ի՞նչ կապ ունէր երկրի հարազատ մեծ բանաստեղծը
շաուրմային հետ՝
անհասկնալի կամ անլուծելի
հանելուկ մնաց:
Աբովեանն ի վար, Թումանեանն ի վեր,
խառն ապրումներով, ցնցումէն ելած,
քիչ մը շուարած,
քիչ մը շփոթած,
շուրջը պատահող անցուդարձերը
հասկնալ փորձող
ամբոխը հաշտուած իր կացութեան հետ
լուռ կ'երթենէկէր:

Չոր տաքը արդէն
գիրկը առած էր
քաղաքը քրտնող:
Ուրարտական արքաները
կը ծխէին Կարմիր բլուրի իրենց բարձունքին,
իսկ վարը արդէն ամէն թաղամաս
իր արքան ունէր կամ արքայիկը...

Սակայն դուն չէի՞ր,
Որ լուռ բարձրացար
անմահ Զարեհի տուն թանգարանի աստիճաններէն,
կեցար սեմին իր ննջասենեակին,
դիտեցիր նեղ անկողինը, գրադարանը
եւ պուտտայի արձանիկը:
Վերյիշեցիր անձկութիւնը
դրսեւորուած այն տաղերուն,
որոնք միմիայն օրագրութեան պէս
ստեղծագործման թուականը կը կրէին,
դեռ «Դոֆին նահրական»ը, «Երկու սոնետ»ը հրաշալի
կամ «Նաւզիկէ»ն , «Լերան աղօթքը»,
եւ խումացած, փձացող
ձեռագիրները հողին տակ...
Հողը ոտքիս տակ կը դղրդար կրկին -

ուրուականը Չարենցի,
 եւ ապա միւս սիրելի ուրուականը՝
 Բակունցի,
 որ մղեց քեզ
 բարձրանալու մինչեւ Գորիս,
 շատ աւելի համեստ
 տուն թանգարանը Մթնաձորի լոյս քուրմին:
 Նալբանդեանէն չարչարանքի,
 խողխողումի ձայներ կու գային,
 լրտեսող աչքեր դեռ կը տեսնէիր,
 արիւնոտ մատներ,
 այս անհերթեթ կացութեան մէջ,
 մեզ սիրելի, հակասական քաղաքին մէջ -
 կարծես տեղ մը դահիձները
 ոսկրոտ, կէս հում խորոված կը կրծէին,
 որմէ արիւն կը կաթկթէր
 եւ կը խնդային...

Արովեանը խաչաձեւող մէկ խաչմերուկին
 Գտած էին այն մատուռը,
 որ օրերուն ստալինեան,
 երբ կը քանդէին եկեղեցիներ
 մէկը գլխի ինկած էր,
 թէ այս հին է, հնութիւն է,
 եւ փրկած էր այս բաժինը:
 Շուրջի շէնքերուն մէջ կորսուած
 մատուռն ահա դուրս կու գար.
 Իսկ հիմա ո՞վ պիտի փրկէր
 ինչ որ քաղաքին հարազատն էր,
 իւրայատուկը, զայն ձերբազատէր
 գռեհկացնող կամ զայն աղձատող տգեղ տարրերէն,
 որոնք շատ յաճախ մանրուք շահերէ
 ծնունդ կ'առնէին:

Իսկ քիչ անդին
 Ժխորը եւ իրարանցումը,
 որ կը լսես ու կը տեսնես
 քեզի ծանօթ Արեւելքի քաղաքները կը յիշեցնէ՝
 մարդոց վէճերով,
 նոյնիսկ՝ հազուաժրով,
 դեռ կը դիտես ծեր կիները,
 որոնք շէնքերու մուտքերու եզրին՝
 վարունգ, լոլիկ, դեղձ կամ կեռաս կը ծախեն:

Երթուղայիններուն մատած անձկոտ դէմքեր
կարծես կը նային անորոշին,
իսկ շարժավարներ
անորոշ հայերէնով մը
իրարու հետ կը վիճաբանին
կամ կը հայհոյեն:

Դուն աւելի կը փնտռէիր միւս հայրենիքը,
որ կազմուած էր հին զրոյցներէն
կամ պատմութենէն
մտապատկերն էր ինչ որ մաքրուած ուրիշ աշխարհի,
որը հիմա, բնականաբար,
հաշտուելու էր
առարկայական այս աշխարհին հետ:

Մոզայիքին մէջ այս զարմանազան
կը փորձես դիտել,
տեսնել, հասկնալ ի՞նչ կը կատարուի:
Հրապարակին շուրջ Օփերայի,
ձաշարաններու լոյսն ու ժխորը
կարծես կը ծածկեն
ինչ որ կը մնայ տուֆէ քաղաքի մութ աղիքներուն:
Արտացոլացող ցուցափեղկերու
պատերու ետին՝
ծածկուած կը մնան
առօրեայի մութ տազնապներ:
Երկու թաղ անդին ուրիշ աշխարհ է
- փլփլող պատեր -
խորունկ անձկութեամբ դիտող նայուածքներ
կը խուզարկեն կորսուող հետքերը
իրենց հարազատ աշխարհին ծանօթ:

Ահա մատած ես «Արթարիձ»,
Դէմդ մատած է քառասունի շուրջ բանաստեղծուհին,
որը երիտասարդ ինչ որ խմբակի
անդամ կը սեպուի:
Բոլոր փորձերդ
հետը խօսելու ժամանակակից քերթողութենէն
ի դերեւ կ'ելլեն:
Իսկ ան անդադար, կիրքով կը ձառէ
քաղաքական կացութենէն,
բանաստեղծութիւն կոչուածը
այս օրերուն նկատելով երկրորդական:

Կ'ապշի նոյնիսկ
 թէ մարդիկ այլուր
 տարակարծիք կրնան ըլլալ,
 բայց զիրար յարգել...
 Յամենայնդէպս
 գրականութեան մէջ իր ապագան ամրագրուած է
 Ֆրանսա տպուած հայ ժամանակակից բանաստեղծութեան
 ծաղկաքաղին մէջ,
 ապահովագրուած
 Վ. Գրիգորեանի եւ Պ. Գրիգորի կողմէ,
 վնաս չունի, նոյնիսկ
 եթէ հոն կան ժամանակակից ... մեռած գրողներ,
 կամ բանաստեղծներ, որոնք գիրք չունին:
 Սակայն ինչո՞ւ զարմանալ,
 այս կնոջ հոս ցուցաբերած
 քաղաքական խորունկ կիրքին,
 երբ այսպէս կոչուած՝ շատ մը գրողներ,
 լքած կոչում, գիր ու երկնում,
 այս օրերուն վերածուած են
 երեսփոխանի կամ նախարարի,
 կամ առնուազն՝ կը ձգտին այնտեղ...
 Իսկ Հիւսիսային նոր պողոտային
 նստած կամ կայնած ցուցարարները
 ստորագրութիւն դեռ կը հաւաքեն
 եւ կը խօսին արդարութենէ
 ... մինչեւ հասնին իշխանութեան:
 Հոս, է՛հ, ինչքա՞ն շուտ
 դերեր կը շրջին,-
 զոհը դահիճի կրնայ վերածուիլ,
 դահիճը՝ զոհի,
 սակայն անկիւն մը, բարեբախտաբար,
 արդարութեան մասին խօսող կայ...

Յամենայնդէպս, այս անհեթեթ կացութեան մէջ,
 մէկ-մէկ բանական բաշխումներու կը հանդիպիք,
 զորօրինակ՝
 Թումանեանը արդարօրէն
 վերապահուած է ուսանողներուն,
 իսկ շաուրման, քոլային հետ՝
 այդ հաստավիզ, «ազիզ» տղոց...

Մոնթրէալ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

Ոչ քար է ան
Ոչ տառ է
Ոչ ալ սեւ ու սպիտակ
Օրերու պէս հաշմուած
Ամուլ ու լուռ կաղապար է

Ծուխ է
Յուշ է
Կիսակործան տաճարի
Բռնաբարուած աղօթք է

Ոչ խաղ է ան
Ոչ դաւ է
Կամքերէ ներս ընդարձակուող
Նոր փոս է ան ու նոր դար է

Հեք է շիկացած
Ջարհուրած կնոջ

Յերեկին մէջ գիշեր շաղող
Կաղամար է
Մուգ - վտարանդի

Մարդերու դէմ պայքարի կոչ
Նոր թոյներով բորբոքուն ոխ
Դեռ չաւարտած խուլ մարտ է

Անդարման աւեր
Եղե՛մ կորուսեալ

Տիեզերքի սիրտը ծակող
Մեղաւոր ձիչ է ամօթի
Այալի

Կնանման տղամարդո՜ւ

Թթուածին ու սունկ
Ա՛յլ մոլորակի

Եոք է
Հաշիշ - քնար է
Լրջագոյն պահն է մարգարէութեան

Լաց է
Խաչ է
Սրբապատկեր ու վաւաշոտ մանչ է

Ժամանակի մահը գոժող
Կոճակէ հնչիւն ու գաղափար է

Բառախաղ է
Թել - կախաղան է
Հին պատերազմի նոր խրամատ է

Յոյս է
Լոյս է
Նկարէն յոյզեր
Ու անթաքոյց սեռայնութիւն է

Ահագանգ է
Մարտակոչ է
Երջանկութիւն հծծող սարսուռ
Ու սարսռագին մտածո՜ւմ է

Մետաքսէ սուր է
Մոխրոտած կոյս է
Խանդ է մանկունակ
Արութեան կոչնակ

Աւարտին վազող
Վերջին սկիզբն է
Մրցանքի մեծ ախոյեան

Պարզագոյն հրաժեշտ

Պայթիւն անաղմուկ

Պարտասած Երկիր

ՀԱՄ (Ա) ԿԱՐԳ (ԻՉ)

2 Նոյեմբեր, 2011
Պէյրութ

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԷՆ ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ

Ծնած չէիր դուն տակաւին
Օրհան Փամուք
Երբ հայ մը վեհ
Փարիզի մէջ
Սիրահարած Լիտիային
Գովքը կ'ընէր տիեզերքին ու լոյսին
Որ լեցուած էր հոգիին մէջ հայերուն
Դաժան դաժան քաղաքներու մէջ օտար
Աշխարհի չորս ծագերուն...

Հանդարտութիւն որոնելու ընթացքով
Շուշանեանը իր բաբախուն սրտին զարկով
Մակոյկի մը տաշտին կռթնած
Ներքին ձայնին խոյանքը շօշափելու երազով
Եւ դէմ առ դէմ կեանքի դժուար եզրերուն
Պղտոր ջուրի մէջ նկատեց
Պայծառ դէմքը ու դէմքերը
Սիրածներուն
Որոնք ինկան ձամբու կէսին
Տէր Զօրի մէջ
Երբ տակաւին ծնած չէր
Շողը այն բոքը արեւուն
Որ ներշնչեց Օրհան Փամուքը
Հասնելու սահմանն անսահմանութեան
Վիթխարի ու մեծ գրականութեան...

Փարիզ Փարիզ
 Օրուման լոյսը աչքերուն մէջ
 Եւ տառապած մեր մայրերուն
 Տեսականը հոգիին մէջ
 Շուշանեանը որբ
 Բայց հպարտ
 Շարունակեց ապրիլ ապրիլ
 Զգալ ու մտածել
 Ստեղծելով այն ամբողջը
 - Յիշատակներ
 Հին ցաւերու նոր նոր վերքեր
 Անհայրենիք ու անպաշտպան -
 Որ կտակեց սերունդին մեր
 Մինչեւ Սփիւռքի խուլ անկիւններ...

Սերունդը մեր
 Որ չմոռնայ յար յախտեան
 Լիտիայի մը
 Եւ կամ
 Լիտիաներու կուրծքին դիմաց
 Հայկեան հողի
 Հայրենիքին շլացնող խունկն ու բոյրը...

Շուշանեանը բանաստեղծ էր
 Գեղեցկութեան հուրով շաղուած հոգի մը մեծ
 Եւ բառերու եւ բառերու եւ բառերու
 Բայց չհասաւ նուազական մրցանակին
 Իսկ դուն
 Իսկ դուն
 Փամուք Օրհան
 Հասար
 Հասար...

Փետրուար, 2012
 Պէյրութ

ՔԵՄԱԼ ՊԱՇՇԱՐ

ՀԱՄՇԻՆԱՀԱՅ ՔԵՄԱԼ ՊԱՇԱՐԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ՝
ԶԳԱԼՈՒ ԵՒ ՄՏԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏ ՄԸ

Բագինի հեռաքնակ խմբագիր Անտիս Հաճեան, Նիւ Եորքէն, երկտողով մը կ'ըսէ. «Միշտ տաղանդաւոր երիտասարդներու փնտռտուքի մէջ եմ: Ամենաբեղուն աղբիւրը գտած եմ սակայն թուրքիաքնակ համշէնահայերու մէջ շատ մը երիտասարդներ բանաստեղծութիւն, ոտանաւորներ եւ խաղիկներ կը գրեն Համշէնի հայերէնով: Առկից կը դրկեմ նմոյշ մը, համշէնահայերէնով եւ կից թարգմանութեամբ, պոլսաքնակ համշէնահայ երիտասարդի մը բանաստեղծութենէն: Թերեւս նորութիւն կ'ըլլայ»:

ՀԻՄԻ ՈՒՐՏԱՊՂ ԵՍ ՕՐՂԻ

Շատ հազայի ես քեզի,
դուն հազաերթայ չիգիտիմքի,
հիմի որտա՞ղ ես օրդի, ո՛ւմ թելինու,
ո՛ւմ եաթղի,
քանի տայի հազայի գիտեսթայ,
դեռ ալի հազկենիմ:
մոլիյէ չիկայիմ քեզիկի:
գիշէէ պարկելէ զօէէ միտքես ես,
եմմէն տաղ դուն կօս,
նոյիդուսու փութայի դուն անտաղ ես,
արթուք եզս ինչիք ուտէ չիկայիմ,
պարկէ չի կայիմ,
դէքեզս ուտողում,
դուն ինծիի դամնեցար, օրդի:

ՀԻՄԱ Ո՞Ր ԵՍ, ՈՐԴԻ*

Շա՛տ սիրեցի ես քեզ,
չեմ գիտեր, թէ դուն զիս սիրեցի՞ր,
հիմա ո՞ւր ես որդի, որո՞ւն թելն ես,
որո՞ւն անկողինն ես,
քանի տարի սիրեցի քեզ, գիտե՞ս,
եւ տակաւին կը սիրեմ:
չեմ կրնար մոռնալ քեզ:
գիշերը երբ կը պառկիմ, միշտ միտքս ես,
ամէն տեղ դուն կաս,
ուր որ նայիմ, դուն հոն ես,
այլեւս ուտել չեմ կրնար,
պառկիլ չեմ կրնար,
խելքս կ'ուտեմ,
դուն ինծի համար վերջացած ես, որդի:

* (Թարգմանութիւն՝ Անտիս Հաճեանի, Մինէ Ուձունձույի օգնութեամբ)

ՄԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱՆՎԵՐՋ ՎԵՐԱԴԱՐՁ

Հայեացքը սահեցաւ իրմէ երկու քայլ անդին կանգնած տղամարդուն բիբերուն խորը: Մարմինը սարսուռաց: Ակնթարթի մը մէջ արթնցան նոր մտահոգութիւններ, որոնք զինք պաշարեցին եւ իր նոր բացուած օրը ծանրաբեռնեցին դժնետեսիլ մարտահրաւէրներով: Դարձեալ ինքը ըլլալու է, մտմտաց պահ մը, սոսկաց անոր բռնակալ ներկայութենէն, որոշեց միանգամընդմիջտ վռնտել այս անկոչ հիւրը, հրաժարիլ անոր նոյնիսկ համակրելի հրաւէրներէն, քակել կղթկապերը իր սրունքներուն, թօթուել բաշերը եւ անհոգ ու աննպատակ թափառիլ Ուր բերդաքաղաքի պատմական բերդին փէշերէն երկարող կիսամութ ու նեխած թաղերուն խառնաբնդոր եռուզեռին քայլերով:

Հաւանաբար ճանչնար մսավաճառներու, համեմավաճառներու, օճառավաճառներու, կերպասավաճառներու, բրդավաճառներու, երկաթագործներու, համետագործներու, ոսկերիչներու եւ զանազան ու զարմանազան շուկաներու բարկ հոտերուն գաղտնիքները, թերեւս բարեկամութիւն հաստատէր այդ ծուռ ու նեղ փողոցներուն հնամաշ սալաքարերուն հետ, որսար անոնց շուրթերուն մարած ոտնաձայները վերջին անցորդներուն, պահ մը դանդաղէր Մեծ Բաղնիքին դրան առջեւ եւ, անտարակոյս, մտնէր ներս:

Տարիներէ ի վեր այս կողմերը չէր այցելած եւ մարմինը սաստիկ կարօտցած էր: Մեծ Բաղնիքը իւրայատուկ գրաւչութիւն մը ունէր, դարերէ եկող աւանդութեան մը համը ու հոտը ունէր եւ հակառակ քրտինք ու օճառ հոտող անոր անշնչելի մթնոլորտին եւ անտանելի աղմուկին, ինք բացառիկ հաճոյք մը կ'ապրէր, երբ պորտաքարի եզրին երկար ու երկար երկնալէ ետք, քրտնաթոր ու թմրած մարմինը կը յանձնէր բաղնեպանին ուղտի մագէ հիւսուած ձեռնոցին հարուածներուն եւ կ'ըմբոշխնէր վայելքը լոգանքին:

Օ՛ր այդ երանական ժամերը: Կարծր ու թաւ ձեռնոցին ճնշումներուն տակ՝ միսերուն մէջ ծուարած կեղտերն ու ցաւերը, կոտորուածքներն ու մեռած բջիջները ոլոր-ոլոր դուրս կու գային մորթին ծակտիկներէն, յետոյ տաք ջուրը կը վազէր իրանն ի վար, կը բարձրանար գոլորշին, օճառը կը փրփրէր, գուբէն դուրս յորդող ջուրն ու չոգին դարձեալ կը խայտային միսերուն վրայ, աղօտ մառախուղը ա՛լ աւելի կը թանձրանար, աչքերէն կը կորսուէին գմբէթ ու լուսամուտ, գլխոցը կ'եռեւեփէր բաղնիքին չորս ծագերէն, ջուրը կը պարէր մարմարեայ սալայատակին վրայ, քաղցրաբոյր կաւն ու օղին կ'արթննային նարինջին հետ, զինք արտասովոր երանութեամբ մը կ'ողողէին եւ կարծես վերստին կը ծնէր:

Կը պատահէր նոյնիսկ, որ երբեմն ջրահարսեր յայտնուէին աչքերուն, կամ՝ հարսնեւոր ջուրերէն ծագող բոցավառ ծիծերով կաթնասպիտակ հուրի-փերիներ, որոնց սեւսաթ մագերէն երկարող թաւիչ գիշերները հեշտաբոյր խոստումներ կ'անձրեւէին երակներուն մէջ եւ արիւնը կը խայտար: Բայց հագիւ յայտնուած՝ ասուպի մը պէս կ'աներեւութանային եւ ինք դարձեալ կը թաղուէր լոգանքին յաջորդած կիսաթմբի արբեցումին մէջ:

Չէր դժգոհեր: Աշխարհն ու իր կեղտերը բաղնիքին մէջ ձգելով՝ դանդաղ քայլերով դէպի ներքնադուռը կ'ուղղուէր, կ'անցնէր սրահին կեղրոնը գրաւած փոքր աւազանին կողքէն, ակնարկ մը կը նետէր չորսդին եւ, իրեն հրամցուած ցամքոցներուն մէջ փաթթուելէ ետք, գերեջանիկ սուլթանի մը պէս կ'ընկողմանէր առաջարկուած թախտին վրայ: Յետոյ կլկլակ ու թէյ կը պատուիրէր մատուցողին, ինքզինք կը յանձնէր պարսկական ընտիր ծխախոտին պարգեւած սրբազան ծուլութեան եւ կը վայելէր լոգանքին ամբողջական հաճոյքը:

Այս անգամ ալ չէր սխալած: Իրեն համար յստակ էր, որ բաղնիքը նախապայման է՝ Ուր բերդաքաղաքն ու անոր բնակիչները ամբողջականօրէն ճանչնալու համար: Անկէ ետք կու գային ե՛ւ անոր տարաշխարհիկ շուկաները, ե՛ւ անուն ու նկարագիր փոխած հսկայ աղօթատեղին, ե՛ւ սպիտակ քարէ կառուցուած նրբակերտ կիսապարանքները, եւ նո՛յնիսկ՝ քաղաքին շուրջ չորս հազարամեայ պատմութիւնը ամփոփած բերդը: Թերեւս այս իսկ պատճառով, տարագրութեան սրտածմլիկ հանգրուաններէն հագիւ այս ամբողջ ոտք նետած, մեծ հայրը տուն-տեղ եղած էր Մեծ Բաղնիքէն քանի մը քայլ անդին գտնուող անշուք բակի մը սենեակներէն մէկուն մէջ, համերկրացի երկու ազգականներու հարեւանութեամբ:

Սակայն՝ առժամաբար:

Յետոյ, երբ գործերը կամաց-կամաց յաջող ընթացած էին, փոխադրուած էր Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիէն ոչ շատ հեռու, աւելի ընդարձակ բակով, յասմիկի եւ վարդենիներու քաղցրահիւս բոյրերուն ու չրջակայ եկեղեցիներու առաւօտեան դողանջներուն հետ արթնցող լուսառատ մենատուն մը, բայց միշտ մերժած էր զայն կամ որեւէ այլ տուն մը գնելու կնոջ թախանձագին առաջարկները, որովհետեւ ան ինքզինք միշտ հիւր էր սեպած եւ տիւ ու գիշեր երազելով երազած յիշողութեան ու կարօտի մշուշներուն մէջ քնացող-արթնցող իր պապենական հեռաւոր օջախը:

Վերադա՛րձը: Մա՛նաւանդ վերադարձը:

Երազած էր երկար տարիներ: Երազած էին տոհմով ու ցեղով, բայց Ձորեպան Սարգիսին ասկեաքներու կողմէ բռնագրաւուած ջորիները չէին վերադարձած, շարունակած էին մնալ հետզհետէ գունաթափող թուղթի կտորին վրայ, եւ տխուր օր մը՝ Զատիկուան նախօրեակին, քնաթաթախ աչքերը դեռ հագիւ չփած՝ կարօտահար սիրտը խանութի ճամբուն վրայ անակնկալօրէն ճաթած էր:

Հօրը կենսագրութիւնը տարբեր չէր եղած: Ան նաեւ մերժած էր յարկաբաժին մը գնելու իր կնոջ անվերջ պաղատանքները եւ նախընտրած՝ ապրիլ վարձակալի վիճակով, մա՛նաւանդ՝ ի՞նչ ընել երկինքէն առկա չէնքի մը կատարը գրաւած թէկուզ արեւոտ եւ օդասուն բնակարանը, որուն հիմերը իրը չէին, հողը օտարինն էր, իսկ պատերն ու պատուհանները անցեալ եւ պատմութիւն չունէին: Զունէին յիշողութիւն եւ զուրկ էին երազէ...

Եւ ան նաեւ, ճիշդ ու ճիշդ իր հօրը պէս, վաթսուն մէկ տարիքը չբոլորած, սրտէն խոցուած՝ տապալած էր անակնկալօրէն, զաւակ պսակելու եւ թոռ ու ծոռ տեսնելու բախտին դեռ չարժանացած:

Հիմա ինք նաեւ վաթսունմէկ տարեկան էր, սիրտը քանի մը անգամ փորձած էր դաւաճանել իրեն, փրկուած էր հրաշքով, բայց չէր հրաժարած ո՛չ իր ազատ-անկաշկանդ ապրելակերպէն եւ ոչ ալ մեծ հօրը խենթ երազէն: Հաւանաբար մահուան մահիճը պէտք է գամուէր, հասկնալու համար, որ, իր կարգին, կը գտնուի կեանքի անդունդի եզրին եւ ոչ թէ ցածլիկ ու հնամաշ դուռով այս անշուք տան առջեւ, որ օր մը օրանց իրը չէր եղած, որուն սեմէն ներս երբեք ոտք չէր կոխած, եթէ նոյնիսկ անիկա կը գտնուէր Մեծ Բաղնիքէն քանի մը քայլ անդին եւ տակաւին մեծ հօր ու հարազատներուն հոտերը կը փսփսար:

Մեծ Բաղնիքը ուրիշ էր: Անիկա առնուազն իր վաղ երիտասարդութեան անբաժան մէկ մասն էր, յուշ եւ յիշատակ էր եւ զինք իր անցեալին կը կապէր: Ժամանակին դէմ ըմբոստանալը յիմարութիւն էր, պարտութիւնը՝ անխուսափելի, իսկ վերադարձը՝ նո՛յնքան վտանգաւոր:

Բայց վերադարձած էր, որովհետեւ մաքուր էր արիւնը եւ իր բախտը ի՛նք պէտք է վճռէր: Ասիկա շատ լաւ գիտէր՝ իր անունին պէս, եւ ինք արդէն վաղուց վճռած էր:

Հայեացքը հալեցաւ դիմացը յամառող անկոչ հիւրին բիբերուն մէջ: Բայց այս անգամ չսոսկաց, պատասխանեց անկումին մարտահրաւէրներուն, վահանուեցաւ իր պապերուն արկածախնդիր յանդգնութեամբ, սրեց սմբակները եօթը հորիզոն անդիէն զինք կանչող աստանդական ջորիներուն եւ իր ջլապինդ մկաններու շարժումին լեզու եւ կրակ տուաւ: Այն աստիճան, որ պահ մը իրեն թուեցաւ, թէ Ուր բերդաքաղաքն է իր իսկական դէմքը, իսկ անոր կատղած փողոցները՝ նոյնինքն իր սրունքներուն դուրս ցցուած երակները:

Երակներուն մէջ, հիմա արիւնը կը վազէր արտասովոր խանդավառութեամբ,

խակ փողոցներուն երկայնքն ի վեր կեանքը ելից գիրքին էջերն է, որ կը դարձնէր: Եւ երթը կ'երկարէր առանց կանգ առնելու: Մանուկներ կը գլորէին գնդակներու պէս, կը վազէին իրարու ետեւէ՝ բոլոր ուղղութիւններով: Կանչերն ու հողմերը կ'անցնէին անոնց գլուխներուն վրայէն, կը փորձէին կասեցնել բոպիկ ու կիսամերկ լաճերուն վազվզուքը, փտանգին ահագանգերը հնչեցնել, որպէսզի պահ մը կանգ առնեն եւ ինք զգայ ամէն քայլափոխի յայտնուող-աներեւութացող մահուան մանգաղին անգուլթ զօրութիւնը: Եւ ամէն անգամ երբ կը մօտենար կեանքի բաւիղին հանգոյցները քանդած այդ անգիտակից հերոսներուն, անոնց լայնաբաց աչքերէն շարժումին հրաթեւ փոթորիկները կը քաղէր: Եւ մանուկները վերստին կը ծնէին, կը ծնէին իր աչքերը ահաբեկած մահուան կրակին արգանդէն եւ իրենց դէմքերը կը զարդարէին տեսակ-տեսակ պատմութիւններով, որոնք ո՛չ մէկ նորութիւն ունէին, գրքունակ էին, զգուելիօրէն ձանձրացուցիչ մանրամասնութիւններ եւ քնարավէպին ամբողջացումը ա՛լ աւելի կը բարդացնէին: Սակայն իր պաշտօնը այս անուղղաներուն վստահելով հեքիաթասացը սխալած չէր, որովհետեւ անոնք հրաշապատումին հազար ու մէկ հեքիաթներուն վերամշակուած տարբերակները կ'ապրէին եւ բերդաքաղաքը կը գեղեցկացնէին շարժումին կենսունակ ջերմութեամբ:

Մօտեցաւ եւ տեղ գրաւեց անոնց միջեւ: Ուզեց ըլլալ կիզակէտը շարժում առ շարժում քակուող մանկութեան բոլորակին եւ այս ցանկութիւնը զինք առողջարար թարմութեամբ մը մտրակեց: Յետոյ ձեռքը երկարեց մանուկներուն աչքերէն դուրս ոստոստող իր յիշողութեան խարոյկներուն, որոնք պաշարեցին զինք եւ յուշեցին ոգիներով բնակուած անել փողոցներ, մութ ու կիսախարխուլ տուններուն շուրջ հիւսուող սեւ ու զգայացունց պատմութիւններուն մահադաժան վախճանները խաւարեցին եւ բարձրացուցին պարիսպը բերդաքաղաքին՝ իր երեւակայութեան մէջ բացուող յոյսի աղօտ հորիզոնին փոխարէն:

Հիմա արդէն կը շնչէր դժուար՝ ուժասպառ ջորիի մը պէս, եւ կը ջանար կազմել վախճանը անաւարտ հեքիաթին, եթէ նոյնիսկ իր մանկութիւնը վրայ պիտի տար: Կորսնցնելիք ա՛լ ոչինչ ունէր, այնքան ատեն որ վերագտած էր ինքզինք եւ ասիկա աշխարհ կ'արժէր: Մանաւանդ որ մանուկներուն աչքերը բազմերանգ գրաւչութեամբ մը կը շողային եւ քաղաքին ցաւերը իրենց մէջ կ'ամփոփէին:

Քաղաքը կ'եռար: Հոտերը, որ քաղաքաբնակ կիներուն բերաններէն դուրս կու գային, երկունքի ազդանշաններ կը կարգային: Յետոյ ինքզինք գտաւ ծովափին, մօտեցաւ ծովեզրի ջուրերուն մէջ գուարճացող մանուկներուն եւ անոնց հետ սկսաւ սերտել քերականը ալեակներուն: Զուրը տաք էր, կիզիչ արեւը՝ ծայր աստիճան անտանելի եւ աչքերը սաստիկ կ'այրէին:

Երբ ջուրէն դուրս եկաւ, ըսաւ տղամարդուն, որ լողալը շատ հաճելի է, մանաւանդ հրեշտակադէմ մանուկներուն հետ, որոնք կապոյտ ջուրերուն մէջ կորսուած քաղցր յիշատակներ արթնցուցած էին, բայց հագիւ վայրկեան մը ուրախացած՝ անծանօթ կնոջ հետ իր առաջին հանդիպումը յիշած էր, տարուած՝ իրերայաջորդ պատկերներուն տարափէն եւ լեցուած՝ սոսկումին վայրիվերումներով: Ինչո՞ւ համար զինք դարձեալ կը հալածէր, արդեօք կապոյտ հեշտանքին սպառնալիքները

հանդիսադրել է չէ՞ր ձանձրացած, մինչեւ ե՞րբ զինք պիտի քայքայէր իր իսկ մղձալանջներուն մէջ եւ փոթորկէր մռայլ գիշերները իր պարտութիւններուն:

Փաստօրէն, անցեալը չէր անցած, կը շարունակէր իր խստապահանջ ներկայութիւնը, օրը նոր՝ նոր արգելքներ ու պահանջներ կը բարձրացնէր, կը սպառնար, կը յարձակէր իր վրայ, իսկ ինք անդադար տեղի կու տար եւ կը հաշտուէր իր անգօրութեան հետ:

- Նայէ՛ սպիտակ ներքնազգեստիդ, արիւնով ներկուած է:

Տղամարդն էր, որ եղբայրաբար զինք զգուշացուցած էր:

Նայեցաւ: Ծիւղ կ'ըսէր: Մարմինը նետեց աւազին վրայ: Տակաւին չհանգչած՝ ալեակները միսերը ճանկուտեցին եւ աւազներուն վրայ ձգեցին կարմիր հետքեր, որոնք կնոջական մարմիններու կերպարանք առին եւ տուն վերադարձող փրփրահիւս շարժումներով դէպի հեռաւոր ջուրերը սահեցան: Ընդոստ ոտքի ելաւ եւ փորձեց հետեւիլ տղամարդուն, որ աչքերուն մէջ կանաչ հորիզոններու վերջին բեկորները ցանց եւ ձեռքի շարժումներով բաներ մը ըսաւ: Թէ ինչ ըսաւ, յստակօրէն չհասկցաւ, թէ եւ զգաց, որ բեկորները տակաւ առ տակաւ տերեւներ դարձան, գոյն ու պատմութիւն փոխեցին, տեղացին աւագուտքի փրփուրներուն, խառնուեցան յիշողութեան հողմերուն եւ տարտղնուեցան:

Երկարեց ձեռքը՝ մանուկ տերեւ մը փրկելու յոյսով: Վայրի ծովախոտեր՝ յիշողութեան ծովուն խորը յուսախրած աչքերուն մէջ: Վայրի ծովախոտեր՝ սրունքներուն պլլուած եւ հասակն ի վեր բարձրացող: Վայրի ծովախոտեր՝ աստ ու անդ եւ ամէնուրեք: Բռնուած էր իր իսկ լարած երեւակայութեան թակարդին մէջ եւ փրկութեան փորձերը այլեւս ո'չ մէկ իմաստ ունէին:

- Չշարժի՞ս...

Զկրցաւ պատասխանել:

- Ա՞յս էր փնտռածդ,- յարեց գորովալի, բայց միաժամանակ յանդիմանական շեշտով մը եւ միացող մշուշներու մէջ թաղուած բերդաքաղաքը մատնացոյց ըրաւ:

- Հոն քեզի ինչ,- պատասխանեց անգիտակցաբար եւ աւելցուց,- տակաւին բան մը չաւարտեցաւ: Առանց աւարտելու ո'չ մէկ բան կրնայ սկսիլ:

- Անկարելի է: Ուզածդ ի՞նչ է, բարեկա՛մ, չե՞ս գիտեր, որ ժամանակը կանգ չ'առնէր: Դեռ չհասկցա՞ր...

Աստուած վկայ, որ տակաւին չէր հասկցած, թէ եւ փորձեց պատասխանել, որ սկիզբը միշտ ալ աւարտելու հեռանկարով չի սկսիր, իսկ երբ սկսի, երբե՛ք չ'աւարտիր: Բայց ծովաքամին խուժեց բերանէն ներս, աղը ձայնալարերը խեղդեց եւ ակամայ լռեց:

Արդեօք դարձեա՞լ կ'երեւակայէր:

Զկրցաւ ճշդել: Յիշողութեան շփոթումը կը յառաջանար, ճամբուն երկու կողմերը կանգնած մանկամարդուհիներ դալար ոստեր կը շարժէին, կ'երգէին մեղմ ու քաղցրաճայն եւ մանուկ թագաւորին մօտալուտ գալուստը կ'աւետէին: Ճամբան տեղափոխ կ'ընէր, ծառերու կատարներուն թառած սպիտակ աղաւնիները թեւ կ'առնէին, երկինքը կը գունաւորէին կաթնասպիտակ խաղաղութեամբ, մինչ անծանօթ ուղե-

ւորներու թափօրը կը յառաջանար յամրաքայլ ու գերերջանիկ: Բայց տակաւին կը լսուէր ծովուն ձայնը, որ կամաց-կամաց ա'լ աւելի զօրացաւ, գրաւեց միջոց ու տարածութիւն եւ անսպասելի մտահոգութիւններ փոթորկեց:

Աչքերով հետեւեցաւ երթին, սակայն ուզեց տեղն ու տեղը արձանանալ՝ ճիշդ ու ճիշդ ծովուն կատղած ալիքները յօշոտող վիշապակերպ խարակներուն պէս: Արդեօք դէպի ո՞ւր կ'ուղղուէին: Հաւանաբար, ինչու ոչ, դէպի ծովեզերեայ երկու թիզ աւազանները՝ հոն շերտացող աղը դուրս հանելու եւ պարկերու մէջ լեցնելու համար: Աղը ապրուստի իրենց գլխաւոր աղբիւրն էր: Կոշկոռած ձեռքեր ու աղ, աղ ու աղբիւր, աղ ու յամեցող այրուցք, աղ ու կեանք եւ աղ ու ճակատագիր: Եւ աղի պարկերուն կողքին՝ արեւու վառ շողերուն տակ չորցող, սառած աչքերով ձուկեր, որոնց ապակիի պէս ցուրտ աչքերուն մեռելային անշարժութեան մէջ ծով-ծով վտանգներու սպառնալիքները կարդաց:

Վաղը, անկասկած, մանուկները դարձեալ պիտի գային, պահ մը պիտի արձանանային ցամքած աւազաններուն դիմաց, պիտի անիծէին սեւ-սեւ ամպերն ու պղտոր ջուրերը եւ յուսահատ՝ պիտի ալեկոծէին իրենք իրենց դէմ, կեանքին դէմ, կեանքն ու ծովը արարողին դէմ եւ ամէն բանի դէմ: Կծկուեցաւ ոգնի մը պէս, աշխարհ մը ծանրութիւն գլուխը առաւ ձեռքերուն մէջ, եւ մարմինը խճողած ցաւէն խայթուած՝ սկսաւ տարօրինակ ձայներ հանել: Վիրաւոր շան մը պէս կը կաղկանձէր: Կ'ոռնար ծնունդի ցաւէն: Մահուան ցաւէն: Ցաւին ցաւէն: Կարծես մարմինը կ'որոտար, աղիքները կը պայթէին, գլուխը անտանելիօրէն կը ծանրանար, աչքերը կը խաւարէին եւ դէմքին արեւախանձ կնճիռներէն խառնաշփոթ հաւանականութիւններու բաւիղներ կը ճիւղաւորուէին:

- Ի՞նչ կը սպասես, չքալե՞ս...
- Պահ մը կենանք:
- Ինչո՞ւ:
- Պիտի խեղդուիմ:
- Խոր չունչ ա'ռ եւ թափ տուր ոտքերուդ:

Չպատասխանեց: Ա'լ աւելի կծկուեցաւ եւ յանձնուեցաւ իրերայաջորդ պատկերներու խաղին: Երկարեց ձեռքը: Կնոջ թարթիչները տարտղնուեցան մատներուն միջեւ: Սարսափեցաւ: Նայեցաւ չորս կողմը: Նոյն ծանօթ պատկերը: Յած առաստաղով, առանց պատուհանի մուկի ու գարշահոտ նոյն սենեակը: Մէկ անկիւնը փռուած խոնաւ ու սրտխառնոք պատճառող խշտեակ մը, վրան՝ յամառ ու մեծամիտ միեւնոյն կիներ, որ մեռելի մը պէս ծեր-ծեր կը քնանար: Անկողինին մէկ ծայրը տեղ գրաւեց եւ ափը իբրեւ բարձ սահեցուց կնոջ գլխուն տակ: Գզգզուած մազերը պահ մը դողացին, պարզեցին ահռելիօրէն կնճռոտած դէմքը, որուն վհուկ արտայայտութենէն սարսափած՝ ետ-ետ քաշուեցաւ եւ ուզեց փախուստ տալ: Սակայն հակառակ կայծակի պէս հեռանալու իր անգուսպ ցանկութեան, ուզեց խօսիլ, հարցապնդել, ջանաց չաղփաղփել բարձրաձայն, յետոյ ձայնը կամաց-կամաց մեղմացաւ եւ սկսաւ իր ըսած խօսքերը լսել: Ինչե՞ր դուրս կու տար:

Կինը նահանջեց, վեր բարձրացուց կոպերը, ապշած իրեն նայեցաւ, չրթունքները

մօտեցուց ձախ ականջին եւ, իր կարգին, սկսաւ աղաղակել աշխարհի բոլոր լեզուներով: Ի՞նչ չափած էր: Պարզապէս սուգը դարձած էր ժամադրավայր, հանդիպումի միակ վայր, որ իր անվերջ մահացումին կորուստներով կինն ալ վարակած էր եւ ասիկա իրեն մեծ ցաւ պատճառեց: Զղջաց եւ անոր վիշտը ամոքելու համար ըսաւ, թէ իրեն հետ միշտ այսպէս կը պատահի, կը պատահի հակառակ իր կամքին եւ ամէն անգամ, որ կ'ուզէ քնանալ ու գէթ ականթարթ մը խաղաղիլ, չես գիտեր ինչպէս, չես գիտեր ինչու, մահը կը խանգարէ իր քունը եւ ինք ահուսարսափի կը մատնէ նոյնիսկ իր է՛ն հարազատ սիրելիները:

Կարծեց, թէ ըսաւ, բայց իրողութեան մէջ, յուզումը պրկուեցաւ ձայնալարերուն շուրջ, սեղմեց կոկորդը, գինք շնչահեղձ ըրաւ եւ խեղդուկ ձայնով սկսաւ լալ: Յետոյ, երբ յոգնութիւնը տարածուեցաւ մարմինին մէջ, երբ խլիրդի պէս ճիւղաւորուեցաւ եւ տուայտանքները հասկցող ո՛չ ոք գտաւ իր կողքին, ընդոստ սենեակէն դուրս նետուեցաւ եւ քամիացաւ: Եւ չհասկցաւ երբեք, թէ ինչու կը վազէր աննպատակ, լեղապատառ ու վիրաւոր գայլի մը պէս, փնտռելով խաղաղ անկիւն մը, ուր կարելի էր ցաւատանջ գլուխը թէկուզ ականթարթ մը քարին դնել եւ ծածկուիլ աստղերուն վերմակով: Վազեց այսպէս, վազեց ու վազեց, մինչեւ որ փողոցներն ալ վազեցին եւ քաղաքի ծայրամասին գտաւ նախկինը յիշեցնող անշուք ու մութ, կիսափուլ ու գարշահոտ խրճիթ մը: Թակեց դուռը: Պատասխան չստացաւ: Դարձեալ թակեց, աւելի ուժգին, ա՛լ աւելի կատաղի, մինչեւ որ մանուկ մը երեւցաւ տան չեմին եւ յայտնեց, թէ յուղարկաւորութիւնը վաղը տեղի պիտի ունենայ: Մտաւ ներս, ըսելէ ետք տղուն, որ ձեւակերպութիւններու պէտք չկայ, որ հեռու հեռուներէն կու գայ եւ խօսելու ո՛չ տրամադրութիւն եւ ոչ ալ ժամանակ ունի: Շփոթահար տղան մնաց տան սեմին, ցախ ու լուցկի փնտռեց եւ երբ ոչինչ գտաւ, յանցաւորի անձայն քայլերով ներս սպրդեցաւ: Յետոյ, լուռ ու մեղաւոր, երկնցաւ մանչուկին կողքին՝ փախթին վրայ, ցուրտը ա՛լ աւելի ճանչցաւ եւ սկսաւ երազել գինք չըջապատած ահաւոր մթութեան մասին, զոր նոյնիսկ տեսնելու ի վիճակի չէր: Սարսափէն սպիտակած աչքը ոչինչ կրնար տեսնել: Եւ չնկատեց, թէ թոքախտաւոր լոյսին դալուկ շողերը ժամեր ետք ինչպէս պլպլացին իր իսկ սպիտակ տեսողութենէն եւ խաւարակուր խաւարէն զատ ոչինչ տեսաւ:

Դալուկ լոյս մը եւ նոյնքան դալուկ շփոթահար մը: Կողք-կողքի, իրարու մէջ եւ առաւել քան երբեք անջատ իրարմէ, որքան իրարու ազուցուած կեանքն ու մահը: Այս մէկը առնուազն այլեւս յստակ էր: Կը մօտենար եւ ան փախուստ կու տար: Կը յայտնուէր լոյսը դալուկ, ստուերը կը սկսէր ձեւաւորուիլ եւ կը մարմնանար: Կը դառնար կատարեալ ստուեր եւ կը փորձէր հալածել իրմէ անդադար խոյս տուող խօսքին շուրջ՝ հասկնալու համար, թէ իր բաղաձայն բարբաջանքները դէպի ո՞ւր պիտի առաջնորդեն գինք: Դէպի Ուր բերդաքաղաքին անապահով ու այլամերժ փողոցները, թէ՞ ինչ հրաշաքաղաքի Արեւադրան հրաշագոյն լոյսերը...

Արեւն էր, որ կը խօսէր:

Աւագի չափ շողշողուն մարդիկ՝ աւագուտքի թաց ու կակուղ ափերուն երկնցած: Մաքուր ու տաք աւագահատիկներ, որոնց մէջ գիշերը իր աստղերուն տաղերը ցա-

նած էր: Թէ այս կիսաթմբիւր երանութիւնը որքա՞ն տեւեց, չկրցաւ ճշդել: Միայն անդրադարձաւ, որ գոհ ու երջանիկ ոտքի ելան, փի-փի աստղախեցիներ հաւաքեցին, իրենց գլուխները աստղապսակներով զարդարեցին եւ քամիին թեւերով սկսան պարել պարը անվախճան ուղեւորութեան, որ անհունը լեցուց ծիածանին եօթնախորհուրդ պատարագով եւ սպասուած հանդիպումին ակնթարթը կշռութաւորեց:

Աչքը միայն կրնայ բռնել ակնթարթը երջանկութեան: Աչքը՝ ամենահաս ձեռքը մարմինին, որ իր տարաբախտ հոգիին երկնակամարին վրայ արդէն գօտի կապած էր:

ԹԵՒԱՏ ՓԱԿԱԳԻԾ՝

ՀԱՒԱՆԱԿԱՆ ԱՒԱՐՏԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Ձինք կ'որոնէի բառերուն ու կիսափուլ կառոյցներուն փլատակներուն տակ, որպէսզի խորանամ իր աչքերուն մէջ եւ սպիտակը խճողած արեան կարմիր առասպելը կարդամ: Կը կանգնէի ծանօթ-անծանօթ մարդոց առջեւ եւ հարց կու տայի իր մասին, սակայն բոլորն ալ կը պատասխանէին, թէ այդ անունով անձ մը չեն ձանձնար եւ անտարբեր կը հեռանային: Ձէի յուսահատեր, կը շարունակէի փնտռել զինք եւ անդադար նոյն հարցումը կրկնել, որովհետեւ գիտէի, թէ ինք նաեւ զիս կը փնտռէ ... արեանս եւ յիշողութեանս մառախուղներուն մէջ: Առանց իրեն անկարելի էր ապրիլ: Առանց իրեն մահն իսկ կրնար դառնալ անիմաստ: Կը սիրէի յիշողութիւնս եւ կը հաւատայի հանդիպումին, որ պիտի դառնար անխուսափելի իրականութիւն, թէկուզ յիշողութեանս մէջ՝ իբրեւ վախճանը իրենց աւարտը որոնող ցուրտ ու անբակ բառերուն:

- Հոս ի՞նչ գործ ունիս:

Արդեօք ի՞նք էր: Ծեշտակի ու խիստ նայուածքը, նոր սրուած ածելիէ մը աւելի սուր ձայնը եւ դժոխքին զայրոյթները շաչող կոշտ ու խոժոռ նոյնը շեշտը կը հաստատէին, որ անկասկած ինք է եւ ուրիշ ո՛չ ոք:

- Գիտե՞ս, լուրջ տագնապէ մը կը տառապիմ, մահացու հալածախտէ մը եւ չեմ գիտեր, թէ ի՞նչ պէտք է ընեմ:

- Չեմ հասկնար:

- Բանտարկեալն եմ ինքզինքս ըլլալու այս զգուելիօրէն սրիկայ անել բոլորակին եւ տակաւին ո՛չ մէկ ելք կրցայ գտնել:

- Դարձեալ չեմ հասկնար:

- Գերին եմ շղթայակապ ազատութեանդ, բայց դեռ ազատութիւնդ չյայտարարեցիր եւ զիս ալ աւելի քու գերութեամբ բանտարկեցիր:

- Հեռացիր:

- Բայց ըսէ՛, ո՛ր, ո՛ր, երբ ամէն քայլափոխի միայն քեզի կը հանդիպիմ, բռնակալ ազատութեանդ, որ ազատութիւն չէ, գերութիւն է ահաւոր եւ անաւարտ խաչելութիւն:

- Քեզի հրաւէր դրկող եղա՞ւ:

Անկասկած չձանձցաւ զիս, այլապէս ... ինչո՞ւ այս ցուրտ վերաբերումը, չէ՞ որ ես անդադար մեր այս հանդիպումը երեւակայած էի, ձշղած՝ մէն մի մանրամասնութիւնը անոր, ընտրած՝ բառերուս ոսկին ու գոհարները առասպելին, որպէսզի իր անառակ որդին գտած իմաստուն ծերունիին պէս հայրաբար դիմաւորէ զիս, թողութիւն շնորհէ կամայ-ակամայ գործած մեղքերուս եւ ամենապարարտ հորթը մորթելու փոխարէն՝ լայն բանայ սրտին սեղանը եւ իմ կորսուած էութիւնս գտնեմ:

- Կարձի կապէ, ի՞նչ կ'ուզես:

- Երեւի, երեւի,- դողդղացի երկչոտ ձայնով,- երեւի չձանչցար զիս:

Մոռցար խոստումդ, ուխտդ եւ ...

Չձգեց, որ շարունակեմ եւ զայրացած գոռաց:

- Ես բան մը չեմ մոռնար:

Աստուած իմ, ի՞նչ տեղի կ'ունենար, ինչո՞ւ, ինչո՞ւ եւ վասն ո՞ր սատանային: Արդեօք երէց եղբայրս դարձեա՞լ դժգոհ էր, բայց չէ՞ որ ինք ո՛չ միայն իմաստուն հայր էր, այլեւ՝ ապստամբ ու փառասէր որդին տոհմին, որուն ժառանգին մէկ համեստ աւանդապահն ալ ես էի, ես էի...

- Շունշանորդիները, որ այս առասպելը հնարեցին, կարծեցին, կը կարծեն, որ ձիշդ ու հարազատ ձեռով շարահիւսեցին: Ո՛չ, մեծ սխալ մը կայ այս պատմութեան մէջ: Գնա՛, ջնջէ՛ անտեղի յաւելումները, վերստին խմբագրէ քնարավէպդ եւ հասկցիր, որ Արտաւազդները չեն կրնար անձնատուր ըլլալ, պարտուելու իրաւունք չունին...

Թեւատ փակագիծը մնաց բաց:

Վերցուցի գրիչը, թաթխեցի կաղամարին մէջ եւ ցամքած մելանին աներեւոյթ տառերով դարերուն տուայտանքը լռած մագաղաթին վրայ սկսայ արձանագրել:

«Յետոյ դժոխադէմ աժդահաներ յայտնուեցան, զիս մութ ու մահամռայլ քարայրի մը մէջ նետեցին, շղթայեցին, իսկ ինձմէ քիչ մը անդին՝ օտարականը, հոգեղբայրս: Երբ մտրակները շաչեցին, ցաւը գրաւեց մարմինս: Կոտտացող ցաւերուն նոր վախեր յաջորդեցին: Յետոյ՝ սալերուն վրայ կայծկլտող կռանները վերջապէս լռեցին: Լռեցին յոգնասպառ մտրակները նաեւ: Մեծ դժուարութեամբ վեր բարձրացուցի արիւնլուայ գլուխս եւ մեղաւոր ու երկչոտ նայուածքներով զննեցի ինձմէ քիչ անդին փուլ եկած շղթայակապ ընկերս, որուն վէրքերը իմ իսկ տառապանքս կը մռնչէին: Ան նաեւ կը ջանար աջ ձեռքը երկարել, հասնիլ ձիթի պէս գուր երկարող մատներուս, բռնել եւ միասնաբար բաժնել մեր անիծեալ ձակատագիրը:

Երկու ձեռքեր՝ ձենձերահոտով ծանրացած օդին մէջ:

Իրարու ագուցուելու վերջին ձիգ մը, ապարդիւն ձիգ մը, անհեթեթ ձիգ մը, որուն մեռելային թմբիրը յաջորդեց, մկանները ակամայ քակուեցան եւ ձեռքերը սահեցան վար: «Մարդ ըսուածը իր արմատներուն հետ ո՛չ մէկ աղերս պէտք է ունենայ, պէտք է խզէ բոլոր կապերը, հրաժարի ամէն տեսակի պարտաւորութենէ, որպէսզի իր ազատութիւնը նուաճէ», պիտի ըսէի իր ցաւերուն մէջ գալարող ընկերոջս, բայց ամչցայ ես ինձմէ, անիծեցի տկարացումը եւ վճռեցի լռել: Եթէ սխալէի եւ ըսէի, դուք ըսէք, այս ապիւրատ օտարականը իմ նկատմամբս ունեցած կարծիքը պիտի պահէ՞ր, պիտի մնա՞ր իմ կողքիս, ինծի հետ կտրէ՞ր պիտի լեռ ու ձոր, ապատ ու անապատ, ձակատագիր ու կեանք, կեանք ու մահ, մահուկեանք ու կեանքումահ, թէ՞...»

Կատղած կռանները կը շարունակէին գոռալ անէծքը հայրերուն. կը հալածէին զիս ամէնուրեք, կը դարբնէին բնագիրը իրենց առասպելին, որոնց հեղինակները միայն հայրերը չէին, նաեւ թուլամորթ որդիներն էին, ամէնէն առաջ ես էի, նոյնպէս ան, մենք, իրենք, աւերակաց գահակալ ապստամբներն ու իշխանատենչ նորելուկները, անձնամոռ ազատամարտիկներն ու գետնաքարշ սողունները, անվախձան երեւակայութիւնս էր եւ սմսեղուկ փառատենչիկներուն հոգեկան կուրութիւնը, բայց իրենցմէ առաջ եւ վերջ՝ իր միամիտ երազներով ինքզինք եւ իր դարաւոր վիշտը մխիթարել փորձող մանուկ թագաւորը, որ խոստացած էր, պիտի յաղթէր իր վախերուն եւ երջանիկ օր մը, անկասկած, դուրս պիտի խոյանար իր դամբարանէն, կանգներ շքեղօրէն, սաւառնէր յաղթաթել եւ զիս առաջնորդէր դէպի ձիւները Մեծ Լերան: Խոստացած էր եւ խոստմնադրուծ չէր կրնար ըլլալ»:

Անդրադարձայ, որ սկսանք առաջանալ: Կ'առաջանայինք միասնաբար, ինք ու ես, ես ու ես, կողք-կողքի, դէպի հեռաւոր Երկիրը Դրախտավայր՝ առասպելին տարտարոսէն

սօսիացած երկու քրմապետերու պէս, յար եւ մման երկիր ու երկինք բզկտած երկգրլխանի Մեծ Լերան ամպերն ի վեր ժայթքած սրբազան խոյանքին եւ անբացատրելի հպարտութեամբ մը հարստացայ:

Եւ ամբողջացայ, ամբողջացայ ինք նաեւ՝ կատարելապէս, հոգուով ու մարմնով, արիւնով ու տեսիլով, եւ ցեղին անպարտելի ոգիին հրեղէն խորհուրդներով հոգեզինւեցանք: Էացայ: Ես՝ ես եղայ:

Տղամարդը տիրած էր մարմինին, արեան ու երեւակայութեան, յիշողութեան ու ժառանգին, հաւատքին եւ կամքին, տեսիլին եւ ուխտին, տիրած էր փառաւորապէս եւ օտարականը նահանջած էր ընդմիշտ:

Ծիտը թառեցաւ աչքերուն դէմ:

Ցնծաց: Ամենահաս ձեռքը բռնած էր ակնթարթը անհունօրէն երջանիկ աւարտին: Թռչունը մօտեցաւ հողին ի՛նչ-ի՛նչ սէրերը կարմրած նուռին եւ կտցեց: Կարմիր աւիչը կտուցին ծայրէն կաթեցաւ լիականաչ տերեւին վրայ: Ցնծութիւնը կրկնապատկուեցաւ եւ աչքը ինքն իր մէջ՝ իր հայելիին խորը անհունացող կապոյտ երազին շուրջպարը պարեց:

Սորված էր մանուկ հասակին, որ ցորենի հատիկը կտցող թռչունը գեղեցիկ պատկեր մը կը պարզէ: Այդ իսկ պատճառով որոշած էր գծել գեղեցիկ նկար մը եւ փնտռած՝ իր երեւակայութեան վրձինով նրբահիւսած հազարան պլպուլը: Եւ գծած էր զայն, շարունակ, բայց միշտ ալ իր երեւակայութեան մէջ, առանց հրաժարելու օր մը իր հրաշք թռչունը գտնելու եւ սպիտակ թուղթին վրայ գունաբանտարկելու միամիտ երազէն:

Եւ հիմա, որ տարիներ շարունակ իր երազած թռչունը յանկարծ յայտնուած էր եւ երազը արթնցած էր իր երազէն, կորսնցուցած էր հմայք ու քաղցրութիւն, կարօտ ու ջերմութիւն, սէր ու համբոյր եւ դարձած՝ ցուրտ, անհետաքրքիր ու անարժէք իրականութիւն: Գինին չէր եռացած բաժակներուն մէջ, անառակ որդին մնացած էր յուսաբեկ՝ դրան սեմին, իսկ դաժան դարբիններն ու կատողած գամփռերը շարունակած էին ոռնալ անէծքը իրենց գահերուն կառչած գառամած աշխարհակալներուն: Եւ ինք, իր խեցիէ ճակատագիրը միշտ կրելու դատապարտուած խխունջի մը պէս, լուռ ու անտրտունջ, դանդաղ ու լոյծ քայլերով իր դաճաղը շալկած՝ հետեւած էր իր արեան կողմնացոյցին թելադրանքին, որպէսզի իր վերջնական բնակարանը գտնէ, որպէսզի ժամանակին նոր շունչ պարգեւէ, շնորհէ ուղղութիւն ու նպատակ, շարժում ու լոյս, տարածուի աշխարհով մէկ, ջնջէ խաւար ու ստուեր, լուսանան օր ու գիշեր եւ ժամանակին սպասուած արշալոյսը կանխանշանէ:

Լեզուն, ինք պիտի ըսէր՝ առասպելին արշալոյսը:

(Հատուած՝ «Կարծես երազ մը ըլլար» անտիպ քնարավէպէն)

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Կիրակի առաւօտ մը, պարոն Մարտիրոս սովորականէն շատ կանուխ ոտքի ելաւ: Արթննալը, հագուիլն ու պատրաստուիլը եւ ապա փողոցի դուռ հասնիլը գրեթէ մէկ եղաւ:

- Քա մարդ, ո՞ւր կ'երթաս ... այդպէս, այս ցուրտին,- յանկարծ կնոջ ձայնը խանգարեց սենեակին լուրթիւնը:

Մարդը յանկարծակիի գալով, հակառակ կնոջը պնդումներուն, նախ «ականջ չկախեց», ու երբ կը պատրաստուէր դուրս գալ տունէն, պատասխանեց բարձրաձայն՝ ե՛ւ արագ, ե՛ւ ջղային:

- Ե կ ե դ ե ց ի՛:

- Խէր է, մարդ,- անմիջապէս փոխադարձեց կինը:

- Այո՛, խէր է, սիրտս ուզեց, արգիլուա՞ծ է,- ըսաւ ու տան փողոցի դուռը բացաւ:

ՍՐԲԱԶԱՆ

Զգալի էր, որ պարոն Մարտիրոսի ձայնին մէջ անժամանակ ըլլալու չեշտ մը կար: - Քա՛ մարդ, դո՞ւն պիտի բանաս եկեղեցւոյ դուռը, համբերէ՛, ե՛ս ալ գամ: Հիմա հարսդ կամ փեսադ կու գան ... մեզ ալ իրենց հետ եկեղեցի կը տանին»:

- Ո՛չ, կ'ուշանամ, ուրիշ անգամ ... ահա՛ գացի,- ըսաւ կտրուկ եւ գործնական:

Խորքին մէջ, պարոն Մարտիրոս իրեն ուղղուած հարցումներուն պատասխանելու սովորութիւն չունէր: Ընդհանրապէս իր շուրջ բարձրացած աղմուկը շուտով մոռացման ծովուն մէջ կը նետէր, միայն ուսերը վեր առնելով:

Աճապարանք մատնող քայլերով նետուեցաւ փողոց: Ըստ սովորութեան անցաւ մայթը, կտրեց յաջորդ փողոցը, եւ ահա ինքզինք բերաւ հանրային պապի կայանը: Այսքա՛ն:

Իրեն համար այս վայրը բոլորովին անծանօթ տեղ մը չէր: Ինք, չաբաթը մէկ կամ նոյնիսկ երկու անգամ քաղաքամէջի հայ մեծ վաճառատուն-շուկան երթալու համար, հոսկէ «կ'առնէր» պապը, ու ոչ միայն իրենց՝ այլ իր զաւակներու ընտանիքներուն ալ ամբողջ շաբթուան գնումները ընելէ ետք, նոյն ձեւով ալ, ծանր տոպրակներով բեռնաւորուած՝ տուն կը վերադառնար:

Հակառակ իր յառաջացած տարիքին, տարիներէ ի վեր այս շուկայի ճամբան գոց ըրած էր: Անոր համար այլեւս անծանօթ չէին այդ պասերու գրեթէ բոլոր վարորդները: Ամէն անգամ որ ինք վեր, փոխադրակառք բարձրանար, նախ իր անգլերէնովը վարորդը յարգանքով կը բարեւէր: Յետոյ տոմսակը ցոյց կու տար: Ապա եթէ իրեն «բարեկամ» կամ «ծանօթ» վարորդներէն մէկը ըլլար, անոր հետ կատակ մը ընելէ ու գրպանէն պզտիկ շաքար մը հանելով հրամցընելէ ետք պարապ աթոռ մը, տեղ մը գտնելով կը նստէր, միշտ աչքերը պատահունէն դուրս յառած, անխօս եւ անշշուկ:

Պարոն Մարտիրոս մեծ հայր էր: Կը սիրէր տալ, գուրգուրալ, գնահատել, վարձատրել: Շաքարը բոլորին համար էր, մեծին ու փոքրին, ծանօթին ու անծանօթին:

Այս բոլորով հանդերձ սակայն, ինք երբեք Կիրակի օրով չէր փորձած պաս նստիլ:

ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Ու երբ կայանին աչքի զարնող ամայութիւնը տեսաւ, շատ զարմացաւ:

Վստահաբար պասերու կիրակնօրեայ ժամանակացոյցէն անտեղեակ էր:

Կայանին աղտոտ, մրոտած եւ սեւցած ապակիին վրայէն փորձեց օրուան ժամանակացոյցը կարդալ եւ անմիջապէս փոսը ինկած մեծ աչքերուն տակէն իր ձեռքի ժամացոյցին նայեցաւ:

- Է՛հ, տակաւին շատ ժամանակ կայ, կը հասնիմ,- ըսաւ մտովի:

Այդ օր, կայանին մէջ, պարոն Մարտիրոս նախընտրեց ոտքի մնալ եւ չուզեց յաճախորդներուն յատուկ նեղ քարէ նստարանին նստիլ կամ անոր մօտենալ: Իսկապէս մտազբաղ կ'երեւէր: Զեռքերը ետեւ տանելով, աչքերը միշտ դէպի պասին գալիք ճամբան՝ համբերութեամբ սպասեց:

Զարմանալի էր, չէ՞, որ տակաւին իրմէ զատ մարդ-յաճախորդ չկար: Իսկապէս զարմանալի:

Տասը վայրկեան ետք փոխադրակառքը հասաւ, կայանին նման՝ պաս-պարապ: Վարորդն ալ իրեն անծանօթ մէկը կ'երեւէր: Ուստի, անխօս եւ անաղմուկ փոխադրակառք բարձրացաւ, բարեւեց եւ առաջին շարքի աթոռներէն մին գրաւելով նստեցաւ:

Պարոն Մարտիրոս երբեք այս դրուժեան մէջ չէր եղած: Իրապէս բան մը զինք կը չարչարէր: Մտքին մէջ բազմաթիւ հոսանքներ կարծես տեսակ մը անծանօթ դիմադրութեամբ մը իրարու կը բախէին:

Հաստատապէս խառնաշփոթ իրավիճակ: Անհանգստացնող մտահոգութիւն: Կարծես գլխուն մէջ հրաբուխ ըլլար: Յօնքերը յաճախ վեր-վար կը ցատէին: Զգալի էր, որ ինք նստած տեղը մինակը, անձայն կը խօսէր:

Ճանապարհի բոլոր կայանները գրեթէ ամայի էին: Յաճախորդ չկար եւ եթէ կար՝ անոնք միայն մէկ կամ երկու հոգի էին: Ո՞ր խենթը այս ժամուն քաղաքամէջ կամ շուկայ պիտի երթար: Կիրակի էր չէ՞: Կիրակի օր նոյնիսկ Աստուած հանգիստ կ'ընէր:

Բայց որո՞ւ հոգը:

Ինք եկեղեցի կ'երթար:

Երկու շաբաթէ ի վեր միտքը դրած էր: Այս մէկը անցեալ Կիրակի օր ալ ծրագրած էր, բայց օրուան տեղացող սաստիկ անձրեւին պատճառով, եկեղեցի երթալը յետաձգած էր:

Եկեղեցի կ'երթար հոգեհանգիստ «կարդալ» տալու իր վաղեմի, սիրելի ուսուցիչի յիշատակին, որ իրեն համար պարզ մարդ մը չէր եղած:

Նախակրթարանի գրասեղաններու հայերէն լեզուի դասատուն՝ պարոն Կարապետը, «մեծ մարդ մըն էր», յաճախ իր շրջապատի խօսակիցներուն՝ իր «միտքը կոփող մեծ վարպետ» մակդիրով զայն կը յիշատակէր:

Ինք, ամէն տարի, նոյն այս օրերուն, պարտաճանաչ աշակերտի մը նման, առանց շրջապատը խանգարելու եկեղեցի կու գար, ու իբրեւ սրբազան եւ մեծ պարտականութիւն պարոն Կարապետի հոգւոյն համար հոգեհանգիստ կարդալ կու տար, լուռ ու անաղմուկ:

Հիմա, սակայն, այս աղմկոտ մեծ ինքնաշարժին դանդաղ ընթացքը տարբեր շունչ մը հաղորդած էր իրեն:

Հագիւ իր տեղը նստած, նախ աչքերը դուրսէն ներս կեդրոնացուց: Քանի մը վայրկեան ետք տարիներու հեռաւորութենէն կարօտով ու լուսաւոր զգացումով մը բաներ մը յիշեց: Իսկապէս, որ աչքերը սկսած էին փայլիլ:

Գլխու «հրաբուխը» մարած էր: Այլեւս ունեզերէն մուխ չէր ելլեր: Եզակի եւ վճռական ինքնագոհութիւն մը, ժպիտ մը գծուած էր պարոն Մարտիրոսի դէմքին վրայ եւ անոր շնորհած՝ սովորականէն տարբեր տեսք ու երանգ:

Տակաւին երէկ գիշեր երազին մէջ հանդիպած էր իր հին ուսուցիչին: Որքա՛ն ուրախացած էր զայն երազին մէջ տեսած ըլլալուն: Դիպուած էր, թէ՞ հոգեկան ամուր կապ: Զկրցաւ ճշդել:

Թէեւ իր ամբողջ կեանքի ընթացքին ճակատագրի դերը մեծ եղած էր, սակայն

այս օտարութիւնը, այս հսկայ երկիրը, զինք իրենց ճանկերուն մէջ բռնած էին կարծես, եւ ամէն վայրկեան պատրաստ՝ իր հոգեխռով յուշերը լափելու, զանոնք առյաւելտ կուլ տալու:

Ահա՛ անհաւասար պաքար մը:

Ինք կը հաւատար, որ իր տարիքի մարդիկ յիշողութեամբ միայն կ'ապրէին: Յուշեր ունենալն ալ ինքնին կը նշանակէր անցեալ ունենալ: Այսպէս թելադրած էր իրեն իր ուսուցիչը:

Անցեալը անբաժան մասնիկ մըն էր մարդու կեանքէն, այսպէս կ'արդարանար: Այս յստակ նշան մըն էր, որ պարոն Մարտիրոս կոչուած մարդը ապրուած կեանք մը ունեցած էր ու այդ ապրուածը, որոշ չափով կը պարտէր հայերէնի իր վաստակաշատ ուսուցիչին՝ պարոն Կարապետին:

Աղուոր անկեղծութեան մը ծնունդն էին այս բոլորը: Թէեւ պարոնին ազգանունը մոռցած էր, սակայն հոգ չէր, կարեւորը զայն յիշելն էր:

Վստահ էր, որ հիմա, գրեթէ ամայի այս փոխադրակառքին մէջ, մտովի տեղափոխուած էր ուրիշ շրջան, ուրիշ դար, որ միայն իրեն կը պատկանէր: Ինք իր ուսուցիչին հետ էր՝ հին օրերու նման, կոտորտած պատուհաններով դասարանին եւ կամ փոշոտ ու քարքարուտ բակին մէջ:

Սկիզբը կը կարծէր, որ այս ապրումներուն փոխանցումը իր շրջապատին համար վարակիչ եւ կամ օրինակելի կրնար ըլլալ: Անոր համար անկեղծօրէն հաւատացած էր երջանկութեան:

Սակայն ի տես շրջապատի անտարբերութեան եւ անոնցմէ իւրաքանչիւրին ամէնօրեայ վազվզութիւն, մէկ խօսքով՝ սա երկրին արագավազ ու հեւքոտ կեանքին, իր անձնական համոզումը անշահախնդիր կերպով սառեցուցած էր, առանց վշտացնելու եւ վշտանալու: Ապա վերջը, իբրեւ փորձառու մարդ եւ մտածող միտք, ստիպւած, կեանքը փնտռած էր իր տան պատերէն անդին:

Մեծ հայր ըլլալով մեծ գուրգուրանքով մը նախ փնտռած էր իր թոռներուն ամէնօրեայ ներկայութիւնը իր շուրջ: Անոնց աչքերուն մէջ ինքզինք ուզած էր տեսնել: Անոնց անմեղ մանկութեան մէջ ի՞րը փորձած էր յիշել:

Յիշողութիւն մը, որ թէ՛ ձիւք էր եւ թէ՛ շնորհք:

Աւելին՝ իրեն համար ժամանակը նոյնն էր: Երէկ եւ այսօր ու նոյնիսկ վաղը, նոյն արեւը ծագած էր կամ պիտի ծագէր ու նոյնպէս մայր պիտի մտնէր:

Ու իբրեւ իր մտքի արեւը, իր թոռներէն ետք, հայերէն լեզուի իր տարեց ուսուցիչը միայն մնացած էր: Ան էր, որ ժամանակի անեղբորութեան քաջածանօթ ըլլալով կը շարունակէր իրեն հետ եւ իրեն համար ապրիլ:

Եկեղեցի կ'երթար:

Այս հսկայ երկրին մէջ, նոյնիսկ իր տունէն սկսեալ, հաւատքն ու հաւատացեալը

իրարու մօտիկ բաներ չէին: Եթէ նոյնիսկ էին, պարզապէս մակերեսային երեւոյթ էին, ձեւական եւ ոչ տպաւորիչ:

Իր կարծիքով, այս բոլորին պատճառը՝ իրենք զիրենք եկեղեցիէն մեկուսացնելն էր մարդոց: Մարդիկ, որոնք գրեթէ անմարդկային դարձած էին իրենց Աստուծոյն առաջ, այս պատճառով ալ անոնք եկեղեցի չէին ուզեր երթալ: Անոնցմէ շատ քիչերը միայն ձեւով մը հաւատարիմ էին կրօնական ավանդութիւններուն:

Շատ քիչերը: Ու ինք այս վերջին խումբին կը պատկանէր:

Իրեն համար այսօր առաջնահերթն ու էականը այն էր, որ եկեղեցի երթար ու աղօթք մը «ըսել տար» յիշատակին այն մարդուն, որ իր կեանքին վրայ լոյս սփռած էր:

Իր ուսուցիչը, վարժապետը, հայերէնի դասատուն:

Մէկը, որ իր հոգին դէպի գիրքերը առաջնորդած էր, միաժամանակ սերունդներ դէպի հարթ ճանապարհ, դէպի լոյս առաջնորդած, անխոնջ եւ անձայն:

Պարոն Մարտիրոս աղմկոտ փոխադրակառքին մէջ, մինակը կ'ապրէր լոյսին ուրախութիւնը: Եւ հպարտ էր ատոր համար:

Կրկին յիշեց իր կանաչ օրերը: Ակնոցին ետեւ հլուէն աչքերը սկսան լողալ: Մտածումները քանի մը անգամ օրօրուեցան գլխուն մէջ: Այն մտածումները, որոնք սառած յուշերուն ձիւնհալ բերած էին:

Յանկարծ վարորդին ձայնը՝ իր նախընտրած կայանի անուան յիշեցումով, զինք իր մտածումներէն անջատեց:

Իջաւ վար եւ աճապարանքով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ թաղը:

Պարոն Մարտիրոսի, հա՛յ ուսուցիչի առաքելութեան հաւատքէն թելադրուած՝ ուսուցիչ պարոն Կարապետ այս տարի եւս պիտի յիշատակուէր հոգեհանգստեան պաշտօնով:

Լոյս մը եւս սփռուած էր պարոն Մարտիրոսի կենաց մատեանին վրայ:

Փետրուար, 2012
Լոս Անճելոս

ՇՈՂԻԿ, ԴՈՒ ԴԵՌ ԵՐԱԶՈ՞ՒՄ ԵՍ

- Լսիր, Նեա, ինչ-որ մէկին անհրաժեշտ է մտնել իմ ալիքի տիրոջ/թի մէջ:
- Ի՛նչ է, Ակն, խանգարո՞ւմ է:
- Ո՛չ, ո՛չ, ամենեւին, նա սարքաւորում էի օգտագործում, ուղղակի մի ինչ-որ աղերս եմ զգում, նոյնիսկ ուզում եմ կամացուկ ականջ դնել նրա ապրումներին, որովհետեւ ապրումներից բացի սարքերս ոչինչ չեն զգում: Նա լուռ է, չի խօսում: Տեսնես ինչո՞ւ չի ուզում միտքը բառերով արտայայտել... Դէ ի հարկէ, յոյս չունի, որ իրեն կը լսենք, կը հասկանանք:
- Սե՞ռը, տարի՞քը:
- Այստեղ, լուսատախտակին նրան բնութագրող ժամանակ առ ժամանակ ծագող գերբարձր յաճախականութեան տատանումները ցոյց են տալիս, որ նա չա՛տ երիտասարդ է, նախանձելի՛, երիտասարդ: Ի՛նչ երփներանգ է նրա տատանումների արագ փոփոխուող գունային ցոլանքը: Նա հանգստութիւն է տարածում իր շուրջը: Ես պարուրուել եմ նրա դաշտի բարեբեր ազդեցութեամբ... Լուրջ եմ ասում, Նեա, ցանկացած յոգնած, հանգստի կարօտ էակ, զարգացման ո՛ր աստիճանին էլ գտնուի, կարծում եմ, հաճոյքով կ'ուզենայ հաղորդակցուել նրա հետ:
- Ակն, դու չասացիր ոչ նրա սեռը, ոչ էլ տարիքը:
- Սեռը՝ վառ արտայայտուած իգական է, իսկ տարիքը՝ Երկրի չափանիշերով, մեծ է, նա ուղղակի ծեր է, 70ն անց: Մեր չափանիշն այլ է, ի հարկէ, գիտես, տիեզերական չափանիշով՝ նա մի նուրբ ու անպաշտպան ծիլ է, որը կարող է յաւերժ հրապուրել: Տեսնես գիտի՞, զգո՞ւմ է իր կարողութեան սահմանները...
- Ստացւում է, որ եթէ նա մեր մոլորակի բնակիչ լինէր, ուր տարիքի գործօնը անտեսուած է, մեծ ճանաչում կը վայելէր:
- Այո՛, Նեա, չէ՞ որ զարգացման մեր աստիճանն ունեցող տարբեր մոլորակների բնակիչները յաճախ ծնուած օրուանից ծեր են:
- Այս Երկիր կոչուող մոլորակի բնակիչները, Ակն, մի անգնահատելի յատկութիւն ունեն:

- Ո՞րն է:
- Ձգիտեմ, ինչպէս բացատրեմ: Ինձ թւում է, որ նրանք միշտ երազում են: Երազում են այն ամէնի մասին, ինչն իրենց մատչելի չէ: Գուցէ երազելով ուզում են լրացնել իմացութեան պակասը:
- Դու, ինչպէս միշտ, շատ նրբանկատ ես, Նետ: Իրօք, մենք գրեթէ երբեք չենք երազում, բայց հենց այդ առումով խոցելի ենք: Տէս, Երկրի բնակիչների մասին համոզուած կարող ենք ասել, որ գրեթէ բոլորը երազողներ են: Այս հանգամանքը նրանց թարմացնում է, մղում է ինչ-որ ուղղութեամբ, ասես խթան է հանդիսանում ձգտելու ակելի կատարեալ զարգացման:
- Լաւ, Ակն, հիմա շարունակում ենք մշակել Երկրի հիւսիսային բեւեռից ոչ հեռու գտնուող մի որեւէ բնակելի շրջան: Ընտրեցի՞ր, ասա նրա տեղացոյց տուեալները: Բացի այդ, երկրաշարժի օջախի խորութեամբ նկարահանիր հողի խորքային շերտերի համապատասխան խորանարդ հատուածների եռաչափ պատկերը՝ հետագայ վերլուծութեան համար: Ի դէպ, կը համեմատես նաեւ հակակշիռ երկրաշարժերի խորքային հողերի խորանարդ հատուածների եռաչափ պատկերները:
- Գրանցիր Հիւսիսային Ամերիկա, ԱՄՆ, Ալասկա նահանգի թուային տեղացոյցերը:
- Ուշադրութիւն, կատարում եմ թեթեւակի հորատում համաձայն տեղադրման կանոններով կատարուած հաշուարկի: Այս հորատումը կլանելու է վայրկենապէս կուտակուող ցնցումների հարուածների ուժգնութեան մօտ 12 տոկոսը:
- Երկրաշարժից 20 երկրային օր յետոյ Երկրի եւ Լուսնի արանքով պէտք է անցնի մի մեծ երկնաքար, որն այստեղ է գալիս 30 երկրային տարին մէկ:
- Նրա անցնելու հետ կապուած աշխատանքի ծրագիրը մեզ արդէն ուղարկել են: Դա էլ բարդ ծրագիր է:
- Նետ, հիմա շարունակում ենք թուլացնել լարուածութեան կուտակումները հակակշիռ կազմող երկրամասերում, ուր համարժէք երկրաշարժային գօտիներ կան: Գրանցիր տեղացոյց թուերը, որոնք ես ընտրեցի: Ի՞նչ ես կարծում, հակակշիռները համազօր եմ ընտրել:
- Ակն, հիանալի է, այժմ հասարակածի շուրջը նշիր եւս մի չորս կէտ, հաղորդիր ինձ նրանց տեղը ու արագ-արագ հորատանքեր բացենք:
- Նետ, փաստօրէն, մեզ տրուած առաջադրանքը այնքան ճշգրիտ էր հաշուարկուած վաղօրօք, որ մենք լիովին տեղաւորուեցինք նախագծի սահմաններում: Ի դէպ, այս մոլորակի բնակիչները ընդունել են ու իրենց հաշուարկների մէջ մտցրել են «Ժամանակ» հասկացութիւնը, որը գործողութեան տեւողութիւնն է արտայայտում: Դա նրանց կողմնորոշում է շատ հարցերում, չնայած, այդ կողմնորոշումն այնքան ակներեւ է տիեզերքում կատարուող երեւոյթների համաչափութեան մէջ,

որ բոլորովին աւելորդ բան է:

- Ակն, այդուհանդերձ, ժամանակի հասկացութիւնն ընդհանրապէս ու նրա հաշ-
ւարկը լաւ պարզեցնում է ընդհանուր կողմնորոշման շատ խրթին հանգամանքներ:

- Գնա՛ց, գործիքները գրանցեցին մեր կողմից կատարուած բոլոր հորատումնե-
րը: Հիմա գրեթէ միաժամանակ իրար կը հետեւեն Երկրի տարբեր կէտերում յա-
րուցուած երկրաշարժերը: Մեզ յաջողուեց հաշուած օրերի ուսումնասիրութիւննե-
րի արդիւնքում բաշխել այս տարածաշրջանում կուտակուած մեծ երկրաշարժի ու-
ժը մի քանի լրացուցիչ երկրամասերում: Այսինքն, քիչ-քիչ տարբեր տեղերում՝ լաւ
է:

- Յամենայն դէպս, եթէ այս կուտակուած հարուածը գնար մի ուղղութեամբ,
մեծ վնաս կը տար, շատ աւերածութիւններ կը լինէին:

- Նեա, փորձիր հետեւել այն ոչ մեծ սարի վրայ վերջերս գոյացած երկու չքնաղ
լճակներին: Յուսանք, որ նրանք չեն ելնի ասիերից ու չեն գահավիժի դէպի ստորո-
տը:

- Կը նայեմ: Աչքովս չի անցել, իսկ ծրագրում նշուած է, թէ ինչ կը կատարուի այս
մեծ երկվիսանի սարի մօտ գտնուող լճի հետ: Դու էլ այդ լճի վիճակը տես, Ակն:

- Ո՞ր սարի:

- Այն գեղեցիկ ամենաբարձր սարը, որը միշտ շատ հեռուից տեսնում ենք Երկ-
րագնդին մօտենալիս: Հա, յիշեցի, երկրացիներն այն Արարատ են անուանում: Իսկ
ասածդ լճի անուանումը Վան է:

- Գիտեմ, գիտեմ: Առայժմ հետեւում եմ միաժամանակ տեղի ունեցած երկրա-
շարժերին: Վիճակը տանելի է:

- Ակն, սարքաւորումը ջրի կորուստ է գրանցում: Դեռ աննշան է, բայց վտանգա-
ւոր է: Զուրը որ այս արագութեամբ գնայ, լիճը մի քանի օրում կը վերանայ:

- Սա կարող է վերածուել մեծ աղէտի: Միացրու «արդուկը»: Լճի յատակը մի քա-
նի մետր խորութեամբ մշակի հորիզոնական ալիքով: Եթէ այդ ալիքը հենց երկրա-
շարժի ժամանակ կիրառես, հակառակուելով ջրի ուղղահայեաց արագ կորուստին,
ապա կը յաջողուի փակել փախչող ջրի ճանապարհը: Իսկ տատանումները դեռ մի
առ ժամանակ կը կրկնուեն:

- Միացրեցի դժոխային «արդուկը»:

- Վայը տարաւ ջրի միջի կենդանիներին: Նրանցից քչերը կը դիմանան հզօր ջրապ-
տոյտներին...

- Միայն վերջին տատանումներից յետոյ կ'երեւայ, թէ ինչքան ջուր եւ ո՞ր ուղղու-
թեամբ է վիժել լճից:

- Ասում ես, այստեղի բնակիչները, այս մարդիկ, ինչպէս իրենք իրենց անուանում
են, չա՞տ են տարբերում մեզնից: Ասում ես, նրանք երագո՞ւմ են:

- Այո, այդ է պատճառը, որ Տիեզերական Մտքի բարձր ատեաններում այդ յատկութիւնը գնահատուում է որպէս յարատեւման սաղմ:

Գիշեր էր, ուշ ժամ: Հերթական անգամ սաստկացել էր Շողիկի անքնութիւնը: Շատ գիշերներ էր լուսացնում բաց աչքերով: Նա բացեց պատուհանը, որ նայի թռչող մարդատար ինքնաթիռին, որը յոգնած հռչակներով մագլցում էր երկինքն ի վեր: Երեւի Մոսկուա էր ուղեւորւում, դէպի հիւսիս: Ինքնաթիռը մի քանի անգամ էլ աչքով արեց Շողիկին իր լոյսերով ու հեռացաւ նրա տեսադաշտից:

- Բայց սա ինչ է, այս ձախից կախուածը: Սա իսկակա՛ն եկուոր է տիեզերքից: Մենք ունենք թռչող սարքեր, բայց այսքան երկար օդում կախուած՝ ոչ, չունենք: Այլ քեզ բա՛ն,- մտածեց Շողիկը:

- Սա իսկական տիեզերական մարմին է: Այսքան ասուել ու գրուել է սրանց մասին, բայց ես անձամբ չէի տեսել: Հիմա էլ անշարժ կախուած է ոչ մեծ բարձրութեան վրայ ու լոյսերը աշխոյժ պէծպէծին են տալիս: Այնպիսի տպաւորութիւն է, որ կայծկլտալու հետ մէկտեղ մարմնի ձեւն էլ է փոփոխւում: Մի քանի րոպէ Շողիկն այսպէս նայում էր ու մտածում, իսկ լուսաւոր մարմինը շեշտակի դէպի ձախ ու վերեւ թեքուելով, անյայտացաւ ամպերի մէջ:

Վերջում Շողիկը կորցրեց հանգիստը: Այս ուժգին երկրաշարժից մի 10 օր առաջ մի փոքր երկրաշարժ էլ էր եղել, որից յետոյ նրա զգայուն, զգօն էութիւնը ֆիզիկական ուժերի անկում էր ապրում: Վատացել էր հիւանդ սրտի վիճակը, բժիշկները խորհուրդ էին տալիս հիւանդանոց պառկել: Բայց հիմա կ'արդարացուի իր անքնութիւնը, նա կը ծախսի այդ անիմաստ կորստող ժամերը հետաքրքրագոյն դիտումներ կատարելու համար:

Քանի որ Շողիկը երբեք չէր տեսել տիեզերքից եկած թռչող ափսէներ, այդ պատճառով էլ յատկապէս չէր հաւատում նրանց գոյութեանը: Բայց տեսածը տեսած էր:

Յաջորդ գիշեր նոյն երէկուայ ժամին, առաւօտեան հինգն անց կէսին, նա մօտեցաւ պատուհանին, նոյն ուղղութեամբ նայեց ու նորից տեսաւ այդ տիեզերական սարքը, որը դարձեալ կախուած էր երկնակամարի նոյն հատուածում: Աչքաչափով նա որոշեց, որ սարքը կախուած է մօտաւորապէս 2000 մետր բարձրութեան վրայ, մեծութիւնը, եթէ համեմատենք մեր երկնակամարի ամենամեծ մարմինների հետ՝ աստղերի, մոլորակների, ապա այնպիսի տպաւորութիւն էր, որ սարքը մի 5-6 անգամ մեծ էր դրանցից ու շատ աւելի պայծառ: Այդ եւ հետագայ մի 6-7 գիշեր յաջորդեց դիտել այն: Սարքն անշարժ կախուած էր, իսկ առաւօտները, ժամը 7ն անց կէսին, երբ երկնակամարը լուսաւորւում էր արեւի լոյսով, անհետանում էր: Այդ ընթացքում նա իր «հերթապահութեան» վայրը կարճ ժամանակով տեղափոխեց դէպի հիւսիս, դանդաղօրէն մօտենալով իր ուղու գէնիթին: Շողիկը մտովի հակաճառեց թերահաւատներին, որոնք պնդում էին, որ դա աստղ է, կամ մոլորակ, ասում էին,

որ տարուայ այդ ամսին երկնակամարին շատ պայծառ է փայլում ժիւպիտէրը, որն իր գէնիթում մօտենում է Լուսնին: Բայց Շողիկի տեսած մարմինը չարժուում էր արեւմուտքից դէպի հիւսիս-արեւելք՝ հակառակ երկնակամարին կատարուող շարժման կանոններին:

Բնականաբար, ոչ Շողիկը, ոչ էլ նրա ընկերներն ու տնեցիները ոչ մի հետեւութիւն չէին կարողանում անել, որովհետեւ պաշտօնական տեղեկատուութիւն այդ մասին չկար, իսկ Շողիկը համոզուած էր, որ նրանք աշխատում էին:

Այսպէս, 15 օր շարունակ, Շողիկը դիտում էր, ինչպէս եկուորները աշխատեցին Երեւան քաղաքի երկնակամարի հիւսիս-արեւմուտք գծով, մերթ-մերթ տեղաշարժւելով, իսկ հիմնականում՝ անշարժ կախուած վիճակում, մինչեւ երկրաշարժը: Երկրաշարժից յետոյ էլ նրանք աշխատեցին մինչեւ Նոյեմբերի 7ը: Իսկ թէ երբ էին սկսել, Շողիկը չգիտէր, որովհետեւ չէր տեսել:

Վանայ երկրաշարժի նախորդ գիշերը, այսինքն 2011 թուականի Հոկտեմբերի 21ին, ինչպէս նաեւ երկրաշարժի օրը, նրանք աւելի վաղ երեւացին եւ առաւօտեան էլ, արեւի լոյսով լուսաւորուած երկնքում պայծառ փայլում էր նրանց սարքը:

Հետագայ գիշերներին սարքը այլեւս չերեւաց:

Շողիկը հեռուստացոյցով տեսաւ, որ Վանայ լճի ջրի մակարդակը երկրաշարժից յետոյ իջել է մէկ մետրով: Յոյց էին տալիս ափով մէկ այդ մէկ մետր բարձրութեամբ թաց ուղղահայեաց հատուածը: «Տեսնես քանի խորանարդ մետր ջուր կորաւ, ո՞ր ուղղութեամբ գնաց: Ի՞նչպէս եղաւ, որ ջրի կորուստը դադարեց», - մտածում էր Շողիկը:

Շողիկի տատն ու պապը վանեցի էին: Երբ թօն օր էր լինում, տատը իր անգօր աչքերը գցում էր օդում կախուած մառախուղին ու երեւանեան պատշգամբին կանգնած, Վանայ կողմը նայելով, ինքն իրեն ասում էր. «Մըկը տառեխ ծովում խաղալի...է»:

- Էհ, Մարիամ տատ ջան...,- հոգոց էր հանում Շողիկը:

Վանայ երկրաշարժից յետոյ Շողիկի բոլոր մտերիմները համաձայնեցին նրա հետ, որ այլմոլորակայինները յատուկ եկել էին կառավարելու տարերքը ի նպաստ Երկրի ու մեղմացնելու նրա կործանարար ուժը:

Երեւան

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՈՒԵՍՏԸ 19ԻԴ ԴԱՐՈՒՄ ԵՒ ՋԻՒԱՆԻՆ

Աւելի քան վեցդարեայ պատմութիւն ունեցող հայ աշուղական երգարուեստը անցել է երկու փուլ: Առաջին փուլը, որը կարելի է պայմանական անուանել, աւանդական կամ ընդհանուր արեւելեան՝ 15 դ. սկզբնաւորումից մինչեւ 19 դ. կէսերը եւ բուն հայկական ազգային փուլ՝ 19 դ. երկրորդ կէսից մինչ այժմ: Երկրորդ փուլը յիշաւի սկզբնաւորում է մեծանուն աշուղ Զիւանիով:

Հանրայայտ «Կուռնկ» երգի հնագոյն թուրքերէն տարբերակներից մէկի հեղինակ՝ Ղուկ-օղլի Երզնկացուց, որն ապրել է 15 դ., մինչեւ Զիւանին ընկած ժամանակաշրջանում, ստեղծագործել են հարիւրաւոր հայ աշուղներ՝ գերազանցապէս թուրքերէն լեզուով: Միայն թուրքերէնով ստեղծագործող հայ աշուղների թիւը հասնում է ինն հարիւրի¹: Եղել են նաեւ աշուղներ, որոնք ստեղծագործել են միաժամանակ մի քանի լեզուներով՝ հայերէն, վրացերէն, պարսկերէն,

քրդերէն եւ այլ լեզուներով:

Այլ լեզուներով ստեղծագործող ազգութեամբ հայ աշուղները երգերում գերազանցապէս պահպանել են հայկական միջավայրն ու ազգային նկարագիրը: «Բայց հետաքրքիրն այն է, որ նոյնիսկ օտար լեզուներով յօրինուած երգերում հայ աշուղները պահպանում էին իրենց ազգային դէմքը», - նշում է աշուղագէտ Հ. Սահակեանը²: Միեւնոյն ժամանակ անփոփոխ է, հարկաւ, արեւելքի պարսկա-արաբականի եւ հետագայում թուրքականի ազդեցութիւնը հայկական աշուղական երգարուեստի վրայ, թէեւ այն կրել է հիմնականում ձեւական բնոյթ: Խնդիրը վերաբերում է առաւելապէս օտարալեզու եզրերի գործածելիութեանը (կաղապարներին):

Աշուղագէտ, երաժշտագէտ Ն. Թահմիզեանի տեսակէտն աւելի որոշակի է. «Հայ աշուղների կիրառած տաղաչափական օտարոտի ներմուծումներ եւ կամ

մինչ այդ գոնէ տարբերակուած տեսքով չկենցաղավարած սկզբունքային նորոյթներ չեն եղել հայ մշակոյթի ծիրէն ներս»³: Աւելին, Ն. Թաճմիզեանը վկայակոչելով Խ. Ամիրեանի ուսումնասիրութիւնն, ընդգծում է, որ արդի խօսակցական գրական թուրքերէնում հայերէնից փոխառեալ 223 բառերից 25ը հայ ժողովրդական պարերի անուանումներ են⁴:

Ն. Թաճմիզեանը եկաւ ճշդելու, ամբողջացնելու այդ տեսակէտը, որն առաւելապէս պաշտպանում ու քարոզում էր Գ. Լեւոնեանը, եւ որը գրում է. «Աշուղական տաղաչափութիւնն ուրոյն տաղաչափութիւն է. նրա սկզբնական, մայր ձեւերը՝ իրենց կանոններով արաբական եւ իրանական ծագում ունէին: Հետագայ դարերում այդ ձեւերը, անցնելով մերձարեւելեան միւս ժողովուրդների մէջ - թիւրք, ուզբեկ, քուրդ - հայ աշուղներն ընդունել են նրանց չափերն ու կանոնները, նաեւ ենթարկել որոշ փոփոխութիւնների, հնարելով նոյնպէս նոր ձեւեր եւ բարդ ձեւեր»⁵:

Աշուղագէտ Այ. Փոլատեանը խորապէս գիտակցելով հայ աշուղական երգարուեստի վրայ օտար ազդեցութիւնների հարցի դժուարութիւնը, գրում է հետեւեալը. «Երկրորդ (մերժում ենք նրա առաջին պատճառի բացատրութիւնը, որ բոլոր կարեւոր տարրերը «լոյս աշխարհ չեն բերուած»)՝ որ Մերձաւոր Արեւելքի (Կովկասեան լեռնաշղթայէն՝ Սուէզ, Սեւ ծովէն Պարսից Ծոց, Մարմարայէն Կասպից ծով) ժողովուրդներու երգերուն մէջ՝ հասարակական



ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ (ՍԵՐՈԲ ԼԵՒՈՆԵԱՆ)

ընդհանուր գիծ մը կայ ոսկի երիզի մը պէս ցոլցւան, որ անկարելի կը դարձնէ վճռական խօսք ըսելու ոեւէ մէկուն ի նպաստ»⁶:

17-18 ըդ դդ. եւ ապա 19 ըդ դ., ըստ աշուղագէտ Գ. Լեւոնեանի, բուն հայկական միջավայրում ձեւաւորուել, զարգացել եւ կենցաղավարել են երեք աշուղական դպրոցներ.

1. Նոր Աուղայի՝ պարսկա-հայկական, 17 ըդ դ. պարսկահայ բարբառով,
2. Թուրք-հայկական, 18 ըդ դ., թուրքերէն եւ հայերէն,
3. Վրացա-հայկական, 18 ըդ դ., թիֆլիսի բարբառով:

Հետագայ ուսումնասիրութիւններում Գ. Լեւոնեանը նոր անուանումներ է յաւելում՝ Շամախի, Դերբենտ, Աստրախան, Կարս, Ղարաբաղ, Զանգեզուր (Ղարաբաղի, Շամախու բարբառով)⁷, բայց դրանք ըստ էութեան Գանձակի դպրոցին են պատկանում եւ ազգագրական ու լեզուի-բարբառի առումով առանձին դպրոց չեն ներկայացնում:

Մ. Ղ. Աղայեանը աշուղական դպրոցները ներկայացնում է Գ. Լեւոնեանից տարբեր անուանումներով. Նոր Զուղայի, Պոլսի, Թիֆլիսի, Գեանջայի, Երեւանի եւ Շիրակի⁸: Այս դասակարգումը համարում ենք աւելի ճիշդ, բայց թերի: Ըստ որում, Մ. Աղայեանը մատնանշում է դպրոցների առաւել տաղանդաւոր աշուղների անունները. Սաֆար-օղլի, Ղուլ-Արուսթիւն (Նոր Զուղա), Արթին, Քեչիշ-օղլի (Պոլիս), Սայաթ-Նովա (Թիֆլիս), Միսկին-բուրջի (Գանձակ-Կիրովաբադ), Շիրին (Երեւան), Զիւանի (Շիրակ-Ալեքսանդրապոլ-Լենինական):

Դժուար չէ նկատել, որ թուարկած դպրոցների ցանկից դուրս են մնացել Փոքր Հայքի, Ծոփքի շրջանների ստեղծագործող հայ աշուղները, որոնք իրենց միջավայրում, հանգամանքների բերումով եղել են յայտնի ու սիրուած: Մեր ձեռքի տակ եղած նիւթը թոյլ է տալիս կանգ առնելու Զէյթունի եւ Արաբկիրի աշուղական դպրոցների պատմութեան վրայ:

Զէյթունի աշուղական երգերը տեղական բարբառով կոչուել են «աւաչներ»: Աւաչները բնութագրւում են ժանրային միօրինակութեամբ՝ սրանք դաստաններ են՝ վէպ, պատմութիւն, գլխաւորապէս թուրքալեզու. մեզ է հասել նաեւ մի երգ՝ Զէյթունի բարբառով: Զէյթունի աշուղական երգերն ընդգրկում են մէկ դար տեւած ժամանակամիջոցում տեղի ունեցած զէյթունցիների մղած ազատագրական կռիւները ընդդէմ թուրքական բռնապետութեան: Երգերը պահպանւել են Զէյթունին նուիրուած պատմա-

կան, աշխարհագրական աշխատութիւններում, ինչպէս նաեւ երգերի հեղինակների՝ աշուղների անունները: Ինչպէս վկայում են աղբիւրները Զէյթունի երգերի թուրքալեզու լինելը ընդհանուր քաղաքական պատճառաբանութիւնից բացի ունի նաեւ գործնական պատճառ. նրանք ըստ աւանդոյթի երգւում էին մարտի դաշտում՝ թշնամուն դէմ առ դէմ⁹:

Զէյթունի պատմութեամբ զբաղուողները գրի են առել երգերի որոշ նմուշներ՝ հայերէն թարգմանութեամբ, որոնցում յիշատակւում են երգերի հեղինակ-աշուղները. «Ազիզ փաշայի տասթանը» (հեղինակ՝ Ղուլ-խայալ)¹⁰, «1780-էն սկսեալը» (աշուղ Խայիլ)¹¹, «Պապիկ փաշայի վրայ» (էլֆազ)¹², «Զէյթունի գովասանքը» (աշուղ Ֆերի)¹³, այնուհետեւ նշւում են՝ Ղուլ-Տաւութ, Կարապետ Տէր-Յակոբեան եւ այլք:

Զէյթունի ազատագրական կռիւների արձագանգը եղել է այնքան մեծ, որ երգեր են ստեղծուել ու երգուել ոչ միայն տեղի աշուղների կողմից, այլեւ հայ նշանաւոր բանաստեղծների՝ Մ. Պէլիկթաշեանի, Ս. Շահագիզի եւ այլոց կողմից:

Արաբկիրի երգերը աչքի են ընկնում բազմաթեմայնութեամբ ու հայալեզու ստեղծագործութիւնների քանակով: Այս առումով Արաբկիրի աշուղներին կարելի է համեմատել Արեւելեան Հայաստանում ստեղծագործող աշուղների հետ, որոնք յօրինում էին նաեւ իւրաքանչիւրն իր ազգագրական շրջանի բարբառով (խօսուածքով): Արաբկիրի աշուղների երգերը համեմատելի են արեւելա-

հայ աշուղների հետ նաեւ լեզուի ու բազմաթեմայնութեան առումով:

Սայաթ-Նովայի գրեթէ հասակակից Խրիտարն ասում է.

Գաս մերը սիրելիս սրտիկըս հովես,
Վա՛տես լեկնոց, մեռնիմ, անունըս
գովես,

Տանիս Խրիտարը ձեռքորդ թաղես,
Իյնաս հալքիս վրայ լիւն ու այն ու
սէ (լաս)¹⁴:

Խրիտարի այս տողերը տանում է ընթերցողին Սայաթ-Նովայի սիրոյ գմայլելի, կախարդական աշխարհը.

Սայաթ-Նովէն ասաց՝ Արգ անիմ Խանին.

Ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սրպանին,

Հեմչանք ըլի, եա՛ր, գաս իմ գերեզմանին,

Ածիս խուղն վրբես ափով, նազանի¹⁵:

19 դ. Արաբկիրում ապրել եւ ստեղծագործել են Սել-սեֆիլին, Ֆաւզին, Շեւք-իային, Պրոյենց Առմոնին, որոնց երգերից մեզ հասել են միայն պատառիկներ¹⁶:

Թուարկած դպրոցներին պատկանող աշուղների ստեղծագործական սկզբբունքները եղել են միեւնոյնը՝ ընդհանուր արեւելեան: Տարբերութիւնը վերաբերում է աշխարհագրական հասարակական, քաղաքական ու էթնիկական միջավայրի ու աշուղի փոխյարաբերութիւններին:

Հայկական մշակոյթը հնարաւոր չէ տարանջատել աշխարհագրական միջավայրից, ժամանակի քաղաքական, հասարակական իրողութիւններից: Այդպի-

սին է հայ ժողովրդի ճակատագիրը: Ինչպէս անուանի երաժշտագէտ Մ. Բրուտեանն է դիտարկել եւ բազմիցս մատնանշել, որ մենք եւս արեւելք ենք, հայկական արեւելք: Կարեւոր ու դժուարագոյն խնդիրը զատորոշուելն էր, յատկապէս աշուղական երգարուեստի ասպարէզում, որն ինչպէս ծագումով, այնպէս էլ էութեամբ ընդհանուր արեւելեան երեւոյթ է: Ո՞րն է ելքը. «Ելքը մէկն էր, փնտռել ու գտնել հենց արեւելեան երաժշտութեան մէջ հայկականի մայր երակն իր ինքնատիպութեամբ ու լեզուական անաղարտութեամբ, յենուել ինքնաստեղծին, Ջիւանին ընտրեց այս դժուարին ճանապարհը եւ քայլեց առաջ՝ ականջալուր ազգայինը զգալու իր աստուածատուր շնորհին, ազնիւ ճաշակին, երաժշտական նրբին հոտառութեանը: Այդ երակը հայ գեղջուկ երգն էր, եւ որին նա ապաւինեց: Ջիւանին զարկ տուեց ինքնուրոյն, հեղինակային յորինումներին՝ հնարաւորութիւն տալով իրեն, երաժշտական վառ երեւակայութեամբ ու բնատուր տաղանդով ստեղծելու սեփական երաժշտական լեզու՝ հայ երգի ազգային ինքնատիպութեան շրջանակներում»¹⁷:

Տուեալ աշխատանքի խնդրից դուրս է հայ աշուղական երգարուեստի նախաջիւանեան եւ Ջիւանու ու նրան յաջորդող, նրա հիմնադրած դպրոցի երաժշտա-մեղեդային ակունքների քննութիւնը: Մեր խնդիրն է աշուղի անյայտ, անտիպ երգերի տեղի ու դերի ճշգրտմը Ջիւանու թողած ողջ ժառանգութեան մէջ, բանասիրական քննու-

Թիւնն, ու բնութագրումը, բայց հարկ համարեցինք մէջբերել Մ. Բրուտեանի վերոյիշեալ կարծիքը, անհրաժեշտ համարելով լրացնել այն: Խօսքը վերաբերում է Զիւանու ողջ ժառանգութեանը:

Ուսումնասիրելով Զիւանու երգերի երաժշտութիւնը, վերլուծելով նրա մօտեցումները, ակնյայտօրէն պարզ է դառնում, որ նա հիմնուել է հայկական ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան հզօր հիմքերի վրայ, որով շատ կարեւոր մի քայլ արուեց հայ աշուղական երգարուեստի պատմութեան մէջ. վերջնականապէս եւ բացարձակապէս ազգայնացուեց հայ աշուղական մեղօնը, հաստատուեց ազգային լինելու իրողութիւնը:

Յայտնի է, որ աշուղական երգերն ստեղծւում էին արեւելեան լադերով եւ արեւելեան մտածողութեամբ: Բայց քանի որ երգերը հայերէնով էին երգւում, ուստի այդ երգերում առկայ էր հայկականութիւնը, թէեւ դրանք խառն էին եւ զուգահեռաբար զարգացող: Զիւանին դրանք վերջնականապէս ազգայնացրեց: Մի հանգամանք, որ հիմք է տալիս Զիւանուն համարել աշուղական արուեստի կոմիտաս:

Աշուղական երգարուեստը ծնունդ է առել մի միջավայրում, որը յագեցուած էր հայ ժողովրդական երգ-երաժշտութեամբ ու հայ հոգեւոր-եկեղեցական երգի հարուստ ավանդական ստեղծագործութիւններով: Ինչպէս նշուել է հայ որոշ աշուղագէտ-բանասէրների կողմից (Մ. Մկրեան, Գ. Յակոբեան, Շ. Գրիգորեան) մի կարեւոր հանգամանք, որը

վճռական ազդեցութիւն է գործել աշուղական երգարուեստի ազգային դիմագրծի վրայ:

Վերը կանգ առանք աշուղական դպրոցների գոյութեան հակիրճ պատմութեան վրայ, մասնաւորապէս նշեցինք, որ նշուած դպրոցների աշուղները ստեղծագործել են մեծ մասամբ թուրքերէն եւ այլ լեզուներով: Սակայն ասել, թէ բացարձակապէս այդպէս է՝ ճշմարտութեան դէմ մեղանշած կը լինենք: Իւրաքանչիւր աշուղ ստեղծագործել է նաեւ իր ազգագրական միջավայրում ընդունուած, գործածուող բարբառով, խօսուածքով: Այսպէս, Նոր Աուղայի դպրոցի աշուղները ստեղծագործել են պարսկահայ բարբառով, թուրքահայ աշուղները՝ արեւմտահայ, Թիֆլիսիներ՝ թիֆլիսահայ, Շիրակի աշուղները՝ Կարնոյ, Գանձակի՝ Ղարաբաղի, Շամախու, Երեւանի աշուղները՝ արարատեան: «Այս շրջանի (19րդ դ. առաջին կէս) աշուղական երգերը խայտաբղէտ էին իրենց լեզուով: ... Բայց դարի կէսերից նրանց համար հիմնականը դառնում է հայերէնը, թէեւ այստեղ էլ միասնութիւն չկար»¹⁸: Ահաւասիկ մի նմուշ պարսկահայ աշուղ Տէր Կարապետի (1814 - 1897 թթ.) երգից.

Երթանք մեր ձերմակ օթաղն,
Վեր դնենք գինու թաքաղն,
Խմենք գինի կանչենք տաղն,
Ըլնես համնաֆաս ինձի խետ¹⁹:

Հայ երգը կրօնի, լեզուի եւ գրի հետ միասին ազգապահպանման կարեւոր

գործօններից է: Տարանջատ, միմեանցից գրեթէ անկախ գոյութիւն ունեցող աշուղական երգը չէր կարող ծառայել ազգապահպանման գործին, գերազանցապէս մայրենի լեզուով գիտակցաբար ստեղծագործելու առաջնութեան պատիւը պատկանում է մեծահամբաւ Սայաթ-Նովային: Բայց Սայաթ-Նովան յօրինել է Թիֆլիսի բարբառով: Աշուղ Շիրինի (Յովհաննէս Կարապետեան, 1827 - 1856 թթ.) որոշ երգերի լեզուն աւելի մօտ է հայ նոր գրական լեզուին:

Այգեպան, ի՞նչ ես անում, շամբը
բուրաստան չի լինիլ,
Օձի որքան գեղեցիկն ըլնի՝ սիրական
չի լինիլ,
Կատուին ուտացնես օրը հազար նազ
ու նամաթ,
Տիրասէր ու բարեսիրտ, յայտ է՝ իբր
շան, չի լինիլ²⁰:

Շիրինի դպրոցի աշուղները դեռ շարունակում էին յօրինել մեծ մասամբ թուրքերէն լեզուով, որը հետզհետէ սկսեց իր տեղը գիջել հայերէնին:

19րդ դ. առաջին տասնամեակներում Արեւելեան Հայաստանի Ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ անցնելը մեծ նշանակութիւն ունեցաւ: Բանն այն է, որ հազարաւոր հայեր Պարսկահայաստանից ու Արեւմտեան Հայաստանից տեղափոխուեցին Արեւելեան Հայաստան, բերելով իրենց հետ այլ լեւալլ արհեստների, ինչպէս նաեւ աշուղական երգարուեստի արդէն իսկ կայունացած դպրոցների աւանդներ²¹: Սա-

կայն այդ իրողութիւնը պէտք չէ գերազնահատել:

«Սայեաթ-Նովա» աշխատութեան հեղինակ Հ. Զաւրիյեանը վկայակոչելով Շոպէնին նշում է, որ «Երեւանի խանութիւնը Ռուսաստանին միացնելիս այն տեղի արձանագրուած 96 աշուղներից 85 հայեր էին»²²:

19րդ դ. երկրորդ կէսին հայ հասարակական կեանքը համակուած էր Ռ. Պատկանեանի մարտաշունչ բանաստեղծութիւններով, Խ. Աբովեանի, Բաֆֆու վէպերի հայրենասիրական գաղափարներով: 1852 թ. Մոսկուայում լոյս էր տեսել եւ բարձր գնահատականի արժանացել Գ. Ախուերդեանի «Գուսանքը» (Սայաթ-Նովան), Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» (1856 թ., Ս. Պետերբուրգ) Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանցի «Նոր քնար Հայաստանի» երգարանները (1856-1859 թթ., Մոսկուա), այնուհետեւ Մ. Միանսարեանցի «Քնար հայկական» ժողովածուն (1868 թ., Ս. Պետերբուրգ), որոնցում գետեղուած էին մեծ թուով աշուղական երգեր, հեղինակների վերաբերեալ կենսագրական բնոյթի տեղեկութիւններով հանդերձ: Հայ հասարակական կեանքում որոշակի դրական վերաբերմունք էր ձեւաւորուած աշուղական երգարուեստի, այն ստեղծող կրող ու կիրառողներին՝ աշուղի կերպարի հանդէպ: Սակայն կար մի խոչընդոտ, որը արգելակում էր աշուղական երգի մատչելիութեանը՝ լեզուն էր: «Այստեղ պարզուեց, որ ոչ թէ համը թուրքերէնի մէջն է, այլ եղանակների, թուրքերէն բառերը, որ շատերը չէին

հասկանում, չատ անպէտք, համարձակ ու սիրոյ երգեր են եղել արեւելեան տուփական բնաւորութեամբ»²³:

19րդ դարում, մինչ Զիւանու հանդէս գալը, աշուղները շարունակում էին իրենց երգերը յօրինել մեծ մասամբ թուրքերէն լեզուով: Խօսքը յատկապէս վերաբերում է Շիրակի աշուղներին: Զիւանին նոյնպէս իր ստեղծագործական կեանքի արշալոյսին յօրինել է թուրքերէն: Արեւելահայ գրական լեզուն այդ ժամանակաշրջանում իր հաստատման գործընթացի շրջանակներում էր: Այն ամրապնդուեց ու զարգացաւ արեւելահայ գրականութեան էջերում: Հայ ժողովուրդն ապրում էր ազգային զարթոնք ու ինքնահաստատման գաղափարի վերելք, իսկ արեւելահայ գրական լեզուն իր դրսեւորումներով պէտք է նպաստէր եւ նպաստում էր այդ գործընթացին: Աշուղական երգը նոյնպէս այս գործընթացի մէջ էր յանձին աշուղ Զիւանու:

Զիւանին ոչ միայն իր ժամանակի ծնունդն էր իբրեւ ստեղծագործող, այլեւ ինքը եւս որոշակի ազգանպաստ ազդեցութիւն էր թողնում արթնացող, իր ազգային արժանապատուութիւնը գիտակցող հայ հասարակութեան, հայ ժողովրդի վրայ:

1871 թ. Զիւանին հաստատուում է աշուղների ոստան Ալեքսանդրապոլում: Նրա հիմնական հանդէս գալու ասպարէզը Տալոյեանների սրճարանն էր: Այս ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում գործում էին երեք մեծ սրճարաններ. Տալոյեանների, Հայկազունիների

եւ Կուզիկենց²⁴: Այս սրճարաններն ունէին իրենց մշտական աշուղ-երգիչների խմբերը, այստեղ էին հանգրուանում ու ելոյթ ունենում դրսեկ աշուղները:

Ալեքսանդրապոլի աշուղների երգացանկի լեզուի ու ոճի վերաբերեալ հետաքրքիր վկայութիւններ կան ժամանակի մամուլի էջերում: «Գործածական էին այստեղ առհասարակ տաճկերէն երգերը՝ իսկ այժմ նորերի մէջ սովորական են հայերէն երգերը Կ. Պոլսոյ եւ Տփլիսու: Աշուղները սրճարաններում («ղահուէքում») միշտ տաճկերէն են երգում, այնպէս եւ հարսանիքներում. եւ ժողովուրդը մեծ ըղձով լսելիք է մատուցանում նրանց», - գրում է Յովհ. Խոջայեանցը²⁵ «Գիւմրի» յօդուածում²⁶: Յօդուածագիր Խոջայեանցին կտրուկ առարկում է նոյն Ալեքսանդրապոլից մի այլ թղթակից: «...Ալեքսանդրապոլը երբ ունեցել է իր մէջ թատրոն (չնորհիւ յարգուպատիւ Սիւնեցի Ալեքսանդրի Մելիք-Հայկազեան) եւ երբ թնդացրել թատրոնական բեմի վրայ ազգային երգերի արձագանգը, հենց այն օրից Ալեքսանդրապոլում աշուղները սկսել են երգել հայերէն, որովհետեւ հասարակութիւնը այդ մասին աւելի սէր եւ համակրութիւն է ցոյց տալիս»²⁷: Նոյն եւ յաջորդ համարում յօդուածագիրը ներկայացնում է Զիւանու տասնմէկ երգերը: 25 ամեայ Զիւանին 1871 թ. արդէն անուն հանած հեղինակութիւն ու յարգանք վայելող աշուղ էր: Շեշտենք, որ Ալեքսանդրապոլից սկսւում է աշուղ Զիւանու յաղթական երթը:

Զիւանու շրջադարձային նշանակու-

Թիւն ունեցող դերակատարմանը բացառիկ ճշմարիտ գնահատական է տուել որդին՝ Գարեգին Լեւոնեանը: «Ինչպէս մի կռուի ժամանակ, երբ հակառակորդի այս կամ այն կողմը թուլանում է ու սպառնում է վտանգ, երբ առաջաւորի ընկնելով նոր ուղեցոյցի պահանջ է գզացւում, այդպէս էլ մեռած Սայաթ-Նովայի եւ Շիրինի թուլացած ու միմեանցից անմիաբան ցրուած ուժերին հարկաւոր էր մի նոր մարդ, որ գործի գլուխ անցնէր, հաւաքէր ցրուած ուժերը, սէր ու հոգի ներշնչէր ու մեծ ուժով տապալէր թշնամուն: Այդ եղաւ Զիւանին ու տարաւ փառաւոր յաղթանակը կոպիտ ու զօրաւոր թշնամու - թուրքերէնի դէմ»²⁸:

Մայրենի լեզուի կատարեալ իմացութեան, չենք խօսում աշուղական երգարուեստի կանոններին տիրապետելու եւ հմուտ կիրառելու մասին է վկայում աշուղի սկզբնական շրջանի ստեղծագործութիւններից «Ով սիրտ իմաստութեան...» սկզբնատողով երգը, որի մի քառատողը ստորեւ բերւում է:

Կատարեալ վարք՝ հանդարտ անուն
ունեցող,
Ուղիղ կրօն՝ ազգի արիւն ունեցող՝
Բաղդ ու շնորհք՝ գեղեցկութիւն
ունեցող,
Մարդուն՝ թագաւորից պակաս
չեմ ասի²⁹:

1871 թ. Զիւանին հաստատուելով Ալեքսանդրապոլում՝ անմիջապէս մխրճւում է հայաշատ, ազգային-հասա-

րակական խնդիրներով, հոգսերով ապրող քաղաքի կեանքի յորձանուտը:

Վերը նշուեց այն մասին, որ հայ հասարակութիւնը ընդհանրապէս դրական վերաբերմունք ունէր աշուղական արուեստի, աշուղի անձի, դերի հանդէպ: Հրատարակուած ժողովածուները դրա ապացոյցն են: Նոյնը նաեւ ժամանակի մամուլի էջերում լոյս տեսած աշուղական երգերն ու աշուղների վերաբերեալ տեղեկութիւնները³⁰: 19րդ դ. 70ական թթ. հանդէս եկող հայ գրողները իրենց անուանում էին աշուղ՝ ժողովրդի ծառայ «խալիսի նոքեար»: Բանաստեղծ Ռ. Պատկանեանը տպագրւում էր աշուղ Կարապետ մականունով³¹, Պ. Պռօշեանը՝³² Սօս: Ղ. Աղայեանը «Յարութիւն եւ Մանուէլ» վէպի կառուցուածքում ներկայացնում է երկու աշուղի մրցման մի գեղեցիկ դրուագ³³:

«Մի խօսքով, աշուղը ժողովրդի ժամանակագիրն է ու արձագանգը», - իրաւամբ գրում էր Գ. Լեւոնեանը³⁴ աշուղի դերի ըմբռնման ու բնորոշման կապակցութեամբ, մի բնորոշում, որն աւելի ընդգծեց աշուղ Զիւանու եւ նրա՝ ազգային աշուղական դպրոցի քաղաքացիութիւնը:

Մեծանուն բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը Զիւանուն նուիրուած բանաստեղծութեան մէջ իրեն անուանում է աշուղ Յովհաննէս: Ա. Իսահակեանն իր սիրած երգերի մի շարքն անւանել է «Աշուղի խաղեր»³⁵ եւ այդ վերնագրի տակ էլ տպագրել իր բոլոր ժողովածուների մէջ («Աշուղի խաղեր»)³⁶: Տարիներ անց բանաստեղծը չի հրաժարուել

իր «աշուղ» կոչումից, ստեղծագործութիւնները վերնագրելով «Դատարկուն աշուղի բայաթիներէից»³⁷, իսկ հայդուկային բանաստեղծութիւններգերը ստորագրել է՝ Հայ-Գուսան անուամբ: Աւ. Իսահակեանը ծնունելով ու իբրեւ անհատ ձեւաւորուելով աշուղների ուստանում՝ Գիւմրիում կրել է աշուղական երգարւեստի զգալի ազդեցութիւնը: Նա, ինչպէս նշում է Լեւոնեանը իր յուշերում, ծանօթ է եղել քաղաքի նշանաւոր աշուղների երգերին, մասնաւորապէս Զիւանու, նրա որդիների հետ անձնական մտերմութիւն է ունեցել: Իսկ Յովհ. Թումանեանը յատուկ վերաբերմունք է ունեցել³⁸ Զիւանու նկատմամբ: Նրա «Իմ սիրած երգիչ աշուղ Զիւանին»

ստեղծագործութիւնը, գրուած 1892 թ., կարծես հաստատում, կանխորոշում է երկու մեծ հայերի ներքին հոգեկան կապն ու հոգեհարազատութիւնը:

Սիրելի Զիւան, ընկերդ իմ հոգու,
Մարդկային սիրտը հասկանում ես դու,
Եւ քո ձայները երգիդ հարազատ,
Լի են յուզմունքով անկեղծ եւ ազատ...
Երբ հայրենիքն է քո երգում խօսում,
Կամ նրա վհատ որդին արտասում,
Զարթնում է իմ մէջ խոր վիրաւորուած
Հպարտութիւնը իմ հզօր նախնեաց...
Բայց, ասա՛, ինչո՞ւ դու սէր երգելիս,
Ինձ վրայ տանջող թախիծ է գալիս³⁹:



ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Հայ նոր գրականութեան պատմութիւն, Հ. III, Երեւան, 1962, էջ 714:
2. Հայ աշուղները XVII XVIII դդ., կազմեց Հ. Սահակեանը, Երեւան, 1961, էջ 19, Տե՛ս նաեւ Ծ. Գրիգորեան, Հայոց հին գուսանական երգերը, Երեւան, 1971, էջ 205:
3. Ն. Կ. Թահմիզեան, Սայեաթ-Նովան եւ գուսանա-աշուղական երգ-երաժշտութիւնը, «Դրազարկ» հրատ., 1995, էջ 49:
4. Ն. Կ. Թահմիզեան, նշ. աշխ., էջ 55:
5. Գ. Լեւոնեան, Աշուղները եւ նրանց արուեստը, էջ 87:
6. Ա. Փոլատեան, Արաբկիրի երաժշտութիւնը, Նիւ-Եորք, 1969, էջ 208:
7. Գ. Լեւոնեան, Աշուղները եւ նրանց արուեստը, էջ 41:
8. Մ. Աղայեան, Հայ գուսանները եւ գուսանա-աշուղական արուեստը, Երեւան, 1959, էջ 7:
9. Ա. Ղազիյեան, Զէյթունի երգեր, Լրաբեր Հասարակական գիտութիւնների, 1969, ? 11, էջ 101:
10. Զէյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, Փարիզ, 1901, էջ 85:

11. Ձէյթունցի, նշ. աշխ., էջ 119:
12. Ձէյթունցի, նշ. աշխ., էջ 85:
13. Ձէյթունցի, Ձէյթունի անցեալէն եւ ներկայէն, մ. Բ, Փարիզ, 1903, էջ 77:
14. Ա. Փոլատեան, նշ. աշխ., էջ 241:
15. Սայաթ-Նովա, Հայերէն, վրացերէն եւ ադրբեջաներէն խաղերի ժողովածու, կազմեց Մօրուս Հասրաթեան, Երեւան, 1959, էջ 29:
16. Ա. Փոլատեան, նշ. աշխ., էջ 223-225:
17. Մ. Բրուտեան, Ձիւանու երաժշտական լեզուի ժողովրդական ակունքները, Աշուղ Ձիւանու ծննդեան 150-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երեւան, 1996, էջ 55:
18. Հայ ժողովրդի պատմութիւն, հ. V, Երեւան, 1974, էջ 642:
19. Լ. Գ. Մինասեան, Փէրիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 99:
20. Տէս՝ Շ. Գրիգորեան, Հայ աշուղական գրականութեան պատմութիւն, Երեւան, 2002, էջ 203:
21. Կ. Դուրգարեան, Շիրակի հայ աշուղները, Երեւան, 1986, էջ 4:
22. ՎէՄ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, Յովհաննէս Զաւրիեան, Սայաթ-Նովա, էջ 33:
23. Գրասէր [Գ. Լեւոնեան], Հայկական այժմեան քնարերգական բանահիւսութիւնը, Հանդէս գրականական եւ պատմական, Մոսկուա, 1896, էջ 299:
24. Կ. Սեղբոսեան, Արհեստաւորական աւանդոյթները եւ դրանց արտայայտութիւնները լեւինականցիների կենցաղում, Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, պր. 6, Երեւան, 1974, էջ 231:
25. Հ. Խոջայեանց, Գիւմրի, «Արարատ» հանդէս, 1871, թիւ 7, էջ 346:
26. Ձիւանին Հ. Խոջայեանցին է նուիրել «Խելքի աշեցէք» երգը (Ձիւանու քնարը, Երեւան, 1959, էջ 511):
27. Կ. Մատինեանց, Բանաստեղծ եւ հիւսուածք Ձիւանի, «Արարատ» հանդէս, 1871, թիւ է, էջ 415:
28. Ազգագրական հանդէս, գ. X, Թիֆլիս, 1902, էջ 68:
29. «Արարատ» հանդէս, 1871, թիւ Ը, էջ 473:
30. Հ. Սահակեան, Հայ աշուղներ. XVII XVIII դդ., Երեւան, 1961, էջ 372-377:
31. Գ. Լեւոնեան, Երկեր, Երեւան, 1963, էջ 489 (ծան.):
32. Նոյն տեղում: Վերջինիս 16 երգերը «Սօս» ծածկանունով տպագրուել են 1876 թ. «Սոխակի» Յրդ համարում, Լեւոնեան Գ., Երկեր, Երեւան, 1963, էջ 489:
33. Ղ. Աղայեան, Ընտիր երկեր, Երեւան, 1965, էջ 536-540:
34. Գ. Լեւոնեան, Երկեր, Երեւան, 1963, էջ 27:
35. Գ. Լեւոնեան, Հուշեր, Երեւան, 1959, էջ 109:
36. Ա. Իսահակեան, Երկերի ժողովածու, հ. 1, Երեւան, 1973, էջ 391, 392:
37. Ա. Իսահակեան, Երկերի ժողովածու, հ. 1, Երեւան, 1973, էջ 405-406:
38. Գ. Լեւոնեան, Յուշեր, էջ 109-114:
39. Թ. Թումանեան, Երկերի ժողովածու, հ. 2, 1969, Երեւան, էջ 106:

ՄԱՀՈՒԱՆ 25ԱՄԵԱԿ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Արամ Հայկազ ամէն բանէ առաջ մարդ մըն է, իր ներկայացուցած տիպարներուն կողքին, չ'անջատուիր անոնցմէ, զանոնք չի ստեղծեր որպէսզի զանոնք օգտագործէ գաղափար մը արտայայտելու համար: Տեսակէտ մը պաշտպանելու համար չի գրեր:

Ինքնատիպ տաղանդ մը, որ չէ խամրած կեանքի ահաւորութեան մէջ, որ գիտէ հանդիսատեսը ըլլալ կեանքին, եւ երբ այդ մեծ թատրոնէն դուրս կու գայ, կը պատմէ, առանց մարգարէ ըլլալու յաւակնութեան: Բայց այս պատումը ձայնագրիչ սարքէ մը չ'արտագրուիր: Ան կ'անցնի իր ինքնատիպ տաղանդի բովէն, կ'ենթարկուի անոր ալիմիին, պատումը կը գրաւուի գեղեցիկով:


Իսկ այդ ալիմին բազմաթեւ է. տպաւորութիւններ՝ պահուած՝ կորսուած ծննդավայր-հայրենիքէ մը, ինքնապաշտպանութեան հերոսական կռիւէ մը՝ որ կը դրոշմէ պատանին, տեղահանութենէ եւ անոր ընկերացող ողբերգութիւններու ձգած ախօսներ, գոյութիւն պահելու համար բրտօրէն ապրուած արկածախնդրութիւններ, իր եւ իրեն պէս շատերուն սական, եւ իր արմատներէն հեռու՝ նոր աշխարհի մը պատշաճելու անտարազելի այլ տեսակի արկածախնդրութիւնը հայրենահանուածի:

Եւ կը մշակուի մարդոց միակութեան եւ անկրկնելիութեան վկայութիւնը:

Եթէ Արամ Հայկազ գեղանկարիչ ըլլար, պիտի ըսէինք, որ ՆԱՅԻՖ, (naïf) դպրոցին կը պատկանի, որ չի նշանակեր թէ ստեղծագործողը ինք այդպէս է, այլ այդպէս է աշխարհի եւ մարդոց վրայ պտտուցած իր նայուածքը: Ինչ որ մեզի կը բերէ, ԿԵԱՆՔԻն է, ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, իր պարզութիւններով եւ բարդութիւններով, որոնք միշտ եղած են, բոլոր երկինքներու տակ, նոյն եւ տարբեր: Հոգեբանական բարդ կացութիւններու վերծանումը չ'ըներ, որպէս գիտութիւն մեր առջեւ չի փռեր թատերական ողբերգութիւններ, նոյնիսկ եթէ անոնք այդպէս են, մեզ չի տանիր հոգեբանական-գիտական-տեսաբանական բարդ վերլուծումներու ճամբով, նոյնիսկ երբ դէմ յանդիման կը գտնուինք ախտավարակ կացութիւններու: Պարագաները մէկ առ մէկ են, ոչ բացառիկութեան առումով, այլ կացութիւնները չընդհանրացնելու միտումով: Այս պատճառով, ժամանակակից ուսումնական ընթերցողը կրնայ

այս գրականութիւնը արդիական չհամարել, ոչ Տոսթոյովսկի, ոչ Քաֆքա, ոչ Շահան Շահնուր, ոչ Զարեհ Որբունի: Երբեմն՝ միայն Եղուարդ Պօյաճեան: Ոչ ալ գեղարուեստական-բանաստեղծական մշակումը Համաստեղի:

Յատկանշական է Արամ Հայկազի պատումի եղանակը: Ան կը պատմէ այնպէս, որ մենք, երեկոյեան, աշխատանքէ վերադարձին, կրնանք պատմել ընթրիքի սեղանին շուրջ: Այլ ձեւ ալ չի կրնար ըլլալ, քանի որ իր հանդիպած մարդիկը, ոչ Կղէոպատրա են ոչ ալ Օգոստոս կայսր: Մեծ ճակատագիրներ չեն: Բորբոքած բախումներ չկան: Իր տիպարները ապրողներ են, առանց ահաւորութիւններու կամ ընթացիկի ծովերուն մէջ խեղդուելու, մարդիկ՝ որոնք չեն ազդեր պատմութեան ընթացքին վրայ: Վերացական չեն:



ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Վերացական չէ նաեւ ինք, քանի որ արմատներ ունեցած է, արմատախիլ եղած է, այդ յիշողութիւնը կը պահէ, միջազգային ըլլալու ոչ ուժը ունի ոչ ալ ցանկութիւնը: Հայ է պարզապէս, իր ժողովուրդի պատմութիւնը գինք ալ առած է իր յորձանքին մէջ, ինք չէ ընտրած, քաղաքականացածներու յանձնառութիւնը չէ իր հայութիւնը: Ոչ Ֆոլքլոր, ոչ հուստորութիւն, ոչ բարոյախօսութիւն: Վարձու առնուած հայութիւն չէ, կարգախօսներու կրկնութիւն չէ, այլ ներկայութիւն՝ առանց դրժումի:

Պատմութեան հանգուցային պահուն ծնած էր, 1900ին, իր ծննդավայր հայրենի քաղաքի, Շապին Գարահիսարի հերոսամարտը ապրած էր, աքսորի ելած է, որովհետեւ հոն էր: Վերապրելու բնազդով թափառած էր, հասած էր Ամերիկա, աշխատաւոր եղած է տպարանի մէջ: Ինչպէս ուրիշներու պարագային, աշխատանքը ամերիկայնանալու ճանապարհն է, կապկումներով, պատշաճեցումներով: Յաճախ այդ պատշաճեցումները տեղատուութիւն կը դառնան:

Բայց այս Արամ Հայկազը, ինչպէս իր սերունդէն շատեր, Ամերիկա բնակած է, Ամերիկա չէ ապրած: Հարկ է ըմբռնել տարբերութիւնը: Բնակելու-ապրելու ոճ մը՝ որուն հետեւորդները կը նուագին, ամէն օր քիչ մը աւելի կը նուագին: Կարդացած էք Շաւարշ Նարդունին, ամէնէն զտարիւնը մեր մտաւորականներուն, որ Փարիզ բնակած է, բայց շարականի վերածած է իր բնիկ Արմաշը, անոր փողոցները, աղջիկները, իր թուշին համբոյր դրոշմող հարսները: Կարդալ Համաստեղը... Վազգէն Շուշանեանը՝ որ փլուզուող ազգի մը տառապանքը կը վերածէ ընդվզումի:

Մեծ աղէտի սերունդը, կամ անոր հետեւող տարիներուն ծնած, Ծառուկեան կամ Մուշեղ Իշխան, ազգը, մայրենին, երազն ու կարօտը, ընդվզումը եւ գրականու-

Թիւնը վահանի վերածեցին, իրենց ինքնութիւնը ապացուցանելու համար: Հայաստանը չէր պաշտպանը, իրենք Հայաստանով կը պաշտպանուէին: Ներկայիս 180 աստիճանի փոփոխութիւն կայ. Հայաստան կը պաշտպանենք, բայց դադրած ենք մենք մեզ պաշտպանել: Ճիշդ պէտք է ընել տարբերութիւնը հասկնալու:

Կարդացէ՛ք Արամ Հայկազը, ոչ միայն Յեղին Ձայնը, ոչ միայն Քիւրտիստանի լեռներուն մէջ ապրուած սական, հերոսապատում մը առանց հերոսացման մը գոյներուն եւ աղմուկին, բայց նաեւ երբ օտար աստղերու տակ ծնած հայածնունդները, իրենց զաւակները, կը յաջողին, կ'ուսանին, կը տեսնէք կեանքի ոճ մը, դիմադրականի կռիւ, որ լեռները բարձրացած հայդուկներու կռիւը չէ, բայց տոկալու եւ տեւելու կամք մը: Ինքնապաշտպանութեան կռիւ մը, որ Շապին Գարահիսարի կամ Զէյթունի կռիւը չէր, բայց վերջին հաշուով նոյն տեղը կը տանէր. Հայ փրկելու: Այդ սերունդը անպայման վկայականներու չտիրացաւ, լեզուներ չսորվեցաւ, գրական դպրոցներու հետեւորդ չհամարեց ինքզինք, արդիականութեան կամ յառաջդիմական լուսապսակ կրելու համար, զարտուղութեամբ ինքնահաստատում փնտռելու: Մեկնաբանութեան կարօտ բարդ գրականութիւն չմշակեց, ինչ որ երբեմն կը փորձենք մեր ուղեղի բջիջները չարչրկելով, ինքնատպուլթիւն մը որսալու համար: Արամ Հայկազի գրականութիւնը շարունակուող կեանքը կը պատմէ, ողբերգութեանէն ետք արցունքը առանց սոսկ ընդունելի եւ ցուցադրելի ժառանգութիւն համարելու: Արամ Հայկազի գրականութեան մէջ կայ կեանքի աւիշը, պայծառ ու պայծառացնող ժպիտը, առանց ճիգի ինքնատիպ սրամիտ մը, որ հրաւէր կ'ուղղէ ժպիտով դիմաւորելու օրը:

Համեստութիւնը սրամտութեամբ կը դիմաւորէ Արամ Հայկազ, առանց հոգեկան բարդոյթի, երբ Մինաս Թէօլէօլեանի կը գրէ ինք իր մասին.

«Կը ներփակեմ կենսագրական ամփոփ տեղեկութիւններ: Ամփոփ չըլլալու ի՛նչ պատճառ ունիմ որ արդէն... Ո՛չ Մամիկոնեանց տունէն եմ, ոչ ալ Բագրատունեաց սերունդէն, այլ՝ Հայ, անգիջող հայ:

«Ծնած եմ Շապին Գարահիսար, 1900ի Մարտին: Հինգ եղբայրներու կրտսերն եմ: Հօրս անունը Զեքէմեան Արսէն էր, մօրս անունը՝ Իւղաբեր: Հայկազը՝ ինձմէ երկու տարու մեծ եղբօրս անունն էր. կցեցի Արամին ու գրչանուն եղաւ ան ինծի:

«Անառակութեան համար վտարուած էի մանկապարտէզէն ու չորրորդ դասարանին լքած՝ նախակրթարանը: Հոն Տարուինի վարդապետութիւնը սկսած էին աւանդել եւ զիս անաստուած պիտի ընէին: 1915ի ինքնապաշտպանութեան կռիւներուն բերդն էի եւ հետագային գրեցի այդ պատմութիւնը: Աքսորին՝ չորս տարի ապրած եմ արկածներով եւ ապրումներով հարուստ կեանք մը, Թուրքիոյ եւ Քիւրտիստանի լեռներուն մէջ: 1919ի Մայիսին փախայ եւ հասայ Պոլիս. ամիս մը կօշկակարութիւն ըրի ու երջանկութիւնս անխառն էր, երբ բազմաթիւ հօրաքոյրներէս վե-

ըստ իր արժեքների և կենսական փոփոխության դրա ուր «կաշի կրծող» չըլլամ: Մէկուկէս տարի ճրի յաճախեցի այդ հաստատութիւնը. Վերջին վեցամսեային, երրորդ կարգի մէջ ուսուցիչ ունեցայ Յակոբ Օշականը, որուն ձեռքը երբ կը սեղմէի, Ամերիկա մեկնումիս առիթով, պատուիրեց որ գրականութիւնը չմոռնամ:

«- Գրականութիւնը չմոռնա՛ս, մենք աղա...»

«-Այո՛ միւսիւ, ըսի, ու պահեցի խոստումս: Ան, իր մահէն առաջ նամակով մը օրհնեց զիս»:

Եւ Արամ Հայկազ, կեանքէն վրէժ լուծելու թափով, գրեց: Բեմ էր մամուլը: Ապա այդ էջերը ամփոփուեցան հատորներու մէջ: Յաճախ ըսած եմ, որ հայ հարազատ մամուլը, - խօսքը հարազատի մասին է եւ ոչ աղմուկի ու կազ ու կռիւի -, հանդիսացաւ հայ գրականութեան տնկարանը, շատեր իրենց գրական առաջին քայլերը հոն առած են, անցեալին աւելի շեշտուած կերպով, երբ այսօրուան պէս անմիջականը չէր խեղդած զայն:

Երբեք բաւարար չափով ընդգծած չենք ըլլար ինքնատիպ երեւոյթը: Տեղահանութիւն, դժբախտութիւն, տառապանքներ, իր խառնուածքին անյարիր աշխատանք, երբեք ստուեր չձգեցին կեանքը եւ գեղեցիկը սիրող, զուարթախոհ, լաւատես գրողի էջերուն վրայ, քանի որ, առանց ճառ խօսելու, մարդկայնական-humaniste բնատուր շնորհ ունէր:

Արամ Հայկազ տեւաբար հաղորդութեան մէջ է մարդոց հետ, ոչ լրագրական հաղորդակցութեան, երեւութապէս անհատներ, մասնաւորներ, բայց ոչ բացառիկներ, եւ անոնց ընդմէջէն կը գտնէ Մարդը, Մարդիկը, որոնք ունեցած են իրենց սէրերը, յիշատակները, ցանկութիւնները, ինչպէս իրենցմէ առաջ շատեր: Իր սրամտութիւնը, ինչ որ սովորաբար կը կոչենք հիւմոր կամ հիւմուր, մարդոց նկատմամբ սէր է, անոնց հետ ըլլալու ճիգ մը, որ քննադատութիւն կամ չարախօսութիւն չէ:

Այս կեանքը ժպիտով դիմաւորելու տաղանդը տխրութիւն եւ ցաւ ողբերգութեան չվերածելու ճանապարհն է:

Արամ Հայկազ տօնելու համար գիրքեր եւ թուղթեր կը քրքրէի: Առանց լաւատեսութեան, ի մտի ունենալով այն ցաւեցնող ճշմարտութիւնը, որ այսօր, քանի հոգի կը փորձուին բանալ եւ կարդալ էջ մը Արամ Հայկազի գիրքերէն: Ափսո՛ս, ամենուրեք, զանազան տեղատուութիւններով եւ անպատասխանատուութեամբ, մեր հաւաքական յիշողութիւնը կորսնցնելու ընթացքի մէջ ենք, եւ հարցում չենք ուղղեր մենք մեզի, թէ ի՞նչ պիտի պահենք եւ ի՞նչ պիտի կտակենք անոնց՝ որոնք մեր խնամքով պատրաստուած ըլլան կտակը ընդունելու: Դեռ չեմ խօսիր անոնց մասին, որոնք օտարացման եւ օտարման ճամբաներուն վրայ անհաղորդ պիտի ըլլան կտակին:

Տօնական օրերուն, տունէն դուրս գալ արկածախնդրութիւն է. մեծ ու պզտիկ աւազակներ կան, ինքնաշարժի արկածի հաւանականութիւնը բազմապատկուած

կ'ըլլայ, միջազգային տնտեսական տագնապը կը յուշէ հրաժարիլ ոչ-անհրաժեշտ ծախսերէ: Այդ պատճառով, անցեալի օժիտի հին կապոցները քրքրելու պէս, գիրքերու մտերմութիւնը կը փնտռեմ: Աւա՛ղ, անհետացող ազնուացնող սովորութիւն մը, ընդդէմ հեռատեսիլի եւ համացանցի մասնաւորաբար օտարաբարբառ կայսրութեան:

Հեղեղի պէս լուրեր տրուեցան երբ Ֆրանսայի Ազգային Ժողովը ցեղասպանութիւններու ուրացման քրէականացման որոշում քուէարկեց: Տարիներէ ի վեր հայոց ցեղասպանութիւնը փաստելու համար ուսումնասիրութիւններ կ'ըլլան, գիրքեր լոյս տեսան, դեռ կը շարունակուի այդ աշխատանքը՝ որպէս յիշողութեան պարտք՝ մեզի համար, եւ յիշեցում հեռուի եւ մօտի բարեկամներուն, բացի թուրքերէն, հեռուէն եւ մօտէն այդ ոճիրին առնչուողներուն, շահախնդիրներուն եւ Պիղատոսներուն: Դեռ մետասաներորդ ժամու իմաստուններ կ'ըսեն, որ հայ եւ թուրք պատմաբաններ թող նստին եւ խօսին: Ոչ ոք կրնայ դէմ ըլլալ երկխօսութեան, պայմանաւ որ ան չըլլայ խուլերու եւ համրերու անկարելի երկխօսութիւն:

Ինչո՞ւ շարունակել դար տեւած համրերու եւ խուլերու շատախօսութիւնը:

Կը զարմանամ որ դեռ փաստի կարիք ունեցողներ կան, գոհացնելու համար բոլոր անոնք որոնք գնդասեղին վրայ բազմաթիւ հրեշտակներ կ'ուզեն տեղաւորել, մեծանուն ժողովներու մէջ:

Տօնական օրերուն, գիրքերու մէջէն իր տօգունած կողքով գիրք մը երեւաց: Արամ Հայկազի վէպի նմանող պատումը. «Քիւրտիստանի լեռներուն մէջ»...

Քիւրտիստան, թէ՞ Հայաստան: Հարցում է...

Հոն հիմա քիւրտեր կ'ապրին, բայց բանաստեղծի գրածին պէս, պատին տակ ծաղիկներ կը բուսնին. «Վայրի ծաղիկ անունդ ի՞նչ է, ըսէ՛ մասուր թէ կակաչ է...»: Քիւրտիստանի պատին տակ հայ ծաղիկներ կը բուսնին, Ահէմտը եւ Մէհմէտը հողի խոր քունէն կ'արթննան եւ իրենք գիրենք կը վերակոչեն Ասատուր, Պետրոս, Պօղոս... Նոյնիսկ Ֆրանսական հռչակաւոր «Լը Մոնտ» թերթը անդրադարձաւ երեւոյթին, ինչ որ հողին վրայ պատմութեան շարունակութեան իսկական երաշխիքը կրնայ ըլլալ:

Կը կարդամ Արամ Հայկազի, տասնհինգ տարեկանին ապրած ողիսականի պատումը: Այսօրուան Տելեթիլի անուան տակ ապրած Ասատուրը, Պետրոսը, Պօղոսը, Արամ Հայկազի պատումներուն մէջ ցորենի հատիկներու պէս ասդին-անդին ցրուած հայ տղաքն են, անոնք որոնք կրցած են թաքնուիլ եւ ապրիլ: Միւսնե՞րը... անոնք որոնք չիջած են, անոնք որոնք չեն կրցած թաքնուիլ...

Փաստեր փնտռելու համար կարդալ Արամ Հայկազի գիրքը: Կարդալ այդ հայերէն գիրքերը, ըսելու համար որ կանք:

Բոլոր անոնք, որոնք կիսամիջոցներով բարդութիւնները կ'ուզեն լուծել, թող

կարդան այդ անսեթեւեթ էջերը, ոչ պատմութիւն, ոչ ամբոխները ոտքի հանող յեղափոխական գրականութիւն:

Իրաւութիւն եւ իրականութիւն:

Արամ Հայկազ քառորդ դար առաջ շիջած է: 1900ին ծնած, մահացած ութսունհինգ տարեկանին: Կտակած է իր վկայութիւնը: Լսողներ պիտի մնա՞ն, թէ վասն լաւ ապրելու սպառողական ընկերութեան վարդապետութեան, ժամանակավրէպ պիտի դառնան ե՛ւ Արամ Հայկազ ե՛ւ իր կտակը: Եթէ արդէն չեն դարձած: Թերեւս վերջին ընթերցողները եւ լսողներն ենք:

Բայց լսենք զինք:

«Ու հիմա մենք, անոնց մնացորդները, կին ու երախայ, կսկիծը սրտերնուս ու վախը մեր ուսին, տարագրութեան ճամբուն վրայ ենք: Ո՞ւր եւ ինչո՞ւ կը տանին մեզ՝ չենք գիտեր»:

Դրուագները կը խօսին արմատական բնաջնջման, չարչարանքի, կրօնափոխութեան եւ անխնայ ջարդի մասին: Այդ բոլորին անուն մը պէտք է տալ:

Պատմողը դժոխքէն անցած է, տեսած է, կը վկայէ:

Մարդը, որ կը վկայէ, ոչ չար է եւ ոչ ալ ահաբեկիչ:

Յունական ողբերգութեան թատրոն չի բեմադրեր:

Իւրաքանչիւր պատկեր ողբերգութեան ամբողջութիւնը լոյսի տակ կ'առնէ, գրեթէ միամիտ պատումով: Թէ կարելի՞ է նման խաւար լուսաւորել, եթէ փորձը՝ Լիք Արամ Հայկազ կարդալ, կ'եզրակացնէք...

«Այծպըտեր հասանք, կ'ըսէ մէկը:

«Հայ գիւղ է 300 տուն բնակչութեամբ:

«Սրտերնիս դող կ'ելնէ: Կասկած չկայ որ անոնք ալ ջարդուած ու տարագրուած են, եւ իրենց թուրք դրացիներն են որ տէր են դարձած անոնց տուներուն ու արտերուն»:

Որքան լաւ պիտի ըլլար որ ՄԱԿի կամ Խորհրդարաններու բեմէն Արամ Հայկազի էջերը կարդացուէին, փոխանակ թուլթակաբար կրկնելու այսինչ օրէնքի այնինչ պարբերութիւնը:

Ֆրանսացի մեծ դերասան Լիւքինի, մեծ սրահներու մէջ ընթերցման երեկոներ կը կազմակերպէ: Դերասանուհի մը, Տոմինիք Պլան, Մարկրիթ Տիւրասի գիրքը, «Ցաւը», (La douleur), ուր կայ երկրորդ աշխարհամարտի չարութեան անչպար գրական նացիոմը, որպէս մենաթատրոն խաղցաւ, եւ առանց լեզուն փոխելու շրջեցաւ եւրոպական բազմաթիւ քաղաքներ, թարգմանուած surtitragenով մարդիկ հետեւեցան: Յեղասպանական եւ անմարդկային ոճիրները ապրուեցան կնոջ մը հոգիին մէջ: Երկու ժամ սրահը լռեց եւ թրթռաց: Հազար հոգի:

Ինչպէս թուլթակաբար կը կրկնենք՝ «ճանչնալ եւ ճանչցնել ցեղասպանութիւնը»,

կամ՝ «քրէականացնել» անոր ուրացումը, յաճախ առանց ըսելու թէ ինչո՞ւ, Արամ Հայկազի էջերը, բեմէն ըսուած եւ լսուած, լաւագոյն փաստերը կրնան ըլլալ, եթէ, ի հարկէ, բեմադրիչ Փաթրիք Շերոյի եւ դերասանուհի Տոմինիք Պլանի տաղանդները եւ բծախնդրութիւնը գումարուին եւ ցուցադրուին, տարբեր քաղաքներու մէջ, այս անգամ մեր տաղանդներով: Հայերէնով բեմադրել ... surtitragenով:

Աւելին. Արամ Հայկազ կը նկարահանէ նաեւ հայրենահանումը, ամայացած գիւղերը եւ չէները, ոսկեհատ եւ լքուած ցորենի դաշտերը:

«Հսկողութիւնը համեմատաբար թույլ է եւ քանի մը տղաք դուրս կը սպրդին՝ ասպատակելու համար Հայերու լքուած տունները: Ոմանք նոյնիսկ կը յաջողին հաց ու մածուն գնել: Ինչո՞ւ, չգիտեմ: Տղայ մը կը վերադառնայ ալիւրով ու աղով, ուրիշ մը՝ մեղրով լեցուն պտուկով, զոր գտած է հայու մը լքուած տան մառանէն»:

Լքուած տունը հայուն...

Ինչո՞ւ լքուած, եւ ինչպէ՞ս մեկնած են լքելով մեղրի կարասը...

Եթէ նկարահանողի ոսպնեակը շարունակէ դառնալ աջ եւ ահեակ. անպատժելիութեան եւ գազանութեան ցեղասպանութիւնը, տեսարան՝ զոր այսօր անգամ երեւակայել դժուար է, հարիւր տարի ետք, կը պատկերուի:

«Կ'իմանանք թէ գիւղի տարբեր կէտերուն վրայ եւ կալերուն մէջ, տարբեր քաղաքներէ բերուած գաղթականներ կան: Չենք կրնար յարաբերիլ անոնց հետ»:

Այս տեղահանուածները իրենք գիրենք կը համարեն «գաղթական», քանի որ դեռ ոչ ոք ունի ամբողջական պատկերացումը կատարուող ոճիրին:

«Կէս գիշերէն առաջ, ոստիկանները ներս կու գան, կը փակեն դռները ու ճրագներով կը մտնեն մեր մէջ: Կը գատեն ութ գեղանի աղջիկ...»

Օրէնք, մարդկային իրաւունք, չքացած են:

Տեսարանը հարկ է ներկայացնել փաստ փնտռողներուն:

«Աղաչանք, բողոք, կռիւ, պաղատանք, օգուտ չեն ըներ:

« - Հարս է, երկու զաւկի տէր է, կը պաղատի կին մը՝ իր աղջիկը փրկելու համար:

«Առեւանգիչը այնպիսի տգեղ պատասխան մը կու տայ, որ կիները կը բռնեն իրենց ականջները ու գլուխները կը պահեն ամբողջութեամբ մէջ:

«Առտուն անոնցմէ հինգը ետ կը բերեն, յոգնած, ջարդուած, տառապած, արցունքէն կարմրած աչքերով ու ամօթէն ընկճուած ուսերով:

«Ու զարմանալի բան. այն մայրերը, որոնց աղջիկները ետ չէին բերուած, աւելի բախտաւոր կը համարուէին քան անոնք, որոնց զաւակները ետ եկան գիշերուան մը ակամայ բացակայութենէ վերջ: Կարծես ա'լ անոնք ամօթի, պղծութեան ու մշտնջենական պոգանքի դատապարտուած անօթներ էին, որոնց ոչ ոք կ'ուզէր հպիլ, մանաւանդ՝ տէր ելլել, բացի իրենց մայրերէն:

« - Մէջքս չորնար՝ չծնէի քեզ, իմ անբախտ զաւակս, կը հեծեծէր մէկը, իր տանջ-

ուած աղջկան գլուխը իր գրկին մէջ պահած, մէջքս չորնար, չծնէի քեզ...

«Ու անոնք բոլորն ալ վշտահար էին, ամօթապարտ ու ընկճուած:

«Ու զանոնք մխիթարող չկար»:

Արամ Հայկազ կը նկարահանէ, գոյներու եւ բառերու հետ չի խաղար: Իրաւական եզրեր չկան, հռետորութիւնը բացակայ է: Իրաւին յուզումը բաւարար է: Կայ պարզին վսեմութեամբ վկայութիւնը:

Ժողովուրդի մը պարզ զաւակներուն բնական դարձած տառապանքը կը շարունակուի:

«Առտու մը, բանջարանոցի մշակին քովի հայ աղջիկը՝ Ասիան գետափին խեղդուած գտանք: Տասներեք տարու էր ու յղի:

«Մշակին կինը իր ամուսինը մեղադրեց, որ զինք խաբած էր այդ աղջկան հետ: Մշակը մեղադրեց իր տղան, իսկ տղան՝ հայրը: Ոչ ոք մեղադրուեցաւ սպանութեան յանցանքով: Այդ չէր կարեւորը, եթէ միայն մշակին կինը համոզուած ըլլար, թէ իր ամուսինը հաւատարիմ էր իրեն, այս բոլոր վէճերն ու ամբաստանութիւնները տեղի չէին ունենար:

«Բացի Աստուծմէ, ոչ ոք գիտցաւ թէ Ասիան սպաննուեցա՞ւ թէ անձնասպան եղաւ:

«Խորէնին հետ Ալոճի ծառի մը տակ թաղեցինք զայն:

«Ու անոր մահուան լուրը պահեցինք Արեւէն, որովհետեւ մօտ օրէն ան ալ մայր պիտի ըլլար:

«Օսման իրապէս կը սիրէ իր կինը: Պաղատեցաւ մեզի, որ բան մը չըսենք անոր:

«Խոստացանք լռել: Արդէն ո՞վ սիրտ ունէր խօսելու»:

Անպատժելիութիւն: Անչափահասի դէմ սեռային նախադրձակո՞ւմ: Ոճրագործի հետապնդո՞ւմ... Ասոնք մեծ բառեր են՝ մեծ ժողովներու համար: Խօսողին լուսապսակ կ'ապահովեն: Բայց ո՞վ կը լսէ զոհերու ձայնը, ինչ փոյթ որ դար անցած ըլլայ:

Այդ ժողովներու մասին չի խօսիր Արամ Հայկազ: Այդ ժողովներուն ոչ ոք զինք կը հրաւիրէ: Հոն ճառերը կը չպարեն բիրտ իրականութիւնները:

Ինք կ'արձանագրէ խտացեալ յուզումով ... առանց սեւի ու կարմիրի:

Բայց ազգի յիշողութիւն հանդիսացող գրականութիւնը, ընդհանրապէս ստեղծագործական զանազան բնոյթի արտայայտութիւնները, կը վկայեն կեանքի մասին, վերականգնումի: Այս դժոխքի բովէն անցած Արամ Հայկազ կ'ապրի՝ որպէսզի շարունակութիւն ըլլայ, որպէսզի միասին ըլլանք:

Այսօր էական է հարցումը. Միասին ե՞նք:

Արամ Հայկազի էջերը մեր հաւաքական յիշողութիւնն են:

Երբ հայերէն գիրքը այլեւս տեղ չունենայ մեր գրասեղանին վրայ կամ բարձին

քով, ո՞ր հաւաքական յիշողութիւնը պիտի պահենք: Ի՞նչ պիտի պահենք:

Արամ Հայկազ պահեց եւ կտակեց: Եղուարդ Պօյաճեան կ'ըսէ.

«Արդ, նոր ժամանակներու այդ սոսկավիթխար խառնարանին մէջ, մարդկային բոլոր տեսակի մորթերով ապրող Հրոսրնի ծովախորշին անեղրակա՛ն Բաբելոնին մէջ, էվրոթըն Սթրիթի համեստ հայ նորավիպագիրը, քառասուն տարիէ աւելի ժամանակաշրջանէ մը ասդին, ոչինչ զիջեցաւ իր հայութենէն: Մնաց, Արամ Հայկազ, սաստիկօրէն հայ՝ Պոսթոնի Համաստեղին պէս, Փարիզի Շուշանեանին, Նարդունիին ու Պէշիկթաշեանին պէս, Սարաֆեանին, Հրաչ Զարդարեանին ու Որբունիին պէս: Դեռ ուրիշ այնքան լուծներու պէս: Բոլորն ալ, 1915ի պատանիներ՝ եղան սաստիկ հայ, կրակի պէս կիզիչ: Ու պայծառ ու մակընթաց»:

Բայց «կրակի պէս կիզիչ» տղաքը հարազատ էին, չեղան օտարագիր, չծափահարեցին օտարագրութիւնը, վաճառքի չհանեցին հարազատութիւնը: Կը յիշուի՞ն այսօր:

Երեւոյթը մեր ուշադրութեան առանցքին չէ կարծէք: Ինչո՞ւ կարծէք: Իրողապէս:

Ի՞նչ կրնանք ըսել՝ ժամանակակիցներս: Ի հարկէ, խօսքը չի վերաբերիր չպարի:

Երբեմն լաւ կ'ընենք եթէ հայելիին մէջ մենք մեզ դիտենք: Ուրիշը կրնանք խաբել, կրնա՞նք մենք մեզ խաբել:

Արամ Հայկազ ոչ ինքզինք կը խաբէ ոչ ալ մեզ: Կը պատշաճի, քալող կեանքին հետ կ'երջանկանայ, բայց միշտ ինքզինք կը լրացնէ իր յիշատակներով, որոնք անհատականի սահմանը կ'անցնին եւ կը նուաճեն համահայկականը, համամարդկայինը:

1931 թուականը կրող «Սիրտս պանդոկ մըն է» պատումը մեզի կը բերէ մարդը, հայը, որ կը քալէ, չի կքիր, բնութեամբ եւ բանաստեղծութեամբ կը գինովնայ:

«Խորովածի քմպարար ու ախորժելի բուրում մը, միջանցքէն անցնելով, աշխատութեան սենեակս կու գար:

«Դուրսը պայծառ ու ջերմ արեւ էր ու լայնաբաց փեղկերով պատուհանիս մէջէն դեղձանիկս լիահագագ կ'երգէր: Տղաս, բազմոցին տակ, քիթն ու բերնին պառկած, խաւաքարտէ տուն մը կը շինէր: Ես վար դրի գրիչը, գորովով ու երջանկութեամբ նայելու համար անոր պզտիկ հասակին, որ օրըստօրէ կ'աճէր ու կ'երկարէր, ինչպէս կ'աճին ապրիլեան անձրեւներէն գինով ծաղիկները դաշտին:

.....

«Կէսօրէ վերջ, երբ փոքրիկները քնացան ու կինս շարժապատկերի երթալու համար «մնաս բարի» ըսաւ ինձի, տուփը բացի:

«Հիմա առջեւս է ան: Ան ալ կը բուրէ: Այսօր ամէն բան բուրումնաւէտ ըլլալու համամտութիւն մը ունի կարծես: Գարնան օդը, յասմիկները պարտէզին, խորովածը, տո՛ւփը... Բայց այս վերջինը ամէնէն անուշը եւ ամէնէն հաճելին կը բուրէ:

«Ինչե՛ր չկան հոն, ինչե՛ր... նամականեր, ժապաւէններով կապուած ու բոլորումնաւէտ տոմսականեր, մէջը սիրտ ու համբոյր գրուած թուղթեր, արցունքի հետքերով եւ յիշատակներով բեռնաւոր ուրիշ նամականեր, հեռու եւ օտար երկիրներու դրոշմաթուղթերով փակուած ծրարներ, ծաղիկներու բրածոներ, մագերու փնջիկներ՝ վարդագոյն ու կապոյտ ժապաւէններով խեղդուած, կոճակ մը, մետաքս գուլպայ մը կնոջ: Բայց ես անհամբեր եմ ու ամէն բան իրար կ'անցնեմ: Կեցէ՛ք, պարպեմ տուփը, ու քովիկը նստած մէկիկ մէկիկ աչքէ անցնեմ անոր պարունակութիւնը: Եթէ անպէտ կամ յիշատակի աղուորութիւնը կորուսած բաներ կան մէջը, կը նետեմ, իսկ մնացեալը, մէկիկ մէկիկ ու անգտանելի գանձերու պէս, նորէն իրենց տեղերը կը դնեմ»:

* * *

«Սա չորցած վարդը, զոր խնամքով ու հազար զգուշութիւնով կը բռնեմ մատներուս մէջ, գունատած է: Թերթերը, շնորհիւ կիսաբաց կոկոն մը ըլլալուն, դեռ իրենց մէջ կը պահեն նախկին բոյրէն բան մը, որ գոհունակութիւն կը պատճառէ ինծի: Աշնան վարդ մըն է ան. ա՛ս՝ վերջին վարդն էր ձմեռէն առաջ»:

* * *

«Ջուրի մէջ մարուած կրակի կտորի մը պէս սեւ մագի այս փնջիկը Ֆլորինն է: Ան ինծի տուաւ, երբ ամրան իրիկուն մը, նոր քաղուած ցորենի արտի մը մէջ, երկուքս ալ փախստական, բայց քով քովի սեղմուած, աղուոր ու անուշ խօսքեր ըսինք իրարու: ... Ամբողջ գարուն մը գաղտնօրէն սիրեցինք զիրար, մինչեւ որ ուրիշներ ու մեզմէ հզօրներ բաժնեցին մեզ իրարմէ... Գիշեր մը աստղերուն արթննալն ու գիւղի տուններուն աչք բանալը երկարօրէն դիտելէ վերջ, երբ անջատման պահը կը մօտենար, իր մագերէն այս փնջիկը ինծի տուաւ...»

* * *

«Աս մետաքս գուլպա՞ն... ճիշդ ձեր գուշակածին պէս է...»

* * *

«Յաջորդը ութածալ թուղթ մըն է, յօդերուն վրայ քիչ մը մաշած ու քիչ մըն ալ դեղնած: Ամէն գոյնով, ամէն մեծութեամբ եւ ամէն լեզուով կնիքներ եւ ստորագրութիւններ իրար կը հալածեն կողին վրայ: Կան նաեւ դրոշմաթուղթեր ու տարւոյ եւ ամսու թուականներ:

«Կը բանամ:

«Խոշոր ու շքեղ գիրեր, հայերէն գրեր, սրտի մօտ գրեր»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Անցագիր թիվ 2173

Յանուն Հայաստանի Հանրապետության, մենք, Կ. Պոլսոյ դիւանագիտական ներկայացուցիչ, խնդրում ենք բարեկամ եւ դաշնակից պետութիւնների քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւններից ազատ անցք տալ պ... եւն. եւն.:

«Կասկածելի խոնաւութիւն մը կը քալէ աչքերու մէջ: Խնամքով կը ծալեմ թուղթը ու մասունքի մը պէս իր տեղը կը դնեմ»:

Այդ թուղթերը ես տեսած եմ ՀՅԴ թանգարանին մէջ, գրուած մեսրոպեան հարգատ ուղղագրութեամբ եւ այդ թուղթերը կը տրուէին հայերու, առանց գործածելու ներկայիս ընդհանրացած «օտարերկրացի»՝ բարբարոս նաեւ հայերու համար գործածուած՝ բառը...

Էջեր՝ ուր կան կեանքը, սէրը, արմատներու հանդէպ հաւատարմութիւնը: Հայերէն գիրերը՝ «սրտի մօտ» գիրեր են, հայրենահանուած Շապին Գարահիսարցի 31 տարեկան երիտասարդին համար:

Ընթերցում՝ կամըջուելու համար Արամի Հայկազի հետ եւ իրեն հետ յաւերժացած անցեալի մը հետ, որպէսզի ինքնութիւն պահենք:

Արամ Հայկազի պատումները մանր թատրոններ են, պարզ մարդոց կեանքի դրուագներ, որոնք պատմութեան գիրքերուն մէջ տեղ պիտի չունենան, ոչ ալ ուստիկանական արխիւներու մէջ:

« - Արամ, ե՛լ, տունը գող կայ,- փսփսուքով կէս գիշերին արթնցուց զիս կինս:

« - Ի՞նչ,- վեր ինկայ ես,- տունը գո՞ղ կայ... Հապա չունը չհաջե՛ց...

« Սիրտս արագ կը բաբախէր ու ծունկերս քիչ մը կը կթոտէին:

« - Գողերը կիները չեն սպաներ, դո՛ւն գնա նայելու -, պիտի ըսէի, բայց ամէցայ: Անգամ մը, երկուք բարձրաձայն հագացի՝ ազդարարելու համար գողին, որ արթնցած եմ եւ կու գամ, փախիր: Յետոյ երկար ատեն, մոլճակներս փնտռեցի: Նրբանցքի մէջ լոյսի կոճակը դարձուցի՝ ու «Հայր մեր որ յերկինս ես» ըսելով յառաջացայ դէպի խոհանոց:

« - Յիսուս Քրիստոս, դուն եղիր օգնական,- աղօթեցի ես, ու ափս, գլուխը կտրուած հաւու մը պէս թրվուացող սրտիս վրայ դրած, աչքս մօտեցուցի դրան բացւածքին:

« Սառնարանին առջեւ, կաթին շիշը քովն առած, գիշերանոցով նստած էր տղաս, ու իր քովիկը, Հանցը, քիթը կոխած մինչեւ բերանը կաթով լեցուած իր կապոյտ պնակին մէջ, մեծաղմուկ կը լափէր: Տղաս, իր գիրուկ սպիտակ ձեռքը թուլօրէն դրած էր անոր մէջքին, ու վրան հակած, գորովալի խօսքեր կը փսփսար անոր ականջին:

« - Շատ անթի էիր, հա՞, վախ եմ ըսեր, փափան քեզի պատժեց, չար փափան,

բայց դուն ալ գողութիւն ընելու չէիր... Կերա՞ր, ուրիշ տուգես. սպասէ, անդին գնա՛, մի լզեր քիթս բերանս, տեսա՞ր, թափեցիր կաթը, սո՛ւս, ձայն մի հաներ, հիմա կ'արթննայ փափաս...

«Ուսիս վրայէն մէկը կը շնչէր. գլուխս ետիս դարձնելով տեսայ, որ մաման էր, ուշանալուս՝ եկեր էր զիս փնտռելու:

«Բան մը չըսինք իրարու, ձեռքէ ձեռք բռնեցինք ու մութին մէջ կողք կողքի քալելով՝ վերադարձանք մեր անկողիններու ջերմութեան:»

Թափանցիկ, պարզ, գեղանկար:

Բայց բացակայ չէ սրամիտ կճոցը. շունը կը պատժէ տէրը կամ գողերը կին չեն սպաներ..., չըսելու համար որ կը վախնայ... Անհուն գորով կայ տողերուն մէջ, միջեւ, զարմացնող գորով, մէկու գրչին տակ, որ անօգնական թափառած էր Քիւրտիստանի լեռներուն մէջ:

Աղուորութիւն պատմելու համար, Արամ Հայկազ չի դիմեր հռետորութեան եւ ոչ ալ կը կուտակէ ածականները, եւ այդպէս կը յաջողի թելադրականութիւնը, կը մտնենք իր մտերմութեան մէջ:

Արամ Հայկազ կրօնական զգացումները կը տեսնէ, ինչպէս ըսինք, պարզ ու պարզունակ հոգիով, նայի՛ք: Քանի մը տող, եւ խորհուրդը կը հաղորդուի:

«Ձիւնը դադրեր էր ու երկինքը պարզուեր: Բոլոր աստղերը իրենց տեղերը ներկայ էին: Միայն քիչ մը աւելի փայլուն ու քիչ մը աւելի մօտ ըլլալ կը թուէին: Կարծես վար իջած՝ կը թարթէին, ճիգ կ'ընէին տեսնելու այն մոլորակը, ուր, դարեր առաջ, Աստուածորդի մը ծնած էր...»

Եւ կարծէք իր կարճ ժամանակով ուսուցիչ Օշականի խրատը ականջին օղ ըրած է: Յակոբ Օշականի խօսքը կը յիշէ. «... ես ձեզի ըսած չե՞մ, որ պարզ գրէք, առանց սիւսի. Կը հասկնա՞ք: Գրականութիւն ըրած ըլլալու համար մի՛ գրէք, աշխատեցէ՛ք պարզ ու բնական ըլլալ. մի տարուիք չիք բառերու հրապոյրէն...»:

Արամ Հայկազի գրականութիւնը Օշականի գծած սահմանին մէջ մնացած է:

Դառնութիւններով ինքզինք չէ թունաւորած Արամ Հայկազ: «Երջանկութիւն» հատորին մէջ, իւրաքանչիւր էջ, իւրաքանչիւր տող, երջանկութիւնը գտած ըլլալու վկայութիւն է, գաւազները, թոռները, շունը, կատուն, բաբախող կեանքն են եւ ինք այդ բաբախումին մէջ կը գտնէ իր ուրախութիւնը:

«Աչնան մէջ գարուն» նորավէպը երջանկանալու տրամադրութեան բեմն է, գեղեցիկով պարուրուած: Գեղեցիկը ընկալելու համար սրամտութենէն չի հրաժարիր:

«Գեղեցիկ բաները ես չատ կը սիրեմ: Բարին Աստուած ալ՝ զիս, որ իմ վայելքիս համար, գեղեցկութիւն չատ է ստեղծած, ու մատչելի ձեւով մը դրած չորս կողմս: Աւելի՛ն. սիրտս ալ մեծ է չինած, որ անոր մէջ, բոլոր այդ գեղեցիկ բաներուն համար՝ տեղ գտնուի: Ի՞նչ պիտի ընէի, եթէ սիրտս, բռունցքիս չափ մեծ ըլլալու տեղ,

ձմերուկի կուտի չափ ըլլար»...

Այսպէս սկսող նորավէպը կ'աւարտի արեւու պէս ջերմացնող պատկերով մը, դրացի գեղանի Փըթրիչիայի հետ:

« - Շնորհակալութիւն,- ու երկարեց ձեռքը:

«Աստուա՛ծ իմ... Կարծես փխրուն դեղձանի՛ կ'մը բռնած էի ափիս մէջ: Ծռեցայ ու համբուրեցի այդ փոքրիկ ձեռքը, յետոյ երեխաներուն թուշերը:

«- Խնդրանք մը ունիմ,- ըսի:

«- Ի՞նչ է:

«- Անգամ մըն ալ նայիմ աչքերուդ մէջ ու ճշդեմ անոնց գոյնը... Ինծի կը թուի, թէ անոնք միշտ գոյն կը փոխեն:

«- Այո՛, կը փոխեն:

«- Ի՞նչ կ'ըսէ... Ես ալ կը կարծէի, թէ տեսողական պատրանք է...

«- Պատրանք չէ... Տրամադրութեանս համեմատ կը փոխուի անոնց գոյնը:

«-Ե՞րբ ջինջ կապոյտ է:

«- Երբ լիովին երջանիկ եմ:

«- Ուրեմն կը մաղթեմ, որ աչքերդ միշտ կապոյտ ըլլան:

«- Շնորհակալ եմ:

«- Կը բաւէ՛, շատ եղար շնորհակալ...

«Թեւը երկարելով՝ քաշեց գլուխս իրեն ու համբուրեց թուշս:

«- Հիմա շնորհակալ ըլլալու հերթը ինծի եկաւ,- ըսի:

«- Ի՞նչ բանի համար:

«Մատովս ցոյց տուի թուշիս վրայ իր համբուրած տեղը:

«- Օ՛, միսթըր Հէյկըզ...

«Դուռը բացաւ ու մտաւ մօրը տունէն ներս»:

Նոյնիսկ երբ աշուն է, ազնիւներու հոգիին մէջ միշտ անկիւն մը կայ գեղեցիկի եւ սիրոյ համար:

Եթէ այդպէս չըլլար Քիւրտիստանի Լեռներուն մէջ աքսոր ապրած մարդը ինչ-պէ՞ս պիտի չխեղդուէր...

Մարդը միշտ տրամադիր էր ժպիտ տալու եւ առնելու: 1972ին Պէյրութ հրաւիր-ւած էր, եւ երբ զինք կը հրաւիրէին խօսելու, բեմի վրայ, աշակերտներու կամ բա-ժակի մը շուրջ, որպէս ներածական կ'ըսէր. «Երբ ես ոտքի կ'ելլեմ, մտածումներս կը նստին»:

Հիմա որ հանգչած է, իր խօսքերը ոտքի են, բոլոր անոնց համար որոնք գիրք կը կարդան, իր գիրքերը կը պահեն իրենց տուններուն մէջ, եւ չեն գոհանար յուշ-երեկոյով կամ յիսնամեակի, հարիւրամեակի կամ այլ ամեակներու ոգեկոչական տպա-ւորութիւններով:

Արամ Հայկազ գրող էր:

Գրողը իր գիրքով է գրող:

Գրողը յարգելի եւ սիրելի է երբ իր գիրքը կը կարդանք:

Յարգանքի երեկոյէ մը ետք նայինք մեր գրադարանի գիրքերուն:

Մանաւանդ որ Արամ Ա հայրապետը այս տարին յայտարարած է Հայ Գիրքի տարի: Լսած ենք ... որպէսզի ոտքի մնանք:

Հոն, մեր գրադարանի գիրքերուն մէջ, կը գտնենք Արամ Հայկազը, որպէսզի իր ստեղծագործական աշխարհը չպառկի, ոտքի մնայ:

Կամ այսօր գէթ միտլթիւններու եւ կազմակերպութիւններու մէջ գործող կամ անոնց անդամակցող հայերու ո՞ր տոկոսը տասը էջ կարդացած է Արամ Հայկազի գործերէն... Ըստ այնմ կրնանք ճառ խօսիլ:

Եւ ըստ այնմ անսեթեւեթ կերպով կրնանք ըսել թէ իրեն հետ ոտքի՞ կը մնանք:

Նաեւ Հայ Գրականութիւնը ոտքի կը մնայ, պատուանդան հաւաքական յիշողութեան եւ հարազատ ինքնութեան:


Որպէսզի հետեւելով անցեալ դարու մեր մեծ գրողներէն Վիգէն Խեչումեանի, - դժբախտաբար շատ քիչ ծանօթ անուն, քանի որ մանկապարտէզի հանդէսին չ'արտասանուիր -, շարունակութիւն ըլլանք եւ ոչ Իրքուցք, Վլատիվոսթոք, Նոր Զելանտա, Քալիֆոռնիա, Շանկհայ կամ Քոթ տ'Ազիւր, հայութեան չառնչուող սկիզբնորի ... որուն անունը, անկեղծութեան պահու մը, մեզմէ իւրաքանչիւրը ինք պէտք է տայ:

Օչականի թելադրած առանց «սիւս»ի գրականութիւնը մշակեց Արամ Հայկազ, որուն մէջ մենք մեզ կրնանք դիտել, եթէ հայու իրաւ կամք պահած ենք տեղ մը, մեր չապրած տեղահանութիւններու ճամբաներուն վրայ չենք կորսնցուցած:

Արամ Հայկազի գրականութիւնը՝ վերապրումի հայելի:

Իսկ գրականութիւնը կ'ընկալուի ոչ թէ դասախօսութեամբ, այլ գրողի գիրքի ընթերցումով:

ԱՔՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ. ԱՔՍՈՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



Աքրահամ Ալիքեանը, առաջիններից ու եզակիներից մէկը մեզանում, առաջին իսկ հնարաւորութեամբ յայտնում է իր ցան ու դառնութիւնը, գրելով «Կարմիր ագիտացիայի եւ սպիտակ ակացիայի մասին» դառնութեամբ լի յօդուածը, պահանջելով ասել ձմարտութիւնը եւ հաշի պահանջելով Անդրանիկ Թէրզեանի, Հրանտ Տէլձեանի եւ շատ-շատերի համար: Բայց ձախձը լռում է, եւ բորբոսը, սովետական կեանքի դափնեկիր ու պսակաւոր բորբոսը շարունակում է ծաղկել:

ԵՈՒՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Աքրահամ Ալիքեան - «Հանդիպակաց Ափեր»

Ձեռքերու մէջ սեղմուած գիրք է, աղօթագիրք է: Աքսորի վկայարան: «Բռնէ-բռնէ»ի տարիներուն գիրքն է: Կարմիր տարիներու կարօտը եւ բոցավառ աղմուկը կայ այդ գրքի եզերքներուն: Կարմիրը ես ու դուն կը ծաղրենք, կարմիրէն ես ու դուն կը զգուհինք, որովհետեւ կը մտածենք, որ հոն արգելքներ կային. հոն կրնայիր կորսնցնել անունդ, դառնալ փոշի, դառնալ շոգի ու հեռանալ հրապարակէն:

Բայց առնուազն կար հրապարակ:

Բայց առնուազն կային մարդիկ, որ կը կարդային, կար զանգուած, հանրային կարծիք ու նման բաներ:

Աքրահամ Ալիքեանը քանի տարի իր գրածները պիտի պահէր հողին տակ:

Քանի տարիներ պիտի խուսափէր, որ անունը մնար մոլորին, չլսուէր այդ անունը ու ինք որպէս վիրաւոր բանաստեղծ, հեռու իր ազգակիցներէն կամ անոնցմէ, որ նոյն լեզուով կը խօսէին: Ռուսները կը պահէին զինք: Ռուսները փայփայեցին զինք: Հասկցան զինք: Առնուազն փորձեցին հասկնալ:

Հիմա ի՞նչ ժամանակ է: Մեր ժամանակը Աքրահամ Ալիքեանի ժամանակին մէջ է

արդեօք: Մենք մեր գրական լուսլիները արդեօք իր ժամանակի սլաքներուն յարիր կը պահե՞նք:

Կ'առնչե՞նք արդեօք մեր մեծ սպասումները իր աքսորին, իր վիրաւոր կեանքին ու զօրեղ բանաստեղծութեան վէրքին հետ:

Ինք բացակայ է քիչ մը: Մենք չենք հանդիպիր իր անունին:

Թերեւս ան սա պահուն իր լուսլիեան մէջ կը գրէ նոր գործեր ու աղամամուլին - իր սիրած բառն է ասիկա - կը ստորագրէ նոր տաղեր ու նոր երգեր: Թերեւս լռած է, կամ հին վէրքերուն ճերմակ բարակ շղարշը կը քաշէ, որ յանկարծ չպատահի, որ բացուի կարմիր վէրքը, ու հոնկէ արիւնաթարախ հոսի կրկին...

Իր գիրքը միշտ ալ իմ ընկերս է, կողքն արդէն դարձած է վիրաւոր՝ միշտ տանիլ-բերելէն: Հերոնիմոս Պոսիսի նկարին կողքով այս գիրքը մեր ժամանակներու ամէնէն կարեւոր գիրքերէն մէկն է, որմով կ'աւարտի մեր բանաստեղծութեան փայլուն մէկ շրջանը, անով Ալիքեան կը բանայ նոր առաջաստներ: Անով խարիսխ կը նետէ, աքսորով յատկանշուող բանաստեղծութեան մէջ: Ան իր խօսքով կը դառնայ միակը, որ պիտի երգէ աքսորը ու պատմէ այն կեանքը, որ հարիւր եւ աւելի բանաստեղծներու աքսորական ժամանակներուն մասին է:

«Ծղրիթը» կը կոչուի գիրքը: Ծղրիթին թեւերը կտրուած են, ոտքերը կը ցաւին, ներբանները արեան մէջ կորած են, բայց չի կորսցներ իր հաւատքը եւ գալիքի յոյսը:

Այսօր Ալիքեան կ'ապրի իր մինակութեան ամէնէն խոր պահերը՝ լուսլիեամբ, բացակայութեամբ եւ անտեսումով: Սակայն այս բոլորը չեն կրնար խանգարել աշխարհին ըսելու, որ ան մեր բանաստեղծութեան ամէնէն վաւերական դէմքերէն մէկն է: Զըսելու համար ամէնէն վառը, ամէնէն աքսորականը, ամէնէն բանաստեղծը:

«Ծղրիթը» հատորը կը բաղկանայ երկու բաժիններէ: Առաջին բաժինը կը կոչուի «Ծղրիթը», զոր տպագրուելէ առաջ, Ալիքեան երկար տարիներ զայն պատասպարած ու պահած էր Մոսկուայի ցուրտ սեւահողերուն տակ, երկրորդ բաժինը կը կոչուի՝ «Թուղթ չափաբերական»: Պոեմը նուիրուած է երանաշատ լուսակիրի մը՝ Վահէ Օշականին:

Ալիքեան այսպէս կը բանայ իր պոեմը՝

«Սիրելի Վահէ, այսօր երագիս տեսայ ցայգային Սան Ֆրանսիսքոն
Եւ դեռ հեռաւոր քու արտորանքդ իմ արտորիս քով,
Ինչպէս աշխարհի ծայրին, պրկուած քաղցով վագրերու,
Եղջիւր եղջիւրի հիւսած սրսփուն գոյգ մը եղջերու:

Բարեկամ, մենք չէ որ ընտրեցինք այս արտորն ի վերջոյ,
Սակայն ջանացինք, որ ան ըլլայ միշտ երկինքին նման աստուածահաճոյ:
Քուկըդ եղաւ լերկ կղզեակի մը պէս, ուր կ'ապրէր բարի ոգի մը գոնէ,
Մինչ իմինիս մէջ վխտացին միայն պէս-պէս Գորգոններ,
Որոնց նայուածքէն կ'եռային քարեր, թանձր քափ կապած,
Եւ դժոխքին մէջ անթրոց-ակիշով կը զնգացնէին կաթսայ ու տապակ»:

Ես աքսորն այսքան սեղմ, այսքան սրտաճմլիկ ու այսքան ուժեղ տողերով չէի պատկերացուցած: Այն, ինչ որ կրցած է Ալիքեան ընել, ուրիշ ոչ ոք կարողացած է տալ: Ու կարեւոր է, որ այսօր խօսուի այդ մասին, որպէսզի ներգաղթի էջին վրայ լոյս սփռելով, սորվինք անոր դասերէն: Այսինքն ճշմարտապէս գնահատենք, ներգաղթին պատճառած ահն ու վիշտը, նաեւ մատնացոյց ընենք անոր ծանր հետեւանքները՝ մեր մտաւորականութեան ուսերուն....

Ալիքեանի աքսորը, իր անցած ուղին, իր անցեալն ու փախուստը Երեւանէն, հին երազները, մանկութիւնն ու Պէյրութը եւ մանաւանդ կարմիրներուն արգահատելի արարքները, միտուած պատժելու նոյնիսկ ոչնչացնելու գինք, արեւելահայ-արեւմտահայ անիմաստ կռիւն ու առկայ տարբաժանումները, նոյնիսկ կարմիրներուն պղծումը խաչին ու հաւատի ...

Մէկ խօսքով խորհրդային կարմիր շրջանի ամբողջ պատկերը, ամբողջ աքսորը եւ ամբողջ ողբսականը, զորս դրուած են այսօր տարիներու բեռան տակ կքած Աբրահամ Ալիքեանի վիրաւոր ուսերուն:

Մեր մօտ Ալիքեան աքսորի գրականութեան լաւագոյն ներկայացուցիչն է: Ապրած է ներգաղթը. կտոր մը հող, կտոր մը հայրենիք փնտռելու կրակով է որ ան ճամբայ ելած է դէպի երկիր...

Բայց ինչ փոյթ, երբ այդ կարմիր երկիրը չէ կրցած պահել նոյնիսկ մէկ բանաստեղծ...

Այդ երկիրը, նոյնիսկ չէ կրցած պահել փոքր երազ մը արեւմտահայ ծիններէն, փոքր յուշ մը գաղթականի աչքերէն

Ալիքեան գիտէ, որ աքսորը պարտադրեալ է: Պոեմի սկիզբին համեմատութեան եզրեր կը փորձէ որոնել իր ու Վահէ Օշականի աքսորներուն միջեւ: Աքսորը իրեն համար այլեւս լալու տեղիք չէ, չի կրնար ըլլալ: Աքսորը ապրելու նոր եղանակ մըն է, ըլլալու, գոյանալու, եղած գոյութիւնը հաստատելու ձեւ մըն է: Աքսորի մէջ է Ալիքեան, յաւիտենական աքսորի մէջ, մենք ալ մասնակից ենք այդ աքսորին, հայրենիքը այսօր ալ մեզի համար շօշափելի իրականութիւն ըլլալու երակը չունի: Կամ ունի թերեւս եւ մենք չենք ուզեր տեսնել ատիկա: Ի՞նչ էր հայրենիք-Հայաստանը՝ Աբրահամ Ալիքեանի սերունդին համար, Հայաստանը, որ պիտի դառնար փրկութեան օղակ, կը դառնար կարմիր երիզով անէծքի գօտի, այդ գօտին էր, որ կը սեղմէր իր իրանը, կը սեղմէր իր կոկորդը, կ'ուզէր լռեցնել գինք: Ալիքեան կուսակցական պատկանելիութիւն չէ ունեցած, ուզած է Հայաստան վերադառնալ, որովհետեւ հաւատացած է հողին: Եւ՝ ի՞նչ ընէր: Մնա՞ր արդեօք Սփիւռքի անդէմ պարտէզներուն մէջ: Արդեօ՞ք մնար: Ի՞նչ պիտի ըլլար իր կացութիւնը, մէկը, որ սիրեց բաւուր սկիզբէն, շատ հինէն, մէկը որ ապրեցաւ բառին սնունդով, բառին զօրութեամբ: Պիտի տառապէր, պիտի քամուէր սպիտակ էջին վրայ, պիտի հալէր խարոյկին վրայ տարուբերուող երէին պէս...

Ու այս արարքին, վերադարձին դիմաց ան պիտի խմէր ճակատագրի կարմիր բաժակէն: Ու ինչ փոյթ այս բոլորը, որովհետեւ ան հաւատացած էր իր ճակատագրին ու ճակատագիրը իրեն համար չէր կրնար խոսափելու պատուհան դառնալ...

Աբրահամ Ալիքեան ոչ թէ բանաստեղծութիւնը ընտրած էր բանաստեղծութիւնը երգելու համար, այլ ընտրած էր աքսորը:

Սկիզբը՝ աքսոր իր ծննդավայրէն, յետոյ աքսորը իր մանկութենէն, աքսորը որպէս հայրենիք դաւանուած եւ հայրենիք սահմանագծուած հողակտորէն, յետոյ աքսորը հիւսիսի իր «պատսպարանէն»-Մոսկուայէն, յետոյ աքսորը առժամեայ բնակարանէն, դէպի Ֆարայա, Պիքֆայա եւ այլուր...

Աքսորներու ընտրանի եւ ընտրեալ աքսորական:

Եւ այս ամէն հանգրուանի Ալիքեան կը սիրէր ընտրել խորագիր մը, աքսորի մոլթնոլուսին կերոն մը բոցավառելու համար ... ամէն աքսորակայանի համար գիրք մը կը տպագրէր՝ ցոյց տալու համար իր խաչելութեան դժուարին արահետները:

Եւ այսօր, երբ իր մենութեանը մէջ, իր լռութեանը մէջ փակուած բանաստեղծը կ'ապրի արեւային իր ժամանակը, կ'ապրի մեծ կորուստներու, մեծ լքումներու եւ մեծ լռութիւններու իր ամբողջական ժամանակը: Անոր սիրտը վիրաւոր է եւ աքսորեալ, անոր բառը արցունքի կ'թարանն է: Եղած ու անցած բոլոր ճշմարիտ ձայներուն մօտ, անոր բողոքը յաւիտենական աղօթքի մը մոլորէն պէս է: Զի բողոքեր եւ չի տարածայներ: Զի կռուի իր ճակատագրին դէմ: Հաշտ՝ ինչպէս ձնծաղիկը, ընդունակ՝ ինչպէս տէրվիշը, եւ համակերպող՝ ինչպէս հզօր մայրին:

Փոթորիկներէն չինկաւ Աբրահամ Ալիքեան, որովհետեւ գիտցաւ, որ ինք ամէնէն առաջ ու վերջ, աքսորի բանաստեղծն է:

Մնաց այդ պատնէշին վրայ, աղօթեց Վարուժանով եւ Ատոմ Եարճանեանով, անոր աչքերը թրջուեցան երբ խօսեցաւ երկրի գրականութեան մասին: Բայց չլացաւ:

Այսքան խօսելէ ետք աքսորին մասին, նկատելի է նաեւ, որ Ալիքեանի համար ապրուած այդ աքսորն ու ինքնաքսորը տանելի են դարձած, որովհետեւ օր մը իսկ ան ինքզինք լեզուէն դուրս չէ արտօնած տեսնել, այսպէս կը գրէ գրականագէտ Եուրի Խաչատրեանը իր մասին, Երեւան հրատարակուած՝ «Աբրահամ Ալիքեան՝ Հանդիպակաց Ափեր» շահեկան հատորին մէջ. «Աբրահամ Ալիքեան տասնեակ տարիներ ապրել է Հայաստանից դուրս, Հայաստանից հեռու, բայց ապրել է հայոց մեծասքանչ լեզուի մէջ, ասել թէ եղել է մշտապէս իր տանը, մշտապէս ապրել գրականութեան մէջ եւ գրականութեամբ»:

Ուրեմն լեզուն է իր տունը, իր մնայուն ամրոցն ու հայրենիքը:

Ան մինչեւ ծայր, մինչեւ վերջն աշխարհի՝ Աքսորի բանաստեղծ է:

Պէյրութ

Յ. Պ.

ՉԵՉԱՐԷ ՓԱՎԷՉԷ «ԱՊՐԵԼՈՒ ԱՐՅԵՍՏԸ» ԳԻՐՔԻՆ ՄԵՋ ԿԸ ԽՕՍԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւ մանաւանդ յիշել որ բանաստեղծել սիրաբանելու պէս է. երբեք պիտի չգիտնանք որ հաճոյքը բաժնուած է:

Ինչպէս մեծ սիրահարները, մեծ բանաստեղծները հազուագիւտ են: Տկարութիւնները, փոթորկումները եւ երազները չեն բաւեր: Դարկ է որ եղածի լաւագոյնը ըլլայ, կարծր ամորձիքներ: Ինչ որ սովորաբար կը կոչենք ողիմպիական նայուածք:

Չ. Փ.



ՉԵՉԱՐԷ ՓԱՎԷՉԷ
(1908 - 1950)

Ֆրանսական «Կալիմար» հրատարակչատունը, 1958ին, իտալերէնէ թարգմանելով լոյս ընծայած էր Չեչարէ Փավէգէի «Ապրելու արհեստը» գիրքը, որ կրկին հրատարակուած է 2008ին: Գիրքը գրուած է օրագրի ձեւով, ճշդելով՝ 1935-1950: Դեղինակին փափաքով գիրքը լոյս տեսած է իր մահէն ետք:

Չեչարէ Փավէգէ ծնած է Սան Սթեֆանօ Պելլաօ քաղաքը, 1908ին: Մանկութիւնը եւ պատանեկութիւնը անցուցած է Թորինօ քաղաքը: Դետեւած է գրականութեան բարձրագոյն ուսմանը: Շրջան մը դասաւանդած է, ապա գործակցած է մեծ հրատարակչատան մը հետ: Առաւելաբար հետաքրքրուած է ամերիկեան գրականութեամբ: Կատարած է թարգմանութիւններ, ինչպէս Դերման Մելվիլի «Մոպի Տիք»ը: Իր բանաստեղծութիւններու առաջին գիրքը՝ «Աշխատիլը կը յոգնեցնէ», լոյս տեսած է 1936ին: Գրական մեծ ժառանգութիւն ձգած է. բանաստեղծութիւն, վեպ, նորավեպ, թարգմանութիւն, ուսումնասիրութիւն, իմաստասիրական գրոյցներ եւ այս ուշագրաւ օրագրութիւնը:

1950ին, Թորինոյի պանդոկներէն մէկուն մէջ անձնասպան կ'ըլլայ: Նոյն օրերուն ստացած էր գրական մրցանակներ: Իր տաղանդի լիակատար ծաղկման շրջանը կ'ապրէր: Այս արարքին պատճառ եղած կրնան ըլլալ սիրային յուսախաբութիւն մը, կամ քաղաքական ձախողութիւն մը, ինչպէս նաեւ իր աստիճանական հեռացումը համայնավարութենէն:

Գիրքը կը վկայէ ապրելու դժուարութեան մասին:

Այս տեղեկութիւնները քաղուած են հրատարակիչին կողմէ գիրքին սկիզբը տրուած ծանօթութիւններէն:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«ԱՊՐԵԼՈՒ ԱՐՇԵՍՏԸ»

(Le métier de vivre, FOLIO 1908, pp 467)

1935

6 Հոկտեմբեր

Որ իմ վերջին բանաստեղծություններէս մի քանին համոզիչ ըլլան, ոչինչ կը պակսեցնէ այն տուեալէն որ ես զանոնք կը շարադրեմ հետզհետէ աւելի եւ աւելի անտարբերութեամբ եւ խորշանքով: Շատ ալ կարեւոր չէ որ յաճախ ստեղծելու բերկրանքը ինծի համար ունենայ ծայրայեղ սաստկութիւն: Երկուքը, եթէ զանոնք մօտեցնենք, կը բացատրուին ձեռք բերած տաղաչափական ազատութեամբս, որ ինձմէ կ'առնէ տուեալ անձեւ նիւթէ մը մեկնելով խորացնելու փափաքը, եւ միաժամանակ, գործնական կեանքի մարզին

մէջ զիս հետաքրքրող բաներով, որոնք կ'աւելցնեն կրքոտ խանդ մը կարգ մը բանաստեղծութիւններու մասին իմ խոկումներուս:

Ընդհակառակն, կարեւորը հետեւեալն է. ճիշդ ինծի կը թուի հետզհետէ աւելի անօգուտ եւ անարժան, եւ աւելի արգասաբեր քան յարատեւումը այդ դաշտին մէջ, երկարատեան ի վեր նկատուած հետազօտումը ըսելիք նոր բաներու, հետեւաբար, մշակումը նոր ձեւերու:

Որովհետեւ անգիտացուած եւ որպէս կարելի կանխազգացուած ոգեկան իրականութիւններու առթած անձկութեամբ է որ նախ կը ստացուի լարումը: Ես ինքզինքս ուժգնօրէն նորարար փորձերու յանձնելու ցանկութեան դէմ որպէս վերջին պաշտպանութիւն կը գտնեմ հպարտ համոզման մէջ, որ միօրինակութիւնը եւ միջոցի երեւութական խստութիւնը՝ որուն տէր եմ այժմ, կրնան ըլլալ լաւագոյն զտիչը ամէն կարգի իմացական արկածախնդրութիւններու դէմ: Բայց պատմական օրինակները, - դեռ եթէ իմացական ստեղծագործութեան պարագային ներելի է

կանգ առնել օրինակներու վրայ, ինչ որ ալ ըլլան անոնք - ամէնքը ինծի դէմ են:

Յամենայնդէպս, եղաւ ժամանակ երբ իմ գլխուս մէջ վառ էր բոռն զգացումներու պարզ նիւթերու պահեստ մը, իմ փորձառութեանս նիւթը, բանաստեղծական արտայայտութեամբ ուղղուած պայծառութեան մը եւ օրկանական սահմանումի: Եւ աննշմարելիօրէն, բայց անխուսափելիօրէն, իմ փորձերէս իւրաքանչիւրը կ'առնէր այդ խորքին, եւ որքան ալ արտառոց ըլլայ իւրաքանչիւր բանաստեղծութեան կորիզը, ինծի երբեք չթուեցաւ, որ կը մոլորէի: Ունէի այն զգացումը, որ կը ստեղծէի բան մը, որ միշտ կը գերանցէր (պահու) (այժմ) հատուածը:

Եկաւ օրը երբ իմ կենսական պահեստս ամբողջովին կլանուեցաւ երկովս, եւ ինծի թուեցաւ որ գործս ուրիշ բան չէր եթէ ոչ կուտակում եւ իմաստակութիւն: Այս այնքան իրաւ է - եւ անոր անդրադարձայ աւելի լաւ, երբ ուզեցի լուսաբանել զայն ինծի համար կատարուած աշխատանքի ուսումնասիրութեամբ - որ այդ պահուն կը հասկնայի իմ բանաստեղծութեանս հետագայ ուսումնասիրութիւնները, հոն տեսնելով գործադրութիւնը հոգեվիճակի գիտակցուած ճարտարութիւն մը, մինչդեռ ես, ընդհակառակն, կ'ընէի բանաստեղծութիւն-խաղ մը իմ բանաստեղծական կոչումովս: Այսինքն ես կրկին կ'իյնայի այն սխալին մէջ, զոր կը ճանչնայի եւ որմէ կը խուսափէի, որ նախապէս նպաստած էր ինծի տալու այնքան թարմ ստեղծագործ վստահութիւն, բանաստեղծելու սխալը, բայց անուղղակիօրէն, բանաստեղծին՝ որ ես էի: (Exegi monumentum...) Խառնակութեան այդ պահուն, կրնամ ըսել որ այնուհետեւ ի զուր կը փնտռէի իմ մէջ նոր մեկնակէտ մը: Հարաւի Ծովերէն ի վեր (բանաստեղծութեան մը խորագիրը), երբ, առաջին անգամն ըլլալով

արտայայտուեցայ ճշգրիտ եւ բացարձակ ձեւով մը, սկսայ կառուցել իմացական անձ մը, զայն ուրանալու սպառնալիքով եւ հարցականի տակ առնելով իմ ապագայ եւ կարծեցեալ թռիչքներս, չէի կրնար գիտակցաբար զանոնք փոխարինել: Ուրեմն, կը հնազանդիմ իմ ներկայ անօգուտ ըլլալու զգացումիս երբ կը նուաստանամ՝ ինքզինքիս պարտադրելով հարցապնդել միտքս սոսկ այն միջոցներով, որոնք ցարդ անոր համար բնական եւ արդիւնաւոր էին, ընդունելով ամէն գիւտի համար իւրաքանչիւր մասնայատուկ պարագայի արգասաւորութեան գիւտը: Տրուած ըլլալով, որ բանաստեղծութիւնը կը ծնի փորձերով եւ ոչ որոնումներով:

Բայց ինչո՞ւ, այն ձեւով որ ցարդ ես ինքզինքս սահմանափակած էի ինչպէս քմայքով միայն տաղաչափեալ բանաստեղծութեան, ինչո՞ւ երբեք չեմ փորձեր այլ սեռի բանաստեղծութիւն մը: Միայն մէկ պատասխան կայ, որ անկասկած անբաւարար է. մշակոյթի, զգացումի եւ այժմ նաեւ սովորութեան պատճառներով եւ ոչ քմայքի, որ ես անկարող եմ դուրս գալ այս արահետէն, եւ յանկարծական փոփոխութեան մը արդիւնքը, որ պիտի միտէր փոխել ձեւը վերանորոգելու համար նիւթը ինծի պիտի թուէր սիրողական ըլլալ:

1936

9 Մայիս

Նուաստանալու պարգեւած հանգիստը կը մտնէ՞ նաեւ սովորական ըմբոշխնումներու շարքը, կամ առողջ սկզբո՞ւնք է:

Այսինքն մենք մեզ կը նուաստացնենք չահագործելու համար փորձի մը հակազդեցու-

Թիւնը, զայն դարձնելով անոր պատրուակ՝ ճրի ինքնացուցադրութեան (բարոյական յանձնառութիւններու) կամ փորելու համար բարոյական ընթացքի շերտ մը, ի վերջոյ փնտռելու համար պարտականութիւններու խղճամիտ ծրագիր մը:

Թէ տեսակ մը հաճոյք ըլլայ նուաստացման մէջն իսկ, իրողութիւն է: Զատորոշել տեսնելու համար, որ հաճոյքը կ'ապրուի զգլխանքով կամ ողբերգականօրէն անկարելի կը թուի:

Խորքին մէջ, քանի որ մօտեցման այլ եղանակ չէի գտներ զգլխանքին դէմ, քան քանդել զայն իրականացնողը (զայն «անօգուտ կերպով տառապեցնել»), պիտի բաւէր լուսաբանելու, որ ինքնանուաստացումը յումպէտս կամ նուազ կը տառապեցնէ: Եւ, իմ պարագայիս, ինչպէ՞ս խոսափիմ իմ սովորական ուղեցոյցէս, որ է՝ հակակշռել իմ օրինաւոր վիճակս իր ստեղծագործ բեղմնաւորութեամբ կամ ամլութեամբ: Որովհետեւ այդ ուղեցոյցը սխալ է կամ առնուազն անբաւարար է տրուած ըլլալով որ ամէն մարդ ստեղծագործողի արհեստ չի կիրարկեր: Օգտակար կամ անօգուտ տառապանք մը կը բնորոշուի յարաբերաբար ամբողջ գոյութեան մը: Եւ որ աւելի խնդրոյ առարկայ անձը ըլլայ միաժամանակ ստեղծագործող, ոչ մէկ ձեռով կ'առնչուի գիտակցութեան: Հոս հարցը կը վերաբերի պահանջներու, որոնք թիրախ կ'ընտրեն հիմերը, արհեստէն անդին, դասակարգը եւ ազգը: Եթէ այս կամ այն բանը զեղչենք, ի՞նչ հիմնաւոր պատճառ կը մնայ պարտականութիւններու ստրուկ ըլլալու: Ուրեմն հարկ է իմ ստեղծագործողի վիճակս չանգիտանալ, ներքնայարկ իջնելով անկիւնաքարը փնտռելու, բայց պարզապէս նկատի ունենալ, որ ստեղծագործողէն անդին ես մարդ եմ, գործագործը մը, ապաքաղաքական մը, լաճ մը եւ դեռ ուրիշ բաներ որոնց չեմ անդրա-

դառնար: Գեղեցիկ աշխատանք է քննել ինքնանուաստացման ազդեցութիւնը այդ ամբողջ վիճակներուն վրայ եւ գտնել հասարակաց մեծագոյն բաժանողը: Ոչ միայն ներկային մէջ, բայց իմ ամբողջ անցեալիս մէջ: Քանի որ - պէտք է յիշել - մեղքը այլ արարքի պէս ուրիշ մը չէ, այլ ամբողջ վատ դասաւորուած գոյութիւն մը:

Ուրեմն իմ ինքնանուաստացումս մե՞ղք մըն է:

Գաղափար մը: Ինչպէս որ ես չգիտցայ ճանչնալ գեղագիտութիւնը մինչեւ այն ատեն որ ունեցայ բանաստեղծութիւններէս փունջ մը, որուն մէջ ես դիագնոստիկան եմ թարկեցի խնդիրը (եւ տեսայ որ հարկ էր ամէն ինչ վերսկսիլ), հիմա հարկաւոր է որ ես իմ առջեւ դնեմ իմ բարոյական արարքներէս մաս մը եւ խորհրդածեմ անոնց մասին եւ որոշեմ թէ անոնցմէ որոնք կրնամ վերստին առնել եւ որոնք չեմ կրնար, որոնք են մնայուն դրդապատճառները եթէ կան (առանց ոչ մէկ տարակոյսի) եւ մնացեալ բոլորը: Դժուարութիւնը այդ արարքները, զանոնք առանձնացնելով քննութիւն կայացնելու մէջ է, այնպէս ինչպէս կը քննեմ բանաստեղծութիւններէս իւրաքանչիւրը: Եւ վերջապէս այս նորութիւն մը չէ: Նախապէս յաճախ ես այս փոքրիկ աշխատանքը ըրած եմ:

16 Մայիս

Որ հանրութիւնը կարեւոր է գործ մը արտադրելու՝ անխուսափելի է: Մինչդեռ բազմաթիւ գործեր կան որոնք ծնած են տեսանելի շրջանակի մէջ, անձկոտ, անհանդարտ եւ

անկանոն, որ ծնունդ կու տայ մեծ արուեստին:

Բայց այդ հանրութիւնը չէր բացակայեր: Պարզապէս, հեղինակը ինք այդպէս երեւակայած էր, զայն ստեղծած (որ կը նշանակէ սահմանած, ընտրած եւ սիրած): Ընդհանրապէս, հիները, մինչեւ վիպապաշտները, ունեցան այս նիւթական ըմբռնուած շրջանակը: Նորերը կը յատկանշուին այս շրջանակի բացակայութեամբ եւ ամէն բանէ առաջ կը յայտնաբերեն իրենց մեծութիւնը (ինչպէս որ հիները այդ յայտնաբերեցին իրաւ հանրութեան իրենց բնագոյական ըմբռնումով, գիտոսիկներէն անդին) իրենց ընտրանքով եւ այն ստեղծագործութեամբ, զոր գիտեն ընել իրենց ընթերցողներէն:

Այնուամենայնիւ սխալ է հաւատալ իր սեփական հանրութեան աստիճանական ստեղծումը գրողին կողմէ իսկ: Այնպէս որ բախտաւոր պարագային կը ստեղծենք նիւթական հանրութիւնը, հրատարակչին հանրութիւնը: Բայց իրաւ հանրութիւնը ամբողջովին ենթադրուած պէտք է ըլլայ առաջին երկէն իսկ:

կերպատումը (Սպանուածներ-Ծխեց-Նպատակ-Հաճոյացաւ, եւայլն): Հարցը այն է թէ ինչպէս դուրս գալ պարզ նախադասութենէն եւ խօսք գրել:

Այդ պիտի ըլլա՞յ արդի վէպին պէս: Դէպքերու շղթայումը փոխարինե՞լ ներքին համայնապատկերով: Վերադառնա՞լ շարժման մէջ եղող մտածումի արտայայտութեան:

Պարզագոյն եւ ամէնէն ընթացիկ եղանակը մտածումը պատմելու դէմք մը՝ իր անցեալով եւ ապագայով տեղադրել է:

1 Հոկտեմբեր 1944

Կու գայ պահ մը երբ կ'անդրադառնանք որ ինչ որ կ'ընենք իր ժամանակին պիտի դառնայ յիշատակ: Այս հասունացումն է: Հոն հասնելու համար, իրապէս, նախ յիշատակներ պէտք է ունենալ:


1937

17 Նոյեմբեր - 20 Նոյեմբեր

Այն ամէնը, զոր կրնամ գիշիլ «գուտ բանաստեղծութեան» արդիւնքն է ամէն բանաստեղծութեան հոգեզմայլ միացման մտախոհական պահուն մէջ: Աշխատցուած մտածման բացակայութեան պերճախօսութիւնը կը բացակայի: Ամէն բան պիտի եզրակացուի գրգռիչ փայլատակումով եւ իրարու ընդելուզուած զգայնութիւններով: Այդ էր պատ-

(Հատուածներ՝ ֆրանսերէն թարգմանութենէն)

ՄԵԴԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ԱՊՐԵԼՈՒ ԾԱՐԱԻ ՄԸ ԵՒ ՀԱՂՈՐԴԵԼ-ՀԱՂՈՐԴՈՒԵԼՈՒ ՄՆԱՅՈՒՆ ԼԱՐՈՒՄ ՄԸ



Հայերէն գրելու եւ հայերէն գիրք հրատարակելու փորձութեան սփիւռքներու վերջին քամիքազներէն է Սեդա Գրիգորեան: Իրաւ գրականութիւն մշակելու ցանկութիւն, որ չի ծանծաղիր հայերէն գիտցողի - կամ գիտնալ կարծողի - ծուռիկ-մուռիկ արահետներուն վրայ: Գրածէն աւելի ըսելիք ունի: Ինք ալ ստիպուած նաւարկած է գրականութեան եւ հրապարակագրութեան միջեւ, թէեւ շնորհ ունեցողի պարագային, հրապարակագրութիւնը բան մը կը շահի, եւ գրականութիւնը եթերէն կ'իջնէ կեանքի ոլորտ:

Գիրք մը. «Հայուհիի մը օրագրէն»: Կը հասկցուի որ կեանքի հետ բախումի պատմութիւն լսելու կը հրաւիրուինք: Ականատեսի կամ մասնակիցի: Արդէն գրականութիւնը միշտ տեսակ մը օրագրութիւն է, իրականութեան կամ երազի: Գիրք մը ինքզինք կը պատմէ: Գիրքի մը ներկայացումը հետաքրքրութիւն արթնցնելու նպատակ է, բայց կը մնայ կիսկատար, հպատակելով ենթակա-

յական ըլլալու սխալին: Հեղինակը կրնայ ըսել, որ այլ բաներ կարելի է ըսել, ուրիշ ընթերցող այդպէս կրնայ չհասկնալ: Գիրքի մը մասին խօսելու համար նախ պէտք է կարդալ եւ ապա տպաւորութիւն ու գնահատումներ փոխանակել:

9 պատմուածքներ, 20 հրապարակագրական գրութիւններ, որոնք լաւ կամ վատ իրականութիւններու հետ բախում են:

Առաջին հաստատում. մեր օրերուն, հայերէնի որակի անկում կայ: Բայց Սեդա Գրիգորեան հայերէն գիտէ, այդ հայերէնը, ինչպէս այլ առիթով, Շաւարշ Միսաքեան գրած է, «հաց-պանիրի հայերէն» չէ: Հայերէն՝ իր կառուցուածքով եւ բառապաշարի ճոխութեամբ, որ կրկնութիւն չէ: Բառերը չեն գուժարուիր ծաւալ ստեղծելու եւ տպաւորելու համար: Լեզուն բաւարար չէ գրականութիւն ստեղծելու, բայց նաեւ պիտի գիտնանք, որ «անգրագէտ» լեզուով, ինչպէս կ'ըսուի Հայաստան, նախնական եւ թափթփած լեզուով գրականութիւն չ'ըլլար, ճիգը կը մնայ

սրճարանային խօսակցութեան մակարդակին:

Սեդա Գրիգորեանի պատմուածքներու հերոսները, դրական թէ բացասական տիպարներ, կու գան ժողովուրդ երակէն: Ընդհանրապէս մարդ են, հայ կամ օտար, այսինքն անոնց կարելի է հանդիպիլ նաեւ ամէն տեղ, ինչ որ գրական երկը դուրս կը բերէ մասնակի կամ հատուածական ըլլալու մեղկութենէ: Անոնց ընդմէջէն կը նուաճուի մարդը իր չարութեամբ, բարութեամբ, մարդը՝ ընկերութեան մէջ, ուր կ'աճին հակասութիւնները, ծնունդ տալով տառապանքներու: Կը սիրէ մարդիկը, անոնց ցաւը կը դիտէ իր խոշորացոյցով, անոնք ըլլան օրապահիկի մը համար կեանք քաշքշող յառաջացեալ տարիքով անտէր ծերեր, քաղաքացիական պատերազմի մէջ ունակութիւններու եւ անհակազուելի մղումներու անձնատուր երիտասարդներ, սեռային նախադարձակման ենթակայ անփորձ եւ անպաշտպան պարմանուհի, պատմաքաղաքական գալարումներու աքցանին մէջ բռնուած անմեղ: Նաեւ անխուսափելի հայրենասիրական-ազգասիրական գեղումներու առիթ տուողներ, որոնք կը բերեն բարիի վկայութիւնը: Տիպարներ՝ որոնք դըրկից են: Իրաւ են: Յաւելեալ եւ բիրտ իրապաշտութեան եւ ճիգի կարիք չի տեսներ գանոնք ապրեցնելու:

Զարմանալի կերպով, ստեղծուած աշխարհէն բացակայ է ընկերութեան վերնախաւը, կամ ինչ որ այդպէս կը կոչենք սովորաբար: Անոր ներկայութիւնը կը զգացուի իր բացասական ազդեցութիւններով եւ հետեւանքներով, երբ ծերունին կը զրկուի իր հացը չահելու ապահովութենէն, կամ վասն օրէնքի բռնութիւն եւ բրտութիւն կը գործադրուին:

Անխիղճ զինուորականներ: Անոնց մօտ մարդկայինի նուազագոյն պատկերացումը չկայ, բացի պարագայէ մը, երբ ոստիկաններ, փոխադրամիջոց չգտնելու պատճառով, զինք տուն կը հասցնեն: Հաւանօրէն հայրենասիրական գեղում, քանի որ հայ են:

Բայց Սեդա Գրիգորեան կը պատմէ: Ընթերցումը շատ հաճելի կը դառնայ երբ կը մոռնայ, որ գրականութիւն կ'ընէ, եւ ընթերցողը կը տանի իրեն հետ:

Գիրքի երկրորդ մասը, իր բնորոշումով, «հրապարակագրական էջեր» կոչուած է: Անցեալին, մենագրութիւն մը պատրաստած էի Շաւարշ Միսաքեանի մասին, որ լոյս տեսաւ նաեւ «Գրական արձագանգներ» հատորով, ուր կ'ըսէի, որ ան հրապարակագրութիւնը գրականացուց: Թէեւ, ազնիւ հրապարակագրութիւնը, երբ ընթացիկ լրատուութիւնէն կը հեռանայ, աւանդական Պոլսէն ժառանգուած բառով «ղազէթաճի»ութիւն չ'ըլլար, կը մշակուի, կը հարստանայ ոսկեղնիկով, ազգային խորքով եւ վայելուչի միջամտութեամբ, իմաստուն դատաւոր պէտք է ըսելու համար՝ թէ ո՞ր կ'աւարտի հրապարակագրութիւնը եւ ո՞ր կը սկսի գրականութիւնը: Գրական շնորհ կ'ունենայ ոյնիսկ քաղաքական հրապարակագրութիւնը, եթէ գրողը ինք խորք եւ շնորհ ունի: Այս չի նշանակեր որ տպաւորութիւններու հեւքին մէջ գրուած բոլոր էջերը կը կտրեն հրապարակագրութենէ գրականութիւն ձգող ճանապարհը: Այդ ճամբուն վրայ Սեդա Գրիգորեան կը յաջողի, երբ իր յանձնառու մտաւորականի հորիզոններէն կը հեռանայ, կը հեռանայ հռետորական ախտէ:

Ունկնդիր լսածին եւ տեսածին, արեւելա-

հայերէն, թրքերէն կամ անգլերէն «համեմունքով» չարքին, Արցախի զնգուն հայերէն ալ սփիւռքահայ գրողի դաշտը մտած է: Մէկ ըլլալու ճամբուն վրայ քայլ մը:

Այնքա՛ն ըսելիք ունի: Որպէս վկայ՝ դժուար պահերու, որոնք արձագանգած են իր մէջ, երբեմն պայթուցիկ դառնութիւններ կամ քաղցրացած յուզումներ, երբ կը բռնուի իրադարձութիւններու եւ մարդկային յարաբերութիւններու յորձանքին մէջ, ընթացիկ բարիի եւ չարի բնորոշումով: Հրապարակագրական էջերը քիչ մը իր եւ քիչ մը իւրաքանչիւրիս քրոնիկոնն են, ժամանակագրութիւնը: Կ'արդարացնեն գիրքին «օրագիր» ըլլալու բնոյթը:

Պատմութեան գալարումներուն մէջ հասակ առած է վկան, դժուար եղած է դիմակայումը, անոնք խոցած են զինք: Չզարմանալ երբ մեղմացած յիշատակ չեն, չեն յանգած փորձի իմաստութեան: Թատրոն է, մարտահրաւէր եւ ամբաստանագիր, հրապարակագրական այն էջը՝ ուղղուած հեռու հեռաւոր նախարարի մը:

Կարելի են այլ ընդլանումներ: «Ընթերցման պահ» բնորոշման դէմ գացած չըլլալու համար, պատմած չըլլալու համար գիրքը, կանգ պիտի առնեմ, յուսալով որ հայ ընթերցողը, հեռուի եւ մօտի, իր իսկ հարստացման համար, կը բանայ գիրքը, ոչ միայն թերթա-

տելու եւ առաջին ու վերջին էջերը կարդալու, այլ գրուցելու համար հեղինակին հետ: Գնահատելու կամ քննադատելու իրաւունքը՝ ընթերցումէն ետք:

Այս խօսքը հաճոյախօսութիւն եւ գրախօսական չէ: Կոչենք տպաւորութիւններ, փորձ գոր պէտք է ընէ իւրաքանչիւր հայ, եթէ կը հաւատայ, որ լեզու եւ գրականութիւն ազգային հարազատութեամբ տոկալու եւ տեւելու անփոխարինելի կռուաններ են:

Լաւ պիտի ըլլար, որ նման հանդիպումներ տեղի ունենային գիրքերու ընթերցումէն ետք: Ըսէինք թէ ինչ բան լաւ էր, ինչ բան լաւ չէր: Այդ պիտի հարստացնէր գրողը եւ «գրագէտ» պիտի դարձնէր ընթերցող հասարակութիւնը, հասարակութիւնը ընդհանրապէս: Գիրքը դադրէր նուէր տրուելէ եւ ... շարունակեցէ՛ք տրամաբանութիւնը:

Արգիլուած չէ երագել:

Միթէ՞ չատ կը պահանջուի:

14 Դեկտեմբեր 2011

Պէյրութ

ԿԱՐՕ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

«ՀԱՅՈՒՏԻ ՄԸ ՕՐԱԳԻՆ» ՀԱՏՈՐԻ ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Շնորհակալական խօսք մը ունիմ լոյսերու քաղաքին եւ մեր՝ խաւարի մէջ տուայտող քաղաքին միջեւ «եօ-եօ խաղցող» Յակոբ Պալեանին: Շնորհիւ իրեն է, որ «Բագին»ի աւանդութեան վերածուած ընթերցումի երեկոները գրական սովորական սալոնէ մը անդին անցած, տեսակ մը վերակենդանացումն են Ֆրանսական litterature vivanteի շունչին, ուր առիթը կ'ուսնենանք ծանօթանալու ժամանակակից գրողներու եւ անոնց գրականութեան:

Հակառակ գրական հատընտիր մը պատրաստելու փորձառութեանս, յստակ չեմ գիտեր թէ որքան անհրաժեշտ է տեղեկանալը կամ ծանօթանալը գրողի մը կենսագրական տուեալներուն: Տուեալներ, որոնք կ'երկարին ծննդեան թուականէն մինչեւ ... օրինակի համար ենթակային կօշիկի թիւը: Ըստ ինծի, կարեւորը գրողին ուսումնառութեան եւ կազմաւորումի տուեալներն են, մանաւանդ անոր գրական կենսագրութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ իր մատենագիտական տուեալները: Սեդային մատենագիտութիւնը՝

1998 - խմբագրում Երուանդ Տէմիրճեանի «Պարտուած ախոյեանի մը պատմութիւնը»

2006 - «Եզերք» (բանաստեղծութիւններ)

2010 - խմբագրում ԼԵՄԻ Յուշամատենին

2011 - «Հայուհիի մը օրագրէն» (արձակ եւ հրապարակագրական էջեր)

Կ'արժէ նշել թէ Սեդային կենսագրութիւնը եւ իր կեանքի բոլոր հանգրուանները, գաղափարական եւ զգացական ամբողջական անկեղծութեամբ եւ նաեւ գրական չքեղ մերկութեամբ մը մաս կը կազմեն իր գրականութեան:

Նախքան աշխարհի շուրջբոլորը դառնալը, Սեդան մաս կը կազմէր այս գաղութին: Ծանօթ էր իբրեւ ուսուցչուհի հայկական վարժարաններու եւ իբրեւ խմբագիր «Ազդակ» օրաթերթի գրական էջերուն: Այս ժամանակահատուածին գրեց աչքառու գրախօսականներ, ուր ան տուաւ ոչ թէ տուեալ հատորի մը բովանդակութիւնը, այլ իր իսկ կարծիքը, թէ կ'արժէր կարդալ կամ նոյնիսկ ձեռք առնել գրախօսող այդ հատորը: Սեդան խիզախ բաց անկեղծ էր իր արտայայտութիւններուն եւ գրութիւններուն մէջ, եւ է՝ մինչեւ այսօր:

Թափառելէ ետք Մատանիներու Իշխանին կղզիները, Հրեշտակներու քաղաքը եւ ապա Թագաւորին Բլուրին քաղաքն ալ, «Տիկին Արտաքին Գործոց»ին հետ ունեցած տարակարծութիւնը զինք վերադարձուց իր ծննդավայրը, ուրախութիւն պատճառելով մեզի՝ գրասէրներուս, եւ տիրեցնելով զինք ու իր ընտանիքը: Եւ այս ի շահ «Բագին»ին եւ ի շահ լիբանանահայ ապագամ (չգործածելու համար «նեխած» բառը) գրականութեան, թարմ շունչ մը բերելով անոր:

Սեդան ըսելիք ունեցող, մանաւանդ ջիղ ու կեցուածք ունեցող վաւերական գրող մըն է:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ


Հայաստանի անկախութենէն ետք, գրականութեան «անցումային» շրջանին ու գրական պատմագրութեան ու քննադատութեան ճգնաժամին ընթացքին, սկսաւ ուրոյն արժէքով յատկանշուիլ երիտասարդ անուն մը՝ Գրիգոր Յակոբեանը (1958-2005): Շուրջ երկու տասնամեակի վրայ ձգուած անոր գիտական ճանապարհը արգասաւորուեցաւ բազմաթիւ գիտական մենագրութիւններով, յօդուածներով եւ հրապարակումներով իրագործումներով: Ան միեւնոյն ժամանակ յետխորհրդային շրջանի արեւմտահայ ու սփիւռքահայ գրականութեան լաւագոյն գիտականներէն ու մեկնաբաններէն մէկը հանդիսացաւ: «Գիտակ» բառը պէտք է հասկնալ ո՛չ միայն տեղեկութիւններու սոսկական պաշարով, այլեւ մեկնաբանական ինքնուրոյն ու ընթացիկ չափանիշերէ դուրս ելլող լուծումներու կիրարկումով:

Եօթը տարի առաջ, Գր. Յակոբեան անակընկալ կերպով հրաժեշտ տուաւ կեանքին: Փետրուար 13, 2005 թուակիր դիմակով ան գրած էր մեզի:

«Ձարհուրելի զբաղեալ եմ - դասեր, [Գրականագիտական] հանդէս, սփիւռքեան գրականութեան անթուղգիա Բրիւսովի անուան համալսարանի համար, նոր մենագրութիւն, գրադարան, թանգարան, ասպիրանտներ, ինստիտուտի աշխատանքներ, լիքը կարդալու բան — մի խօսքով պարզ է»:

Հազիւ մէկ ու կէս ամիս ետք կը հասնէր բօթը: Անխոնջ աշխատանքի ոգիով օժտուած բանասիրական գիտութիւններու տոքթորին դաւաճանած էր այդ նոյն անխնայ անձնուրութիւնը: Ծանր կորուստ մըն էր, թէ՛ բոլոր անոնց համար, որոնք անոր ընկերական ջերմ ու անպաճոյճ մտերմութիւնը վայելած էին եւ թէ՛ հայ գրականութեան պատմագրութեան ու քննադատութեան համար ընդհանրապէս:

Վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւնը ձեռնարկած է «Ս. Էջմիածնի երախտաւորները վերնագրուած մատենաշարին հրատարակութեան, որուն առաջին ծաւալուն հատորը, արդարացի կերպով, համախմբած է վաղամեռիկ գիտնականին աշխատութիւններուն մէկ կարեւոր մասը՝ Գուրգէն Գասպարեանի խմբագրութեամբ (Գրիգոր Յակոբեան, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ս. Էջմիածին, 2007, 556 էջ): Անոր գիտական գործունէութեան ամբողջական ուրուագիծը հրամցընելով հանդերձ, այս գիրքը միեւնոյն ատեն ընթերցողին տուած է ցրիւ ու դժուարամատչելի ար-



տաղերութեան մը տուեալները: Ասիկա կարեւոր է, յատկապէս եթէ նկատի ունենանք, որ գրականագէտին վաստակը լոյսին եկած էր մեծաւ մասամբ 1991էն ետք, ինչ որ կ'ենթադրէ դժուարութիւն՝ անոր միաւորներուն ընդհանուր պատկերացումն ու մէկտեղումը կատարելու համար: Մանրակրկիտ մատենագիտութիւնը (7 էջ) կը հաշուէ հայաստանեան ու սփիւռքեան 31 թերթեր ու պարբերականներ, որոնց հեղինակը աշխատակցած է առաւել կամ նուազ շարունակականութեամբ:

Նիւթերը քաղուած են տարբեր պարբերականներէ ու գիրքերէ եւ դասաւորուած՝ չորս բաժիններու մէջ. «Հայ դասական վիպագրութիւն» (թէեւ այս բաժինն մէջ մտած են Լեւոն Խեչոյեանին ու հայրենի 1990-2000 թուականներու արձակին նուիրուած գրութիւններ, որոնք վերնագրին հետ առնչութիւն չունին), «Հայ դասական նորավէպի պատմութիւն եւ տեսութիւն», «Զանազան ուսումնասիրութիւններ եւ գրախօսութիւններ», «Սփիւռքահայ գրականութիւն»:


Գրիգոր Յակոբեանի ուսումնասիրական գործերակերպը հիմնուած էր փաստագրական մեծաքանակ նիւթի հաւաքումի ու

տեսաբանական վերլուծումի համատեղումի սկզբունքին վրայ: Այսպիսով, ան շահեկանօրէն կը տարբերէր հայրենի գրականագիտութեան ընթացիկ մօտեցումէն, որ աւելի հիմնուած է՝ մինչեւ օրս, երկի մը «բարոյական»

ու «ազգային» յատկանիշերու վերաշարադրանքին ու վերհանումին վրայ: Ինչպէս բացատրուած է խմբագրի յառաջաբանին մէջ, «գրականութեան պատմութիւնը, ըստ Յակոբեանի, ոչ թէ գրողների եւ նրանց երկերի իրարայաջորդ թուարկումներով է ձեւաւորուում, այլ տուեալ շրջափուլում մշակութաբանական ընդհանուր միտումների եւ դրանց գրականացման ձեւերի բացայայտմամբ: Սա է պատճառը, որ Գր. Յակոբեանի գրեթէ բոլոր ուսումնասիրութիւններում գերիշխող է տեսական դատումների շերտը: Գիտնականն իր ուսումնասիրման առարկան է դարձնում գրական արտադրանքի ժանրային-կառուցուածքային ձեւերը՝ դրանց ծագումնաբանութիւնը, զարգացումն ու անկումը դարձնելով գրականութեան պատմութեան հէնքը»:

Այսպէս է, որ հեղինակին համար կարեւոր ու անկարելի գրողներ չկան. գիրքին մէջ բազմաթիւ ուսումնասիրութիւններ կան Գրիգոր Զօհրապի, Յակոբ Օշականի ու Երուանդ Օտեանի մասին, բայց նաեւ Գրիգոր Արծրունիի, Մատթէոս Մամուրեանի ու արեւմտահայ գրականութենէն բոլորովին անյայտ մէկուն՝ Գրիգոր Սարափեանի վիպագրութեան մասին:

«Կարեւոր»ի ու «անկարեւոր»ի հարցը անհրաժեշտ է ընդգծել: Մեր արդի ու ժամանակակից գրականութեան պատմաբանները առհասարակ իրենք զիրենք նուիրած են «հատընտիրային» ուսումնասիրութեան, իրենց ուղղորդութեան կիզակէտին պահելով այս կամ



այն «նշանաւոր» հեղինակը, ու քանի մը տողով կողմնակի յիշելով «աննշան» անուններն ու երեւոյթները: Սակայն, աներկբայելի է, որ եթէ գրականութիւնը չլիթայ մըն է, կարեւորութիւն կը ներկայացնեն ո՛չ միայն չլիթային օղակները, այլ նաեւ ... օղակները կապող բաժինները: Հեղինակը քաջ ծանօթ էր այս երեւոյթին, որուն շնորհիւ երկրորդական հարթակի վրայ մնացած երեւոյթներ (Օտեանի թերթօնները) կամ անուններ (Միսաք Գօշունեանը) կը վերադառնան գրականութեան չլիթային իրենց ուրոյն արժէքի գնահատումով:

Դիւրին ընթերցողոյ հատոր մը չէ. Յակոբեանի տեսական թուիչքները կը պարտադրէին յատուկ լեզուի մը մշակումը, որ երբեմն կը հասնէր խրթնաբանութեան, թէեւ վերջին տարիներուն ան հետզհետէ աւելի բիւրեղացած ոճ մը որդեգրած էր: Բայց դժուար ընթեռնելիութիւնը լայնօրէն կը փոխհատուցուի, քանի որ հեղինակը չէ փորձած արդէն ծանօթ ճամբաներէ քալել, իսկ իւրաքանչիւր գլուխ նորութիւն մը կը մատուցանէ ընթերցողին: Նոյնիսկ հրապարակումներու

ներածականները կը բնորոշուին իրենց թարմութեամբ ու տուեալ հեղինակին գործին մասին վերլուծական նոր նրբերանգ մը աւելցնելու ձգտումով:

Սփիւռքահայ գրականութեան պարագային, յատկանշական է, որ Յակոբեանի ակնարկները մեծաւ մասամբ նուիրուած են այնպիսի հեղինակներու, որոնք խորհրդային ժամանակներուն արգելուած կամ անտեսուած էին Երեւանի մէջ (Նիկողոս Սարաֆեան, Նշան Պէշիկթաշեան, Կարապետ Փօլատեան, Յարութ Կոստանդեան, Յակոբ Կարապետ, Վահէ Օշական, Գրիգոր Պըլտեան), ինչ որ արդէն ցոյց կու տան անոր հետաքրքրութեան անսովոր ծիրը:

Եթէ վերջին տասնամեակին արեւմտահայ կամ սփիւռքահայ գրականութեան մասին տասը լուրջ գիրք լոյս տեսած է Հայաստանի մէջ, կը կարծենք, որ այս հատորը անպայման պէտք է դասուի այդ տասնեակին մէջ: Մաղթենք, որ ան հետք ձգէ եւ ապագայ ուսումնասիրութիւններու հիմք դառնայ: Գրիգոր Յակոբեանի յիշատակին մատուցուած լաւագոյն տուրքը պիտի ըլլայ:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆը ծնած է Երեւան, 1958ին: Թիւ 131 դպրոցը աւարտելէ ետք, իր բարձրագոյն ուսումը ստացած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղին մէջ: 1983ին սկսած է աշխատիլ Գիտութիւններու Ակադեմիայի Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկը: 1988ին պաշտպանած է բանասիրական գիտութիւններու թեկնածուի ատենախօսութիւնը, իսկ 1996ին՝ 38 տարեկանին, արժանացած է դոկտորի աստիճանին, հանդիսանալով հայրենի գրականագիտութեան ամենէն երիտասարդ դոկտորներէն մէկը: Իր երկու տասնամեակ տեւած գիտական գործունեութեան ընթացքին, ան մասնագիտացած էր արեւմտահայ եւ սփիւռքահայ գրականութեան մէջ, ընդ որում Հայաստանի լաւագոյն գիտականներէն մէկը կը նկատուէր: Գիտահետազոտական գործունեութեան առընթեր, կեանքի վերջին տարիներուն ան կը դասաւանդէր Բրիւսովի անուան լեզուաբանական համալսարանին, Ս. Էջմիածնի «Գեորգեան» ճեմարանին, Սեւանի «Վազգէնեան» դպրանոցին մէջ եւ այլուր: Յանկարծամահ եղած է Երեւանի մէջ, 3 Ապրիլ, 2005ին: Հեղինակած է երկու մենագրութիւններ՝ «Արեւմտահայ նորավէպը (1880-1910ական թուականներ. ժանրի պատմութիւն եւ տեսութիւն)» (1996) եւ «Թերթօն վէպի տեսութիւնը. Երուանդ Օտեան» (2002): Հրատարակած է շարք մը գրական երկեր՝ Հրանտ եւ Չապել Ասատուրի սիրային նամակագրութիւնը, Յակոբ Օշականի «Հաճի Ապտուլլահ» վէպը, Երուանդ Օտեանի «Անիծեալ տարիներ» յուշագրութիւնը եւ այլն:



ՎԱՅԱՆ ԶԱՆՈՅԵԱՆԻ ԲԱԳԻՆԻ ՈՒՂՂՈՒԹՆ ԵՎ ՄԱՍԿ-ՅՕՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԻԹՈՎ (Տեսնել նաև «Ասպարեզ» եւ Ազդակ» օրաթերթերը)

«Լեզուի եւ Ուղղագրության Մասին...» խորագրուած յօդուած-նամակ մը ստացած էր խմբագրութիւնս, Վահան Զանոյեանէն, Փետրուար 12 թուակիր: Ներագգային առողջ վիճարկումի եւ խօսքի ազատութեան նախանձախնդրութեամբ, այդ գրութիւնը կը պատրաստէինք հրատարակութեան, երբ գայն կարդացինք թերթերու մէջ:

ԲԱԳԻՆԻ սկզբունքն է արտասպում չընել: Նաեւ երեւոյթը կը գտնենք զարմանալի: Եթէ այդ նամակ-յօդուածը պատասխան էր Սեդա Գրիգորեանի Բագինի 2011ի առաջին համարով լոյս տեսած գրախօսականին՝ «Ոչ Բարի Վերադարձ ... Մխալագրութեան եւ Մասամբ Նորին» խորագրով, ընդունուած կարգ էր որ Վահան Զանոյեան սպասէր, տեսնելու համար որ ԲԱԳԻՆ տեղ պիտի տա՞ր թէ ոչ իր գրութեան:

Եւ քանի որ այդ գրութիւնը լոյս տեսած է քանի մը թերթերու մէջ, հարկ չենք տեսներ նորօրինակ արտատրպում ընելու: Բայց որպէսզի ոչ որ խորհի, որ խօսքի ազատութեան եւ վիճարկումի մեր սկզբունքային կեցուածքէն կը շեղինք, օգտակար կը համարենք այդ հարցով լուսաբանել Վահան Զանոյեանը եւ ընդհանրապէս գրասէր հասարակութիւնը:

«Մխալագրութիւն» բառը Սեդա Գրիգորեանի կողմէ չէ հնարուած, այլ փրոֆ. Լեւոն Խաչերեան գայն բազմիցս գործածած է, անոր հունով, բազմաթիւ գրողներ եւ մտաւորականներ այդ ըրած են, նաեւ: Լեզուի հետ առնչուող խնդիրները ենթակայական ազդակներու չեն հպատակիր, անոնք էապէս ազգային եւ քաղաքական են, այս պարագային առնուազն ազգի հայրենահանուած կէսի ինքնութեան պաշտպանութեամբ կը բնորոշուին:

Երբ ուղղագրութեան-սխալագրութեան հարցը միասնաբար քննելու ազնիւ համախոհութեան մասին կը խօսի, պէտք է միաժամանակ յիշեցնել թէ «արդի» կոչուած ուղղագրութեան որդեգրումը ՔԱՂԱՔԱԿԱՆ որոշում էր, եւ միամիտ պէտք չէ ըլլալ խորհելու որ համախոհութեամբ որոշում կը գտնուի:

Հայ անհատը, որքան ալ յարգելի, անկեղծ եւ բանիմաց ըլլալ, ինքզինքնին պէտք չէ թոյլատրէ հիմնահարցերը լուծել եւ լուծուած տեսնել ենթակայական ապրումներու մակարդակին: Եթէ այդ կարգի փորձութիւններու դաշտը ընդարձակենք, «կոմիսար» Պօղոս Մակինցեանի եւ մեր ժամանակակիցներէն շատերու երազի իրականացման ընթացք կու տանք, իւրացնելով լատինատառ հայերէնը, որ արդէն աղէտի վերածուած է համացանցի վրայ (որուն համար գրքոյկ հրատարակելու պատեհապաշտութիւն ալ եղաւ): Պիտի ըսե՞նք, մեր կարգին, քանի որ մեծ թիւ կը կազմեն հիմա լատինատառ հայերէն գրողները, այդ ալ ընդունինք... Յակոբ Մարթայեանը (թուրքերու կողմէ, Մուսթաֆա Քեմալի, հռչակուած Տիւաշար, լեզու բացող), գերեզմանէն հանենք, որպէսզի թուրքերու համար կատարած ռեֆորմին պէս բան մըն ալ մեզի համար պատրաստէ, եւ համացանցային լատինատառ հայերէնը դառնայ մեր նոր այբուբենը...

Մխալագրութիւնը սխալագրութիւն է, եւ ազգի արմատներու հաւատարմութեան եւ ցանկալի միութեան համար անոր սրբագրութիւնը վեր-ընկերային, վեր-տնտեսական, վեր-«նոմանքլատուրա»յին խնդիր է, եւ հեռանդկարային վերաբերումը չի կրնար բաւարարուիլ կատարուած իրողութեան ընդունման պարտաւորականութեամբ: Պարկեշտութեան դէմ է էական խնդիրներուն լուծում տալ, անհատական որոշումով: Բարձր գիտակցութեան աստեղային պահու մը, անհատական եւ ենթակայական մակարդակը գերանցելով, Շաւարշ Նարդունիի յանդգնութեամբ, պէտք է կրկնել, որ «կատուին կատու պէտք է ըսել»:

Առանց խմբագրութեան կողմէ կատարուած միջամտութեան Վահան Զանոյեանի գրութեան մէջ, գայն պիտի հրատարակէինք, յուսալով որ լայն ըմբռնում ունեցող հայ մտաւորականութիւնը, առանց խուսանաւումներու կ'արտայատուէր ներկայացուած հարցերուն մասին, ըստ ձեռի եւ ըստ խորքի, այսինքն ազգի մշակութային եւ ինքնութեան հարազատութեան եւ հեռանկարի գոյգ տեսանկիւններէ:

Հետաքրքրուողները կրնան Վահան Զանոյեանի գրութիւնը գտնել Ամերիկայի «Ասպարեզ» եւ Պէյրութի «Ազդակ» օրաթերթերուն մէջ, թերեւս այդ գրութիւնը դրկուած է այլ տեղեր ալ: ԲԱԳԻՆԻ էջերը, որակաւոր եւ հեռանկարային վիճարկումի առջեւ բաց են: Բայց կ'ուզենք անգամ մըն ալ կրկնել, որ ԲԱԳԻՆ արտասպում չ'ընէր, եւ իրեն ուղղուած նամակ մը երբ հանրային սեփականութիւն դարձած է արդէն, հարկ չի տեսներ տպելու:

Ազգային-քաղաքական-մշակութային խնդիրները շատ լուրջ են, մանաւանդ մեր ժողովուրդին համար, ի մասնաւորի Արեւմտահայութեան եւ Արեւմտահայերէնի (որ ի դէպ, ինչպէս բազմիցս ըսուեցաւ՝ վտանգուած է), ենթակայական պայմաններու մէջ լուծուած տեսնել: Անհատականի եւ հոգեվիճակի տրամաբանութիւնը ձիշդ չէ ազգային եւ հեռանկարային համարել:



«Ինքնադիմանկար»

ՀԵՌԱԿԱՅ ԶՐՈՅՑ՝ ԷՂԻԿ ԲԵՐԴԵԱՆԻ ՀԵՏ

ՑԱԽԻ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԱԾ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԸ

Ես նկարում եմ իսկական մարդկանց, ազ-
նի աշխատանքով իրենց հացը վաստակած
մարդկանց համար:

Է. Բ.

Քանի մը պատկերներ եւ Մովսէս Ծիրանիի յօդուածը մարդուն մասին մղեցին ԲԱԳԻՆը՝ ձանձնալու Էտիկ Բերդեանը: Մեր ժողովուրդի անցած ուղիի արտայայտութիւնն է այս արուեստագէտը, որ գոյներու եւ գիծե-
րու աշխարհին մէջ ապաստանած, կը փնտռէ եւ կը հարցապնդէ՝ անհատական եւ ազգային ձակատագիր մը:
Ի՞նչ բան: Շոայլօրէն ընծայուած դառնութիւններու ալֆան եւ օմեկան:

Իր մասին կան տիրական կարծիքներ: Արուեստի ներքոյն քննադատ Ժոզէֆ Թարրապ, կը նշէ թէ ան հայ-
րենահանուածի ժառանգ էր, «բնագդական հակում մը ունէր լքեալներուն անբախտութիւնը, քանդուած քա-
ղաքներու ու հետզհետէ փշրուող գիւղերու եւ աւերուած տուններու տխրութիւնը նկարելու: Արդի կեանքի ոչ
մէկ հետք...»: Երբ ցաւը հզօր է, տիեզերքը կը փոքրանայ եւ կ'ամփոփուի տառապանքի գաղտնարաններուն
մէջ, ստեղծելով պայմանները ժամանակէն անդին երթալու, ուր կան անանուններ, նոյնանման դէմքեր,
որոնց համար օր եւ եղանակ կրկնութիւն են:

Մովսէս Ծիրանիի յօդուածը՝ խորագրուած «Իրատութեամբ Անիծուած Արուեստագէտը» եւ Ժոզէֆ Թարրա-
պի ջերմութեամբ գրուած «Վերջին Թաւջութակահարը» խորագրով էջերը, ծանօթացումէ աւելին են, տեսակ
մը գրականութիւն, քանի որ ինք, տիպարը, վիպային հերոս մըն է:

Արուեստագէտը իր ստեղծածով է որ կամուրջ է իր ներաշխարհին եւ արուեստասէրին ըմբռնումներուն եւ
զգացումներուն միջեւ: Հոգեշահ է իմանալ արուեստագէտին չխոստովանուող յուզումները, որոնք ստեղծա-
գործութեան գրգիռ են: Հեռակայ գրոյցով «պեղեցիներ» Էտիկ Բերդեանը: Իրեն պէս շատեր ապրեցան հայ-
րենահանման հոգեկան ցնցումի ցաւով, traumatisme-ով, նոյնիսկ անոնք որոնք ուղղակի զոհ չէին, բայց այդ
ժառանգած էին, հայր, մայր, թերեւս՝ ծիներ, մեծ գիտնականը Եունկ պիտի ըսէր՝ archetypes:

Մարդու, պատմութեան եւ արուեստի ըմբռնման վրայ պատուհաններ կը բանայ մեր գրոյցը: Հայր, եւ ար-
ուեստասէրը, երբեմն պէտք է նային անոնցմէ ներս, ոչ միայն արուեստագէտը ձանձնալու, այլ նաեւ՝ իրենք
զիրենք:

Մեր գրոյցը՝ հեռախօսով: Էդիկ Բերդեան դժուար կ'արտայայտուի, չ'ուզեր խօսիլ իր եւ իր ընտանիքին
անցեալին մասին: Ընդառաջեց: Խօսեցանք իր ստեղծագործական կեանքին մասին: Երբեմն իր խօսքերը կը
զարմացնեն, եւ հարկ կ'ըլլայ ձշղել: Տառապանք, դառնութիւն, անիրաւուած ու լքուած ըլլալու դաժան իրո-
դութիւն կը ստիպեն զինք՝ իր կեանքի վերաբերող որոշ շրջաններ կամ եղելութիւններ թաքցնելու:

Ռուսերէն մասնագիտական բառերու մեծ մասը վերածած ենք հայերէնի:

ԲԱԳԻՆ. Սիրելի Էդիկ, հեռակայ այս գրոյցը մարդկային ջերմութիւն չունի, ի հարկէ, բայց կը խնդրեմ որ ամփոփ կերպով խօսիս քու մասիդ: Ո՞վ է Էդիկ Բերդեանը:

ԷԴԻԿ ԲԵՐԴԵԱՆ. Ես չեմ սիրում իմ մասին խօսել, չեմ էլ կարող: Սիրում եմ մեկուսացած ապրել, հեռու դրսի աշխարհի ժխորից: Ես ապաստանում եմ իմ պատեանի տակ, իմ արուեստի աշխարհի մէջ ու նկարում եմ: Ես տուրք չեմ տուել ոչ քաղաքական ճնշումներին, ոչ էլ արուեստի շուկայի պահանջներին: Իմ աշխարհը ունեւ, դա իմ հայրենիքն է, հայրենի բնաշխարհն իր տարատեսակ կենդանիներով, իմ անցեալը, յիշողութիւններ, որոնք ստեղծագործութիւններիս գլխաւոր դրամագլուխն են: Ես չեմ դաւաճանում էութեանս, այլ նկարում եմ այնպէս, ինչպէս ինքս ինձ եմ թելադրում, ապրում եմ իմ ստեղծագործութիւններիս հետ, որոնք իմ զաւակներն են:

Բ. Սակայն, փաստօրէն, կը վաճառէք ձեր գործերը...

Է. Բ. Այո՛, դրանք «խոպան» են մեկնում, հեռանում են ինձանից: Ես ստիպուած եմ վաճառելու, եթէ չվաճառեմ ինչո՞վ ապրեմ: Ժամանակին կարողանում էի աշխատել շինարարութիւնների վրայ, այսօր առողջութիւնս հնարաւորութիւն չի տալիս: Յետոյ ուզում եմ ստեղծագործել անցեալի բացը լեցնելու համար: Երբ վաճառում եմ մի կտաւ, յատկապէս այն որ սիրում եմ, անմիջապէս նկարում նոյն թեմայով մի ուրիշը: Եւ այս պատճառով ալ ծնւում են շարքեր ու տարբերակներ...

Բ. Դեռ չըսիք թէ դուք ո՞վ էք:

Է. Բ. Պապերս խարբերդցի եմ: Ես չեմ որոշել նկարիչ դառնալ, ծնուել եմ այդպէս: Մինչեւ հիմա իմ ներքին եսը, իմ էութիւնը, իմ հոգին թելադրում են ինձ նկարել եւ չեմ կարող թողնել ստեղծագործելը այնպէս ինչպէս «ալքոհոլիքը», չեմ կարող ոչ բաղդատել այլ բանի հետ, ոչ էլ կարող եմ բացատրել:

Բ. Դուք աւարտած էք Փանոս Թերլեմեզեանի անուան ուսումնարանը: Բնական է, որ իբրեւ աւարտաձառ նկարած ըլլաք մեծ գեղանկար մը, որուն ոճն ու թեման պէտք է որ յարիր ըլլային «սոցիալիստական ռեալիզմ»ին: Կրնա՞յ ըլլալ, որ



«Յեղափոխականներ»

տուրք տուած չըլլաք իշխանութիւններու պահանջին:

Է. Բ. Բացատրեմ: Իբրեւ վկայականի աշխատանք ես նկարել էի մի դրուագ Սարգարապատի ճակատամարտից եւ անունը դրել՝ «Սարգարապատ»: «Կոմպոզիցիա»յի երկու կողմերում նկարել էի զինուորներ, մէկը՝ որ երիտասարդ տարիքին պապուս է յիշեցնում, զնում է դէպի պատերազմի դաշտ, կռուելու, իսկ միւսը յոգնած վերադառնում է կռուից: Նրանց արանքում՝ երկու ազատամարտիկներ տանում են մի վիրաւորի: Դասատուներս հայրենասէր եւ տաղանդաւոր նկարիչներ էին: Զուլում Գրիգորեան, Ռուստուֆ Կարգալոյեան եւ վաղամեռիկ Վանիկ Համբարձումեան: Աշխատանքս շատ հաւանեցին, սակայն առաջարկեցին որ անունը փոխեմ: Սկզբում ընդդիմացայ եւ յետոյ հասկացայ, որ չէր անցնելու եւ ես զրկւում էի վկայականից: Առաջարկում էին կոմունիստական ճակատամարտի անուն: Վաղամեռիկ Վանիկ Համբարձումեանը միջին ճանապարհ գտաւ եւ առաջարկեց որ անունը դնենք «Յեղափոխականներ»: Ով ի՞նչ ուզում էր թող հասկանար: Համաձայնուեցի, եւ անցաւ:

Բ. Հիմա ո՞ր է այդ նկարը:

Է. Բ. Այն ատեն ինձանից վերցրեցին իբրեւ նուէր, երկար տարիներ կախուած մնաց ուսումնաւորանի միջանցքում, սակայն, թէ հետագային ո՛ւր տարուեց եւ ի՛նչ ճակատագրի ենթարկուեց չեմ իմանում: Լուսանկարը ունեմ, սեւ-ճերմակի: Կը պատկերահանեմ եւ կը դրկեմ:

Բ. Ձեր ուսուցիչին՝ Վանիկ Համբարձումեանի անունը երկու անգամ յիշատակեցիք, երկու անգամին ալ «վաղամեռիկ» կոչեցիք զինք:

Է. Բ. Այո՛, ափսոս եղաւ նրան, տաղանդաւոր եւ հայրենասէր արուեստագէտ էր, նա ինձ շատ էր պաշտպանում, բոլորս սիրում էինք նրան: Մի օր լուր բերին, որ որսորդական հրացանով ինքն իրան է խփել, (իբր թէ) արկածով: Կասկածելի մահ էր:

Բ. Մուշեղ Գալշոյեանի մասին ալ այդպէս ըսին, սակայն ձշմարտութիւնը մինչեւ այսօր չէ բացայայտւած:

Է. Բ. Ճիրզը հք ասում: Ես այն ատեն ասել եմ, թէ նրանց մահերը նման են իրար, եւ սպանութեան ձեւը այդքան էլ տրամաբանական չի: Համբարձումեանի ատեն մենք կասկածներ ունեցանք, սակայն հարցը շուտով փակեցին: Եթէ Գալշոյեանին այսօր յիշում են նաեւ իբրեւ հերոսի, ապա Համբարձումեանին ոչ ոք չի յիշում: Նա էլ մեծ հայրենասէր էր եւ տաղանդաւոր դասատու եւ արուեստագէտ:

Բ. Ձեր կենսագրության մէջ մութ ու պակասատր տեղեր կան: Դուք ծնած էք Երեւանի Կոնսթադամասը եւ ապրած թշուառության մէջ. ինչո՞ւ եւ ինչպէ՞ս եղած է ատիկա:

Է. Բ. Է՛, դուք ինձ ստիպում էք քրքրել իմ անցեալն ու թարմացնել վէրքերս: Ես ծնունել եմ ոչ թէ Կոնստոլմ, այլ Նրան կից աւելի թշուառ՝ «Թուրքի մահալա» կոչուած Հին թաղամասում եւ շատ աւելի վատ պայմանների մէջ: Հոն ոճրագործների, մաքսանենգների, գողերի եւ հիւանդութիւնների բոյն էր, ուր ապրում էին ազերի թուրքեր, միայն երկու հայ տուն կար: Մենք եւ մէկ էլ ոսկերիչ Յովհաննէսի ընտանիքը: Թաղը լքուած ու անտեսուած էր պետութեան կողմից, նոյնիսկ միլիցան մուտք չունէր էդտեղ: Տները հողաչէն էին, միայն մեր տունը թիթեղածածկ տանիք ունէր եւ երկու յարկանի էր: Նա գտնուում էր հիմիկուայ «Հրազդան» մարգագաշ-

տի տեղը, ձորում: Օձերով, կարիճներով ու այլ թու-
նաւոր կենդանիներով ու միջատներով լեցուն թա-
ղամաս, որտեղ անցկացրել եմ մանկութիւնս: Կային
նաեւ ընտանի կենդանիներ, կովեր, հէեր, շուներ,
կատուներ, նոյնիսկ երբեմն պահում էին ձիեր: Այս
թաղամասը քաղաքային կեանքի հետ կապ չուներ:
Ես սիրում էի կենդանիներին, յատկապէս հէերին ու
շներին, որոնց պատկերում էմ յատուկ վերաբեր-
մունքով, դրանք եղել են իմ ընկերները: Ես չէի
բող խաղալ թուրք երերխաների հետ... (լուծթիւն,
յայտնօրէն կը յուզուի, ապա...) Ի՞նչ ասեմ, ման-
կութիւնս անցել է դաժան, չա՛տ դաժան: Խնդրում
եմ, նմանօրինակ հարցեր մի՛ տուէք ինձ...

Բ. Լաւ, անցնինք պատանեկութեանդ եւ ուսման տարիներուդ...

Է. Բ. Երբ մի քիչ մեծացայ, տեղափոխուեցինք Կոնստ, որտեղ մեր կեանքը շատ տարբեր չի եղել «Թուրքական մահալա»ից: Այստեղ բնակչուլթեան մեծամասնուլթիւնը հայ էր, սակայն նրանք էլ մեզ նայուլմ էին իբրեւ ժողովրդի թշնամիներ: Այդ շրջանին ես ընդունուեցի Փանոս Թերլեմեզեանի անուան ուսումնարանը, որը ինձ համար թէ՛ խաղավայր էր, թէ՛ դպրոց եւ թէ՛ «կեանքի վայելք»՝ այն ատենուայ հասկացողուլթեամբ: Իմ մանկական եւ պատանեկան թշուառ կեանքը նստուածք է թողել իմ մէջ: Ուսումնարանում երբ նկարում էի կիսաւեր թաղամասեր, կիսափուլ եկեղեցիներ, քանդուած տներ, անտեսուած ու լքուած, սակայն ազնիւ ու աշխատասէր մարդկանց թշուառ կեանքն ու միջավայրը, ինչ որ դուր չէր գալիս իմ ուսուցիչներին: Նրանք գնահատում էին իմ տաղանդը, սակայն վախի ազդեցուլթեան տակ պահանջում էին ուրախ բաներ նկարել: Չէի կարող: Ինչպէս դաւաճանէի պապերիս, որոնք եկել էին Խարբերդից ... հայրենիք, հող, արժանապատուլթիւն, ամէն ինչ կորցրած հայեր...

Բ. Առիթով մը ըսիք, թէ դուք ձեր պապը չէք տեսած, սակայն շատ կը սիրէք զինք. երեւակայութեամբ կը պատկերէիք ձեր պապը:

Է. Բ. Ճի՛շդ, նրան չեմ տեսել, սակայն կայ լուսանկարը, որից բազմաթիւ անգամներ պատկերել եմ նրան: Սարգարապատ մեկնող Ֆիտային պապս է, իսկ հիմա երբ կարօտում եմ նրան, կրաֆիքաներ



«Մերկուրի»

(գծանկարներ) եմ անուն: Պապա՝ այդ ես եմ: Երբ նկարում եմ, նա կողքս է, ներշնչում է ինձ:

Բ. Ինչո՞ւ այսքան տպաւորած է քեզ, ո՞վ էր ան:

Է. Բ. Է՛, էլի քրքրում էք վերքերս: Երկրում ... Խարբերդում ... (պահ մը լռութիւն) պապուս աչքի առաջ ... Թուրքերը կտրել են իր եղբօրը գլուխը ... ու գետին չպրտել:

Բ. Խնդրեմ պատմէ ինչպէ՞ս պատահած է դէպքը...

Է. Բ. Ես չեմ սիրում որ ինձ ստիպում են, «Քակէ-պէչիք»ները չեն կարողացել ստիպել... Դու բարի մտքով ես անում, քանի սկսել ենք, փորձեմ պատմել: Երբ Թուրքերը եկել են մեր գիւղը կոտորելու, պապս իր եղբօր եւ մի քանի այլ ընկերների հետ, գիւղից փող են հաւաքել, որ տան Թուրքերին՝ նրանց գութը շարժելու համար: Թուրքերը փողը արել են եւ աւելին են պահանջել... Պապուս աղբօրը, որ տարիքով փոքր էր, գլուխը կտրել են եւ

չպրտել պապուս ոտքերի տակ: Պապա՝ գլուխը կորցրած, յարձակում է Թուրքին վրայ, նրա սուրը խլում ու սպանում թէ՛ նրան եւ թէ՛ մի քանի այլ Թուրքերի... Ինք կարողանում է փախչել ու միանալ Ֆիտայիներին, իր ընկերները բոլորն էլ սպանում են... Թուրքերը կոտորում են նաեւ ողջ գիւղը, փոքր աղջիկներին իրանց հետ են տանում...

Բ. Ձեր գերդաստանէն միայն մեծ հա՞յրդ ազատած է:

Է. Բ. Ես ունեցել եմ նաեւ հօրաքոյր, որ եղել է Ֆրանսիայում եւ այնտեղ էլ մահացել է: Նա եղել է մի փոքրիկ սիրուն աղջիկ: Թուրքերը նրան իրենց հետ են տարել: Նա մեծանալուց յետոյ փախել է... երկար պատմութիւն է...

Բ. Իսկ մեծ մայրդ ո՞վ էր:

Է. Բ. Ինչպէս ասացի, պապս եղել է Ֆիտայի, կռուել Թուրքերի դէմ: Նրանք, մի ամբողջ խումբ որբեր ազատել են Թուրքերից ու բերել Գիւմրի: Մամս եղել է այդ որբերից մէկը:

Բ. Պիտի խնդրեմ, որ քանի մը խօսք ալ ըսես ծնողքիդ՝ հօրդ ու մօրդ մասին:

Է. Բ. Խնդրում եմ ուրիշ առիթի թողնել, չեմ կարող... արդէն յոգնեցի... այսօր այսքանը հերիք է: Եթէ արուեստի մասին հարցեր ունես, խնդրեմ...

Բ. Ուրեմն անցնիք յաջորդին: Հայրենահան-ւածի ժառանգը իր հոգիին մէջ տեղ մը կը պահէ՞ այդ ցնցումը: Էդիկ Բերդեանի ստեղծագործա-կան երազանքին մէջ տեղ մը կա՞յ վերապահուած յափշտակուած Խարբերդի մասին:

Է. Բ. Միթէ կարո՞ղ եմ մոռանալ Խարբերդը: Հայկական գիւղեր որ նկարում եմ, դրանից մի մասը Խարբերդն է: Իմ երեւակայած Խարբերդը:

Բ. Հայու ձակատագիր՝ որմէ դուռն ալ բաժինդ ունեցար, Գիւմրիի ահեղ երկրաշարժի հետեւան-քով: Ի՞նչ կը պատմէ այսօր քեզի Խարբերդը, ի՞նչ կը պատմէ Գիւմրին:

Է. Բ. Թէ՛ Խարբերդը, թէ՛ Գիւմրին մաս են կազմում յիշողութիւններս եւ նստուածք են տուել մէջս այնպէս, ինչպէս մանկութիւնս:

Բ. Կեանքը գեղեցիկ է, կ'ըսէ հայ գրող մը: Գոր-



«Արուեստագէտը եւ բնորդուհին»

ծերդ կը փնտռեն գեղեցիկը, բայց քու բերած գեղեցկութիւնդ տարբեր է, տխրութիւնը գեղեցիկ կ'ըլլայ:

Է. Բ. Գեղեցիկը կապ չունի տխրութեան կամ ուրախութեան հետ: Ես նկարում եմ բնութիւնը, մարդիկ՝ որոնք լքուած են, անտեսուած, սակայն աղարտուած չեն, ազա՛ չեն, ապրում են նուազագոյն պայմաններում, նրանք ներդաշնակուել են բնութեան եւ մնացել են մարդ, իսկական մարդ: Սրանից գեղեցիկ բան կա՞յ աշխարհում:

Բ. Սովորութիւն է գեղանկարիչները ենթարկել դասակարգումներու: Քեզ կրնա՞նք դասել տպաւորապաշտներու խումբին մէջ: Դու՞ն ո՞ր կը դա-

սես ինքզինքդ: Պատահա՞ծ է որ նման հարց ուղեւս դուն քեզի:

Է. Բ. Ես սերտել եմ արուեստի պատմութիւնը ոչ թէ ինքզինքս ինչ որ խմբի մէջ տեղադրելու համար, այլ իմանալու համար, թէ ինչպէ՞ս է զարգացել արուեստը, նոյնիսկ ես չեմ մտածում կամ որոշում ի՞նչ պէտք է նկարեմ եւ ի՞նչ չպէտք է նկարեմ: Ես նկարում եմ այն ինչ սիրտս է ուզում: Այն ի՞նչ որ հնուց ի վեր նստուածք է տուել մէջս, այդ եմ նկարում: Ես նոր մարդ չեմ, չեմ էլ ընդունում ժամանակակից կեանքն ու նոր մարդկանց ապրելակերպը, դա թէ կեղծ է եւ թէ անմարդկային: Ես գլխադիր, իսկական ՄԱՐԴն եմ փնտռում: Ո՛ր է, կա՞յ: Եւ կարծես



«Կոնտ թաղամասը»

Թէ կա՛յ: Թէ՛ սովետական շրջանին եւ Թէ հիմա, դրանք լքուած ու անտեսուած մարդիկ են եւ անմեղ ու հաւատարիմ, ես աւելի եմ սիրում նրանց քան ժամանակակից ազահ ու անխիղճ մարդկանց, կենդանիները նոյնիսկ աւելի են մարդկային քան ժամանակակից մարդը: Տեսէ՛ք, Թէ ոնց են աւերում իրենց իսկ ստեղծած քաղաքակրթութիւնը, տեսէ՛ք, Թէ ոնց են կոտորում անմեղ մարդկանց: Աւելի ճիշդը՝ կոտորել են տալիս իրարու, որոնք ոչ իրար ճանաչում են եւ ոչ էլ իրարու հետ ոխ ու քէն ունեն: Իսկ էդ վերջինները, բարձունքներու վրայ նստած մեծահարուստները, իրար ճանաչում են, իրար հետ խնդիրներ ունեն, եւ այդ խնդիրները լուծելու եւ կամ իրենց շահերը ապահովելու համար սպաննել են տալիս անմեղ մարդկանց՝ անմեղների ձեռքով: Ես նրանց համար չեմ նկարում, դա սալոնային արւեստ է, Թէկուզ անօթի էլ մնամ: Ես նկարում եմ իսկական մարդկանց, ազնիւ աշխատանքով իրենց հացը վաստակած մարդկանց համար:

Բ. Գործերուդ մէջ կայ աշխարհ մը, որուն հաւանօրէն չես հանդիպիր շուրջդ: «Հանդիսատես» արուեստասէրն ալ չի գիտեր այդ, բայց կը տեսնէ կտաւներուդ ետին: Ի՞նչ աշխարհ է ատիկա: Փախո՞ւստ իրականութենէն, զոր կը մերժես, որ հաւանօրէն քեզ մերժած է, թէ պատկերներ եւ կացութիւններ, որոնցմէ չես ուզեր հեռանալ:

Է. Բ. Որոչ չափով արդէն պատասխանել եմ այս հարցին: Միայն աւելացնեմ, որ այո՛, ո՛չ միայն փախչում եմ, այլ զգուշ եմ մերժում եմ շռայլու-

թիւն, ազահութիւն եւ կողոպուտի վրայ յենուած ժամանակակից կեանքը: Ես սիրում եմ բնութիւնը եւ այն խոնարհ մարդը, որ ապրում է բնութեան մէջ՝ բնութեան նման: Այս կեանքը կարող է լինել եւ ուրախ, եւ յուզիչ, եւ բանաստեղծական, ինչպէս երաժշտութիւնը, ինչպէս սոխակի երգը եւ կախեալ է իմ հոգեվիճակից: Ես չեմ նկարում փող վաստակելու համար, Թէեւ շատ ել պէտք ունեցել եմ փողի... Իմ հոգու կանչը աւելի կարեւոր է, քան փողը եւ նոյնիսկ աւելի, քան փառքը: Երբեք չեմ ձգտել ճանաչման: Նոր է որ մարդիկ հետաքրքրուում են ինձմով...

Բ. Կոնտի տեսարանները ծանօթ են մեզի, Սփիւքի գաղթականականներու պատկերով: Ինչո՞ւ այդ պատկերները. յիշատակի՞, թէ՞ բողոքի համար:

Է. Բ. Ի դէպ Կոնտի անունը տուել եմ բազմաթիւ նկարների, որոնք փաստօրէն «Թուրք մահալա»յի խեղճուկ փողոցներն են պատկերում: Չէի ուզում «Թուրք» անունը յիշել: Եւ Նկարում եմ ցոյց տալու համար, որ այստեղ ապրել են իսկական մարդիկ, սակայն անիրաւուած ու լքուած: Ես կարօտում եմ այդ կեանքին, մարդկանց, շներին ու էջերին, նեխած փողոցներին ու հիւանդկախ մուրացկաններին:

Բ. Բնանկարներդ, ինչպէս հովիւը իր գառներուն հետ, ձկնառատագրապաշտ խաղաղութիւն մը կը բերեն: Բայց կը վկայե՞ն նաեւ այն մասին որ խեղճերը քաղաքակրթութեան յարաբերաբար լքուածներն են, ձամբու եզրին մոռցուածներ:

Է. Բ. Այս հարցին պատասխանել եմ: Աւելացնեմ, որ քաղաքակրթութիւնը, մանաւանդ այսօրուան քաղաքակրթութիւնը մեզ հեռացնում է մարդկայնութիւնից, բնութիւնից: Սուտ բաներ են արդարութիւնը, մարդկային իրաւունքները, ազատութիւնը: «Բոմբ»ը (տնանկը) աւելի ազատ է, քան երկրի նախագահը կամ մեծահարուստը: «Բոմբ»ը աւելի մարդ է, քան բոլորը, ովքեր նրան խղճում են եւ ողորմութիւն են տալիս:

Բ. Ինչո՞ւ այդպէս կառչած կը մնաս անցեալի մը պատկերներուն, որոնք պիտի չդիմանան, արդիականութիւնը պիտի գայ եւ ավէ՞ զանոնք: Այդ վախճանէն առաջ իսկ տեսակ մը կարօ՞տ են այդ նկարները:

Է. Բ. Ես երբեք չեմ մտածել, մտահոգ էլ չեմ թէ իմ ստեղծագործությունները պիտի դիմանա՞ն ժամանակի մաշումին, թէ՞ ոչ: Հաւատում եմ, որ «արդիականությունը» աւելի ենթակայ է աւլուկերու եւ մոռացուելու, քան իմ արուեստը: «Արդիականությունը» եւ կամ ժամանակակից շարժումները ես մերժում եմ, չեմ հերքում նրանց, ոչ թէ նրա համար, որ այդ տեսությունները սխալ են եւ կամ անարուեստ, այլ նրա համար, որ ես էությունմբ եւ խառնուրդաժողով նրանց նման չեմ, «հներին» չեմ հետեւում, այլ՝ ներքին թելադրանքներս: Արուեստը հին եւ նոր չունի: Այսօր ով ինչ է ուզում՝ անում է, ես էլ իմ ուզածս եմ անում, ես որեւէ մէկին չեմ խանգարում, նրանք էլ ինձ թող չխանգարեն:

Բ. Ըսել կ'ուզեք, թէ բնաւ չէ՞ք ընդունիր նորարարները:

Է. Բ. Ես այդպէս չասացի, շատերին եմ ընդունում եւ գնահատում, մի խօսքով՝ նրանց ովքեր իւրայատուկ են եւ չեն ընդօրինակում ուրիշներին: Այսօր, թէ՛ աշխարհում, թէ՛ մերոնց մօտ շատերը նկարում են ուրիշների նման: Ես նկարում եմ ի՞նձ նման:

Բ. Աշխարհի մեծերէն գո՞վ կամ որո՞նք կ'ընդունիք եւ կը գնահատեք:

Է. Բ. Սալվատոր Ծալլին եւ Մարքս Էրնէսթին եւ էլի ուրիշներ էլ կան...

Բ. Իսկ հայրենի գեղանկարիչներէ՞ն...

Է. Բ. Շատերին... Օրինակ՝ Ռուբէն Աբովեանին եւ Վահրամ Դաւթեանին: Նրանք ունեն իրենց աշխարհը, ստեղծել են սեփական կերպարներ ու համապատասխան միջավայր, իսկ միւսները ընդօրինակում են դրանց: Օրինակի կարիք չկայ, ես չեմ ուզում ոչ ոքի վիրաւորել:

Բ. Զարմանալի է որ գործերուդ մէջ պոռոտ եւ զիրար հակասող գոյներ չկան: Ինչո՞ւ: Մերժո՞ւմ նորի:

Է. Բ. Նախ ասեմ, որ վերջին գործերիս մէջ թէեւ պոռոտ գոյներ չկան, սակայն զիրար հակասող գոյներ կան, ունեմ նաեւ կիսավերացական գործեր: Դրանք կախեալ են պահից եւ հոգեվիճակից: Չեմ մերժում նորը, այլ՝ վատորակը, կեղծը, մտածուած




«Մարդը եւ բնութիւնը»

ու կաղապարուած արուեստը, ինչպէս սովորուած էր: Այսօր տարբեր ձեւերով նոյն սկզբունքներին հետեւում են: Եթէ սովորուած բռնատէրերն էին թելադրում, այսօր շուկան է թելադրում ճաշակը, որը խիստ կասկածելի է եւ վիճելի: Ո՞վ է ասում, որ ես ժամանակակից եւ կամ նորարար չեմ: Ես ինքզինքս համարում եմ խիստ ժամանակակից արուեստագէտ: Այսօր չկա՞յ լքուած, թշուառ ու անտեսուած ժողովուրդ: Երկրագունդի բնակչության մեծամասնությունը այդպիսին է: Զարգացած եւ քաղաքակիրթ երկրներում եւ շուրջը թեմբեմբեմ գերյագեցած քաղաքներում լիքն են «բոմբ»երն ու օրուայ հացի կարօտները: Չեն ուզում նկատել նրանց, արհամարհում են նրանց՝ նորաձեւություններին հետեւող արուեստագէտները, ու չեն պատկերում նրանց կեանքը: Կան ինձ նման շատեր, որոնք տարբեր ոճերով պատկերում են խեղճերի կեանքը ու անուղղակիօրէն պաշտպանում նրանց իրաւունքները: Ես իմ կեանքն եմ պատկերում եւ պաշտպանում եմ իմ եւ առհասարակ մարդկային արժանապատուութիւնն ու ինքնասիրութիւնը, եւ ցոյց տալ, թէ իսկական մարդը էս եմ, իմ նմանները, որոնց տեղ չի տրուում ու չեն գնահատում նրանց արժանիքները:


Բ. Կը ներէք եթէ ձեր զգայուն հարցերուն մօտեցանք: Շնորհակալ ենք այս հետաքրքրական զրոյցին համար:

Է. Բ. Ի՛նչ էք ասում, էս եմ շնորհակալ: Սա իմ առաջին հարցազրոյցն է: Սրանից առաջ ինձանով չեն հետաքրքրուել:



**ՀԱՅ ԳԻՐՔԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ
1888-2011
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՅԱԿ
Կազմեց՝ ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ
Գահիրե - 2012**



**THE ARMENIANS IN THE OTTOMAN EMPIRE
An Anthology and a Photo History
By JOSEPH E. MELIKIAN, Ph.D.
Contributors CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
And KHATCHIG BABIKIAN LITERARY FUND
Antelias - 2011**



**ԱՄԵՐԻԿԱ, ԱՄԵՐԻԿԱ...
«ԵՐԱՋ ԵՒ ԽՈՐՏԱԿՄԱՆ ԼՔՈՒՄՆԵՐ»
(ՎԷՊ)
Հեղինակ՝ ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ
Փարիզ - 2011**



**ՀԱՅՐԵՆԻՔՍ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐՍ ԵՍ
Հեղինակ՝ ԺԻՐԱՅՐ ՂԱՐԻՊԵԱՆ
Կազմեց՝ ԵԻԳԻՆԷ ՂԱՐԻՊԵԱՆ**

**Հրատ.՝ ՆԱՀԱՊԵՏԻ
Երևան - 2011**



**ԿՈՄԻՏԱՍ
Հոգեբանական վերլուծում մը
Հեղինակ՝ ՄԵԼԻՆԷ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
«Ռիչըրտ եւ Թինա Գարօլան» Հիմնադրամ - թիւ 11
Անթիլիաս - 2011**

**ՕՍԿԻ ՕՐԱՆԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՅԼ ԷՋԵՐ...
Հեղինակ՝ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
Խմբագիր՝ ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ
Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարան
Պէյրութ - 2011**



**ՈՐՎ Է ՎԱԽՅՈՂԸ ՎԻՐՃԻՆԻԱ ՎՈՒԼՖԷՆ
Հեղինակ՝ ԷՏՈՒԼԲՏ ԱԼՊԻ
Հայացուց՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆ
Խմբագիր՝ ՍԵԴԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հրատարակութիւն՝
Համազգայինի Կեդրոնական Վարչութեան
Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարան
Պէյրութ - 2011**